

# ՆԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

## ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

հոդվածների ժողովածու



ԵՐԵՎԱՆ 2014



002.2:947.928

317432

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

A205545

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ  
ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ  
(հոդվածների ժողովածու)

ՄԵՍՐՈՊ ԱՐԶ ԱՇԿԻԱՆ  
ՄԱՏԵՆԱԸԱՐ  
106



ARCH. MESROB ASHJIAN  
BOOK SERIES  
106

*Mesrob Ashjian*



ԵՐԵՎԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
2014

ՀՏԴ 002.2:941(479.25)

ԳՄԴ 76.11+63.3(2Հ)

Հ 245

## **Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ Ա. Ա. Խառատյան, Ա. Ա. Մելքոնյան, պատմ. գիտ. դոկտորներ Է. Լ. Դանիելյան, Է. Ա. Կոստանդյան, բան. գիտ. դոկտորներ Ա. Կ. Եղիազարյան, Լ. Ս. Խաչատրյան, պատմ. գիտ. թեկնածուներ Կ. Հ. Խաչատրյան, Հ. Կ. Սուքիասյան:

Հ 245 Հայկական տպագրությունը դարերի միջով (հոդվածների ժողովածու)/ - Եր.:

Պատմության ինստիտուտ, 2014. – 153 էջ:

Ժողովածուում ընդգրկված են 2012 թ. դեկտեմբերի 25-ին՝ Երևանում և 2013 թ. հունվարի 13-14-ին՝ Աղվերանում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կազմակերպած «Հայ տպագրությունը դարերի միջով» գիտաժողովում ընթերցված գեկուցումները:

ՀՏԴ 002.2:941(479.25)

ԳՄԴ 76.11+63.3(2Հ)

ISBN 978-99941-73-96-9

©ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2014

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ  
77 ՉԱՄ քղթակից անդամ,  
77 ՉԱՄ պատմության ինստիտուտ

**500-ԱՄՅԱ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ  
ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՄ  
(պատմական ակնարկ)\***

Համաշխարհային քաղաքակրթության մեջ հայ ժողովուրդն ունի իր ծանրակշիռ տեղն ու դերը: Հազարամյակների ընթացքում ստեղծած իր մշակույթով հայ մարդը մշտապես հարստացրել է երկիր մուլտրակի քաղաքակրթական արժեքները, մեծապես նպաստել մարդկային հասարակության առաջընթացին:

Երկրագնդի վրա ապրող ոչ բոլոր ժողովուրդներին է վիճակված լինելու այդ գործընթացների առաջամարտիկ, եղանակ ստեղծելու մարդկության մշակութային անդաստանում: Պատահական չէ, որ հայ մարդն իր մտքի ստեղծագործական ուժով դարեր շարունակ ոչ միայն պատվավոր, այլև եզակի տեղ է զբաղեցնել համաշխարհային պատմամշակութային ժառանգության մեջ, մասնավորապես այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են խաչքարային արվեստը, ձեռագիր մատյանների ստեղծումն ու դրանց նկարազարդումը, երաժշտական ինքնատիպ նոտաների՝ խազերի գյուտը, եկեղեցաշինությունը, կրթությունն ու գիտությունը:

Վաղմջական ժամանակներից Հայկական լեռնաշխարհի մարդիկ առանձնակի վերաբերմունք են ունեցել դեպի գիրն ու գրականությունը: Հայաստանի տարբեր շրջաններում պահպանված հինքարեդարյան ժայռապատկերները, առաջին գրային համակարգերի նմուշները դրա վառ վկայությունն են: Արդեն 301 թ.՝

---

\* Հոդվածը հրատարակված տպագիր գրականության հիմնան վրա ակնարկային կարգով ներկայացնում է հայկական տպագրության անցած 500-ամյա ուղու կայացման՝ XVI–XVIII դարերի դժվարին ժամանակաշրջանը:

աշխարհում առաջինը պետականորեն ընդունելով քրիստոնեությունը, հայ ժողովուրդը միաժամանակ դարձավ նոր աշխարհընկալման, գաղափարական արժեհամակարգի կրող առաջնեկն ու դրա զարգացումն ապահովող յուրահատուկ ուժը: Միջնադարի խոշորագույն մտածող Մեսրոպ Մաշտոցի կողմից 405 թ. հայոց գրային նոր համակարգի ստեղծումից հետո հայ վաղմիջնադարյան գրականությունն ապրեց իր ոսկեդարը՝ դրանով իսկ ապահովելով նաև գրական շեշտակի վերելք համաաշխարհային մասշտաբով:

Ամբողջ միջնադարի ընթացքում հայ մտածողների՝ պատմիչների, փիլիսոփաների, բնագետների, աստվածաբանների, բանաստեղծների, մատյանների գրիչների ու ծաղկողների կողմից ստեղծվեցին բազմահազար արժեքավոր ու եզակի մատյաններ: Աշխարհաքաղաքական ծանրագույն պայմաններում մշակութային հարուստ ժառանգությունը դարձավ հայ ժողովրդի գոյատևման գլխավոր աղբյուրը:

Հատկանշական է, որ հայ ժողովուրդը միջնադար թևակոխեց քրիստոնեության ընդունումով ու մեսրոպյան գրերի գյուտով և ուշմիջնադարյան դարաշրջանը եզրափակեց ևս մեկ կարևոր իրադարձությամբ՝ դարձավ աշխարհում սեփական տպագրություն ստեղծած առաջին ժողովուրդներից մեկը: 1512 թ. Վենետիկում հիմնադրվեց առաջին հայկական տպարանը: Նրա հիմնադիրը՝ Հակոբը, «հանդգնեց» ամբողջ մի դարաշրջան աստվածահաճո գործից՝ մատյաններ ստեղծելու ավանդական արվեստից անցում կատարելու դեպի տպագրությունը՝ ընթանալով այդ ժամանակ միայն երկու ժողովուրդների՝ գերմանացիներին և հրեաներին վիճակված ճանապարհով: Այս գյուտի հայ հեղինակը, ընդունելով աստծո հանդեպ իր «մեղքը» և ինքնատիպ ձևով «ապաշխարելով» սերունդներին իր անունը թողեց «Հակոբ Մեղապարտ» տարբերակով: Վենետիկի առաջին տպարանում 1512–1513 թթ. լույս տեսան հայերեն առաջին տպագիր գրքերը՝

«Ուրբաթագիրքը», «Պատարագատետրը», «Աղթարքը», «Պարգատունարը» և «Տաղարանը»:

Ի տարբերություն մեսրոպատառ ձեռագիր գրքի, որի աշխարհագրությունն սկսվեց Եղեսիայում, մայր Հայրենիքում հայ գրքի տպագրությունը, XVI դարի սկզբին Հայաստանում ստեղծված քաղաքական ծանր իրավիճակի պատճառով, կյանքի կոչվեց հայրենի եզերքից շատ հեռու՝ Իտալիայում: Բանն այն է, որ XVI դարի կեսերին Գերմանիայում հայտնաբերված գուտենբերգյան գյուտն արդեն 1465 թ. տարածում էր գտել Վենետիկում, ուր և վիճակվեց նաև տպագրելու հայերեն առաջին գրքերը: Ուշագրավ է, որ հայ տպագրության գյուտը ժամանակի ընթացքում ընդլայնեց իր աշխարհագրությունը և տարածում գտավ երկրագնդի տարբեր անկյուններում:

Հակոբ Մեղապարտի գործը շարունակեց ժամանակի հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչներից մեկը՝ Աբգար դպիր Թոխաթեցին: Նրան հաջողվեց 1565 թ. նույն Վենետիկում տպագրել մի տոմարացույց «Խեռնայ փնթուր տունարի. գեղեցիկ և պիտանի» վերտառությամբ, հաջորդ տարում՝ «Սաղմոսարանը»: Այս նա, անհրաժեշտ տպագրական պարագաներն իր հետ վերցնելով, անցավ Կոստանդնուպոլիս և այնտեղ 1567 թ. լույս ընծայեց «Փոքր քերականութիւն» վերնագիրը կրող գիրքը: Այսպես Կ. Պոլիսը դարձավ հայ տպագրության երկրորդ քաղաքը: Հատկանշական է, որ հետագայում ինչպես Վենետիկը, այնպես էլ Կ. Պոլիսը մնացին որպես հայ տպագրության ամենախոշոր կենտրոններ:

Աբգար դպիր Թոխաթեցու որդին՝ Սուլթանշահը, որ հոր հետ մեկնել էր Եվրոպա հայ ազատագրական շարժման եվրոպական աջակիցներ գտնելու համար, հաստատվում է Հռոմում: Այդ ժամանակ արդեն կաթոլիկ եկեղեցու կենտրոնը հռչակված էր որպես համաշխարհային տպագրական գործի մայրաքաղաքներից մեկը: Սուլթանշահին հաջողվում է Հռոմում ուսումնասիրել լատինական տպագրական գործը, Վատիկանում մեծ կապեր հաստա-

տել կաթուղիկ հոգևորականության հետ և Արևմտյան Հայաստանի Բաղեշ քաղաքից այնտեղ տեղափոխված մեկ այլ հայ գործչի՝ Հովհաննես քահանա Տերզնցու հետ, ձեռնամուխ լինել հայկական տպագրության գործին:

1584 թ. Հռոմի Գրիգորիս XIII պապն աջակցում է հայ գործիչներին՝ Վատիկանի տպարանում իր կազմած «Տոմար Գրիգորեանն յաւիտենական»-ի հայերեն թարգմանության լույսընծայման հարցում: Այդ հանգամանքը մեծապես նպաստում է հայության շրջանում գրիգորյան տոմարի տարածմանը: Այս հրատարակության նորությունն այն էր, որ առաջին անգամ հայկական ձեռագրակերպ տառերին փոխարինելու եկան իսկական տպագրական տառերը: Մինչև XVI դարավերջ Սուլթանշահն ու Տերզնցին Հռոմում տպագրեցին նոր Սաղմոսարաններ, ինչպես և Հին կտակարանի այլ հատվածներ: XVI դարում մետրոպատառ թղթատրպագիր և փայտափորագիր տպագրություններ իրականացրին նաև մի շարք եվրոպացի տպագրիչներ: Այս հրատարակություններով ավարտվեց հայ տպագրության պատմության առաջին՝ վաղ շրջափուլը:

XVII դարում հայ տպագրության երկրորդ շրջանն իր հերթին ունեցավ երկու ենթափուլ: Առաջինը վերաբերում էր մինչև ամստերդամյան տպագրության՝ 1660-ական թվականների, մյուսը՝ դրանից հետո ընկած ժամանակաշրջանին: Առաջին ենթափուլի սկիզբը նշանավորվում է հայկական ամենաազդեցիկ գաղթօջախներից մեկում՝ Լվովում, դարձյալ բաղիչեցի Հովհաննես քահանա Քարմատանենցի կողմից տպարանի հիմնադրումով և 1616 թ. «Սաղմոսարան», 1618 թ.՝ ղփչաղերեն «Աղոթագրքի» տպագրումով:

Շուտով Իտալիայում մեծ քանակությամբ հայերեն նոր գրքեր տպագրելու գործում առանձնակի ջանադրություն է հանդես բերում Մայր աթոռ Ս. Էջմիածինը: Օժանդակության խնդրանքով Հռոմի պապին են դիմում ինչպես Հայոց կաթողիկոս Մովսես Գ-ն, այնպես էլ բազմաթիվ հայ հոգևորականներ: Նրանք առա-

ջարկում են Նոր Ջուղայի հայ խոջաների նյութական աջակցությամբ իրականացնել Աստվածաշնչի հայերեն ամբողջական իրատարակություն, որն այդ ժամանակի համար բավական դժվարին խնդիր էր: Այդ խնդրանքին միանում է նաև Ջնյուռնիայում Վենետիկի հանրապետության թարգման Մոլինոն՝ Յովհաննես Անկյուրացին, որը հայ գրքասեր հասարակությանը ծանոթ էր դարձել 1642 թ. իր միջոցներով Վենետիկում տպագրած հերթական «Սաղմոսարանով»:

Սակայն հայերի բոլոր ջանքերն ապարդյուն են անցնում: Նոր Ջուղայի բնակիչները որոշում են ամեն գնով յուրացնել տպագրական արվեստը: Նրանք Եվրոպա են գործուղում տեղի նշանավոր Ամենափրկիչ վանքի միաբան Յովհաննես Ջուղայեցուն: Միաժամանակ Նոր Ջուղայում ձեռնամուխ են լինում տպարան ստեղծելու աշխատանքներին: Առանց համապատասխան վարպետներ ու Եվրոպայից բերված տպարանի սարքավորումներ ունենալու, խաչատուր Կեսարացու գործադրած անդուլ ջանքերի շնորհիվ նորջուղայեցիներին հաջողվում է իրագործել անհավանական թվացող այդ ծրագիրը. 1638 թ. Նոր Ջուղայում հիմնադրվում է տպարան: Դա, փաստորեն, հայկական տպագրության յուրահատուկ կրկնագյուտն էր և Իրանում հիմնադրված առաջին տպարանը:

Բայց նորջուղայեցիները, անբավարար համարելով Եվրոպական տպարանների համեմատությամբ տեղում իրենց ստեղծած պարզունակ տպարանի համեստ կարողությունները, շարունակում են Եվրոպայում ավելի բարձրորակ ու մեծ տպաքանակներ ապահովող տպարանային արվեստին տիրապետելու գաղտնիքների փնտրտուքը: Յովհաննես Ջուղայեցին, ի կատարումն խաչատուր Կեսարացու և իր մյուս համաքաղաքացիների հանձնարարության, Եվրոպայում ուսումնասիրում է տպագրական գործը և 1644 թ. Լիվոռնյում տպագրում «իր» Սաղմոսարանը: Մի քանի տարի անց նա վերադառնում է հայրենի քաղաք, իր կուտակած փորձը փոխանցում նորջուղայեցիներին, տպագրում Ազարիայի

«Պարզատունմարը», իսկ 1650 թ. սկսում Աստվածաշնչի տպագրությունը:

Սակայն շուտով պարզ է դառնում, որ Նոր Ջուղայի պարզունակ սարքերով ստվարածավալ Սուրբ գրքի բոլոր մամուլները տպագրելն անհնարին է, ուստի աշխատանքները դադարեցվում են: Հայ գրքի տպագրության նախանձախնդիրները կրկին իրենց հայացքն ուղղում են դեպի Եվրոպա: Այս անգամ ևս Հռոմի պապից ակնկալվող աջակցությունը չստանալուց հետո, Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի կողմից 1656 թ. Եվրոպա ուղարկված դպիր Մատթեոս Ծարեցին մեկնում է Հոլանդիա, հաստատվում Ամստերդամում և մեծ զոհողությունների գնով ստեղծում տպարան: Այս տպարանում էլ լույս է տեսնում Ներսես Շնորհալու «Յիսուս որդի» ստեղծագործությունը: Ցավոք, շուտով Մատթեոս Ծարեցու այս հայրենանվեր գործունեությունը դադարում է. նա 1661 թ. մահանում է: Բայց նրա սկսած գործն անհետևանք չի մնում. Ամստերդամում Ծարեցու հիմնադրած տպարանով սկսվում է XVII դարի հայ տպագրության երկրորդ ու ավելի արդյունաշատ ենթափուլը:

Ծարեցու տպարանի աշխատանքները շարունակում է նորջուղայեցի վաճառական Ավետիս Ղլիճենցը: Այդ հավակնոտ ծրագրերի համար իր կարողություններն անբավարար համարելով՝ նա Հայաստանից հրավիրում է եղբորը՝ Արագածոտն գավառի Ուշի գյուղի Ս. Սարգիս եկեղեցու վանահայր, հույժ գրագետ մի անձնավորության՝ Ոսկան Երևանցուն: Ուշագրավ է, որ մինչև Ոսկան Երևանցու Ամստերդամ հասնելը, տպարանի ղեկավարությունը ստանձնած նրա աշակերտ Կարապետ Ադրիանացին կարողանում է տպագրել մի քանի հոգևոր գիրք և ձեռնամուխ լինում «Շարակնոցի» հրատարակությանը: Վերջինիս տպագրությունը նա ավարտում է 1664 թ.՝ Ամստերդամ հասած իր ուսուցչի հետ միասին:

Շուտով Ամստերդամում Ոսկան Երևանցու ծավալած բեղուն գործունեությամբ հայկական տպագրությունը նոր մակարդակի է

բարձրանում: Ստեղծվում են ավելի կատարյալ տառատեսակներ: Ոսկան Երևանցին ավարտում է Աստվածաշնչի բնագրի խմբագրական աշխատանքները և ավելի քան եռամյա համառ ջանքերի շնորհիվ 1668 թ. վերջին իրականացնում Սուրբ գրքի տպագրությունը: Շուրջ 1500 էջից ու 160 պատկերից բաղկացած այդ բարձրարժեք հրատարակությունը մեծ համբավ է բերում հայ տպագրությանը և ջերմ արձագանքի արժանանում համայն հայության կողմից: Հաջորդ տարում՝ 1669 թ., Ոսկան Երևանցին տպագրում է ևս տասնմեկ գիրք, որոնց թվում նաև աշխարհիկ բովանդակության երկեր՝ «Աշխարհացոյցը», պատմիչ Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեան» աշխատությունը, Վարդան Այգեկցու առակները («Աղուէսագիրք») և այլն:

Ամստերդամում ունենալով նյութական դժվարություններ՝ Ոսկան Երևանցին չի վիստվում և գործունեությունը շարունակում է Լիվոռնոյում ու Մարսելում՝ իր տպագրած գրքերի թիվը հասցնելով շուրջ 30-ի: Դրանց զգալի մասն արդեն ուներ մինչև հազար տպաքանակ: 1673 թ. Երևանցին սկսում է Գրիգոր Նարեկացու «Մատենանոց գրքեզութեան» պոեմի անդրամիկ հրատարակության աշխատանքները: Սակայն կաթոլիկ գրաքննության պայմաններում նրան չի հաջողվում ավարտին հասցնել այդ կարևոր նախածեռնությունը:

Ոսկան Երևանցու շնորհակալ գործը շարունակեցին նրա աշակերտները՝ Մատթեոս ու Թովմաս Վանանդեցիները, վերջինիս եղբորորդիներ՝ գիտնականներ Միքայել ու Դուկաս Նուրիջանյանները: Կրկին Ամստերդամում Վանանդեցիների վերահիմնած տպարանում 1695 թ. լույս տեսան առաջին հայերեն մեծադիր տպագիր քարտեզը և Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ը: Այս անգամ Ամստերդամի հայկական տպագրությունն ունեցավ ավելի քան երեք տասնամյակի կյանք և 1717 թ. դադարեց գործելուց: Ցավոք, այդ ժամանակվանից Արևմտյան Եվրոպայում հայ տպագրությունը դադարեց մինչև XVIII դարի վերջին քառորդը, երբ այն վերսկսեցին Մխիթարյանները: Այդ ընթացքում

աշխուժացավ ընդհանուր հայ մշակութային կյանքը, թերևս, միայն Կ.Պոլսում, որը դարձել էր ամենաստվար հայկական գաղթօջախներից մեկը:

Հայ տպագրության զարգացման երրորդ փուլն ընդգրկում է XVIII դարի վերջին երեսնամյակը, որին բնորոշ է հայ գրքի նոր կենտրոնների հիմնադրումը: Ընդհանրապես, հայտնի մտավորական երեմիա Չելեպի Քյոնուրճյանի, մեկդարյա ընդմիջումից հետո Կ. Պոլիսը վերականգնում է Աբգար Թոխաթեցու հիմնած հայ տպարանային արվեստի համբավը: Հանդես են գալիս նոր տպագրիչներ՝ Գրիգոր Մարզվանեցին, Ատվածատուր Պոլսեցին և ուրիշներ, ստեղծվում են շուրջ քսան տպարաններ: Այդ ժամանակ ասպարեզ իջած Արապյան նշանավոր տոհմի ներկայացուցիչները շուտով մեծ հռչակ են վաստակում ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային տպագրական արվեստի բնագավառում: Արապյանները դառնում են օսմանյան արքունական տպարանի ղեկավարները, ստեղծում հայկական, թուրքական ու վրացական նոր տառատեսակներ: Գրքի տպագրության նոր օջախ է դառնում Ջմյուռնիան, որտեղ դարավերջին տպագրված գրքերի մեջ առանձնանում է մեծ փիլիսոփա Եզնիկ Կողբացու «եղծ աղանդոց» երկը:

XVIII դարի վերջին Ս. Ղազար կղզում սկսվում է Մխիթարյանների տպարանի գործունեությունը: Մինչև դարավերջ լույս են տեսնում մոտ 30 անուն գրքեր, այդ թվում՝ Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոցոյն», Մխիթար Գոշի առականին, Ղուկաս Ինճիճյանի պատմաաշխարհագրական որոշ երկեր և այլն:

Նույն ժամանակաշրջանում հայ տպագրությունը թափանցեց օրեցօր հզորացող ռուսահայ ու հնդկահայ գաղթօջախներ: Խոշոր մշակութային երևույթ էր 1772 թ. Մադրասում Շահամիրյանների տպարանի հիմնումը, որտեղ լույս տեսան հայ ազատագրական պայքարի ու քաղաքական մտքի զագաթնակետ հանդիսացող «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» և «Որոգայթ փառաց» աշխատությունները: Հարություն քահանա Շնավոնյանի ջանքերով Մադրասում հիմնված մեկ այլ տպարանում 1794 թ. լույս տեսավ

հայերեն առաջին պարբերականը՝ «Ազդարարը»: Տպարան բացվեց նաև Կալկաթայում:

1781 թ. Ռուսաստանում առաջին հայկական տպարանի ստեղծմանը մեծապես նպաստեց ռուսահայերի հոգևոր առաջնորդ Զովսեփ Արղությանը: Նրա օժանդակությամբ ջուղայեցի խոջա Գրիգոր Խալդարյանն Անգլիայից Սանկտ Պետերբուրգ բերեց տառատեսակներ և բացեց տպարան: Խալդարյանի տպարանի առաջին տպագիր գործը եղավ «Տետրակ այբբենականը»: Դարավերջին Արղությանը Խալդարյանի տպարանի սարքերը տեղափոխեց Նոր Նախիջևան, ապա՝ Աստրախան և մոտ 10 տարում տպագրեց 50 անուն գիրք:

Եվ վերջապես, երկարատև դեգերումներից հետո, մույն XVIII դարի վերջին երեսնամյակում հայ տպագրությունը հանգրվանեց նաև հայրենիքում: Այդ գործում մեծ ավանդ ունեցավ Ամենայն հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցին: Արևմուտքից տպարան ստանալու անհաջող փորձերից հետո նա ձեռնամուխ եղավ տեղում հնարավոր միջոցներով տպարան ստեղծելու գործին: 1771 թ. բացվեց Էջմիածնի տպարանը: Հայրենի հողի վրա լույս տեսած առաջին գիրքը դարձավ «Ջոսարան հոգևորը»՝ փոքրածավալ, բայց՝ ճաշակով կաշեպատված և դյուրընթեռնելի տառատեսակով: Շուտով տպագրվում են նաև այլ գրքեր: Էջմիածնի տպարանի կատարելագործմանն իր նպաստն է բերում Կ. Պոլսից ժամանած նշանավոր տպագրիչ Պողոս Արապյանը: Վրաց թագավոր Զերակլ II-ի պատվերով Էջմիածնում տպագրվում են նաև վրացերեն գրքեր: Այս կերպ իրականանում է Մայր հայրենիքում տպարան ունենալու հայ սերունդների երազանքը:

Հայկական տպագրության սկզբնավորումից մինչև XVIII դարի վերջը ինչպես վերոհիշյալ, այնպես էլ այլ տպարաններում լույս տեսան շուրջ 1000 անուն հայերեն գրքեր: Գրատպությունը դարձավ հայ մշակույթի անբաժան ու հարուստ բնագավառներից մեկը: Հաջորդ դարերում ընդլայնելով իր աշխարհագրությունը՝ այն, փաստորեն, ընդգրկեց ինչպես ամբողջ գաղթաշխարհը, այնպես էլ

Չայաստանը՝ իր գրեթե բոլոր պատմաաշխարհագրական շրջաններով: Չայկական տպագրությունը վերածվեց օտար տիրապետության տակ գտնվող հայության կենսագոյության հզոր ազդակներից մեկի:

Այսօր 500-ամյա հայ գիրքը շարունակում է մնալ հայ ինքնության կարևոր դրսևորումներից մեկը և շարունակում է համաշխարհային գրատպությունը հարստացնել հայ մշակույթի նոր գոհարներով՝ սերունդների համար պահպանելով ու բազմապատկելով ավելի քան 1600-ամյա մեսրոպյան այբուբենի տառերով տպված ահռելի գրական մի ժառանգություն:

“

ԱԶԱՏ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ  
բ.գ.դ., Հայ-ռուսական  
(սլավոնական) համալսարան

**ԳԻՐՔԸ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Մշակութային համակարգերը տարբերվում են նաև գրքի նկատմամբ ունեցած վերաբերմունքով: Գիրը ծառայել է բոլոր ժողովուրդներին. բայց գրավոր խոսքի նկատմամբ եղած վերաբերմունքը փոխվում է երկրից երկիր: Կարելի է հիշել այսպիսի փաստ. Հին Հունաստանի ամենանշանավոր մտածողներից մեկը՝ Սոկրատը, սկզբունքորեն բանավոր խոսքի կրող է եղել: Չի պահպանվել նրա ոչ մի դասախոսության տեքստ. բայց նրա ազդեցությունը անտիկ մտքի վրա հսկայական է եղել: Սոկրատի այս ընդգծված հակումը բանավոր խոսքի հանդեպ երևի պատահական չի եղել. հին հունական մշակույթն ավելի բարձր էր դնում բանավոր խոսքը, որի մշակույթը նրանց մոտ շատ զարգացած էր: Հիշեք Աթենքի բազմամարդ ժողովները, որոնք այսօրվա խորհրդարանների նախատիպն էին և հիշեք, թե ինչքան կարևոր էր հռետորի ունակությունը համոզելու ազդրայում (իրապարակում) հավաքված ժողովրդին: Բանավոր հռետորական խոսքի բարձր հեղինակությունը Հին Հունաստանում թերևս կապված էր հին հունական դեմոկրատիայի հետ:

Եվ եթե շարունակենք այս ենթադրությունը, կարող ենք եզրակացնել, որ արևելյան քաղաքակրթություններում բանավոր խոսքի այսպիսի պաշտամունք լինել չէր կարող, քանի որ քաղաքական մտածողությունը բոլորովին այլ էր, և քաղաքացիների ժողովում որևէ մեկին համոզելու խնդիր չկար: Բոլոր կարևորագույն որոշումներն ընդունվում էին միապետների պալատներում, անսահման իշխանությամբ օժտված միապետների կողմից: Եփշտ է, Արևելքում շատ զարգացած էր բանավոր խրատական զրույցների մշակույթը. բայց հասարակության և պետության կյանքում

այդ գրույցները գրեթե լուսանցքային, մասնավոր դեր էին կատարում: Այսպես թե այնպես, հենց Արևելքն է մեզ թողել գրավոր խոսքի և գրքի իսկական պաշտամունքի օրինակներ, սկսած դեռ Հին եգիպտոսից: Հայտնի է մի բանաստեղծություն, որի մեջ գրագիրը, այսինքն՝ գրավոր խոսքի կրողը, գրքեր ստեղծողն ասում է, որ միակ անմահ բանը գիրն է. ամեն ինչ փուլ կգա, կանհետանա, իսկ գիրքը, գրված խոսքը կմնա:

Ջարմանալի բան է, անշուշտ, մեզանից մի քանի հազար տարի առաջ գոյություն ունեցած մշակույթի մեջ տեսնել գրքի այսպիսի պաշտամունք. բայց եղել է, և վկան պահպանված բանաստեղծությունն է. Բերենք մի քանի շատ բնորոշ տող այդ բանաստեղծությունից.

Աստվածների փոխանորդների ժամանակների  
Իմաստուն գրիչները,  
Որոնք ապագան էին գուշակում,  
Նրանց անունները հավերժ կմնան:

.....

Նրանք իրենց պղնձե բուրգեր  
Եվ բրոնզե շիրմաքարեր չպատրաստեցին,  
Իրենցից հետո ժառանգներ չթողեցին,  
Երեխաներ, որոնք նրանց անունը պահեին:  
Բայց նրանք իրենց ժառանգությունը թողեցին գրքերում,  
Իրենց խրատներում:

.....

Գիրքն ավելի հարկավոր է, քան տունը,  
Ավելի լավ է Արևմտյան գերեզմանից,  
Ավելի լավ է, քան շքեղ պալատը,  
Ավելի լավ է, քան տաճարում դրված հուշարձանը<sup>1</sup>:

Այս ավանդույթը հետագայում անցավ հռոմեական և ռուսական գրականությանը՝ իբրև բանաստեղծական խոսքի անմա-

---

<sup>1</sup> Տողացի թարգմանություն ռուսերենից. Пoesия и проза древнего Востока, Москва, 1973, с. 102–103.

հուքյան հավատ: Հիշենք Հորացիոսի հռչակավոր բանաստեղծությունը՝ «Հուշարձան», որը ռուս գրականության մեջ Պուշկինը փոխադրեց իբրև իր հայտնի բանաստեղծությունը՝ «Я памятник себе воздвиг нерукотворный...»: Այսպես թե այնպես, Արևելքը ավելի շատ խոնարհվում էր գրավոր խոսքի, գրքի առջև՝ նրան երբեմն վերագրելով միատիպական զորություն: Արևելյան ժողովուրդների մշակույթների ուսումնասիրությունն այս դիտակետից պետք է որ շատ հետաքրքրական լինի:

Ինչ վերաբերում է հայկական մշակույթին, ամերկբա է, որ այստեղ գրքին շատ մեծ նշանակություն է տրվել հենց սկզբից, այսինքն՝ այն պահից, երբ ստեղծվել է հայկական այբուբենը: Իր այս առանձնահատկությամբ հայ մշակույթը հակվում է դեպի արևելյան ավանդույթները: Այդ իսկ պահից սկսած գիրքը դարձել է պաշտամունքի առարկա: Այստեղ առնվազն երկու հանգամանք դեր են խաղացել: Գիրք դառնում էր ժողովրդի հոգևոր ինքնությունը պահպանելու հզոր միջոց: Եվ պատահական չէր գրականության այն անօրինակ ծաղկումը, որ տեղի ունեցավ V դարում: Ինչպես գրի ստեղծումը, այնպես էլ գրականության ծաղկումը ինքնապահպանության հզոր ճիգի արտահայտություն էին: Նշանակություն է ունեցել այն հանգամանքը նաև, որ քրիստոնեությունը, որ հայերն ընդունեցին 301 թ., նրանց համար ի սկզբանե կապված էր գրքի հետ: Հայկական քրիստոնեական մշակույթի իսկական ծաղկումը սկսվեց Աստվածաշնչի թարգմանությամբ, որը կատարվեց գրերի գյուտից անմիջապես հետո: Հայերեն թարգմանված Աստվածաշունչն ի սկզբանե իսկապես սուրբ գիրք էր լինելու հայերի համար: Ուրեմն, հայերեն գիրքը սրբագործվում էր, մի կողմից, Աստծո հեղինակությամբ, մյուս կողմից, ազգային պետության բացակայության պայմաններում, իբրև ազգային ինքնությունը պահպանելու անփոխարինելի միջոց:

Այս համատեքստում միանգամայն հասկանալի էր հայ գրերի ստեղծողի՝ Մեսրոպ Մաշտոցի սրբագործումը: Դա միայն եկեղեցու երախտագիտությունը չէր Սուրբ Գիրքը հայերեն թարգմանելու համար. դա ավելի շատ ժողովրդի երախտագիտությունն էր

ազգային հոգևոր ինքնապահպանության այդպիսի հզոր գործիչ ապահովելու համար: Անշուշտ, հայ եկեղեցու սրբարանում ամենապատվավոր տեղն ունենալով, Մաշտոցն ավելին է, քան սուրբը իր եկեղեցական իմաստով: Ահա թե ինչու, անկախ սրբի իր հանգամանքից, Մեսրոպ Մաշտոցն անցած 1500 տարիների ընթացքում մնում է հայ ժողովրդի կյանքում ամենից մեծ դեր կատարած և իսկապես համաժողովրդական պաշտամունքի արժանացած գործիչ, որպիսին դժվար է գտնել ուրիշ ժողովուրդների պանթեոններում (ինչ-որ չափով համեմատելի են, թերևս, սլավոնական գրերի ստեղծողներ Կիրիլն ու Մեֆոդին, որոնք ևս սրբացվել են սլավոն մի քանի ժողովուրդների կողմից): Եթե մենք երբևէ հավաքեինք Մեսրոպ Մաշտոցին նվիրված բոլոր հին ու նոր ներբողները, ստվարածավալ ժողովածու կստացվեր: Դիշենք միայն XX դ. ստեղծված երկու պոեմ՝ Սիամանթոյի «Սուրբ Մեսրոպ» և Պարույր Սևակի «Եվ այր մի Մաշտոց անուն» գործերը:

Բայց շարունակենք: Ինչպես ասացինք, հայկական միջնադարը տալիս է գրքի նկատմամբ ունեցած համաժողովրդական ակնածանքի ու պաշտամունքի բազմաթիվ վկայություններ: Առաջինը միջնադարյան մատյանների հիշատակարաններն են: Գրիչները նգովք են կարդում նրանց, ովքեր հարգանքով չեն վարվի իրենց ընդօրինակած մատյանների հետ, այդ մատյանների ապագա ընթերցողներին խնդրում-աղաչում են խնամքով ու հարգանքով վարվել դրանց հետ, այնպես, կարծես թե դրանք միստիկական էակներ լինեն: Ահա դրանցից մի օրինակ. «չունի ոք իշխանութիւն և իրաման, ոչ յիւրքն և ոչ աւտարք որ հանէ զսա ի դրանէ սուրբ տաճարին, այլ եթէ փորձանք հանդիպի՝ ահ կամ փախ, նա ի յամրոց տանէ և թաքուցանէ՝ նա զաւերութիւն յաստուծոյ առջէ»<sup>2</sup>: Այդ գրքում կան նմանատիպ բազմաթիվ օրինակներ: Դ. Բախչինյանը մեզ այսպիսի եզրակացություն է ներկայացնում իրենց օրինակած ձեռագրերի հանդեպ գրիչների վերաբերմունքի մասին. «Գրիչներն այն պատկերացումն ունեին, որ իրենց

<sup>2</sup> Բախչինյան Դ., Հայկական ձեռագրերի հիշատակարանները, Երևան, 1980, էջ 20:

4205545

կատարած աշխատանքը, այն է՝ ձեռագրերի ընդօրինակումը, ոչ միայն հայրենամուկեր ու մշակութային, այլև «աստվածահաճոյ գործ» է, իսկ դա, նրանց կարծիքով, կարևոր գործոն է «ողորմին» ժառանգելու և մեղքերից փրկվելու համար... Միջնադարում մեր ժողովուրդը մեծ պատկառանքով ու երկյուղածությամբ է վերաբերվել ձեռագիր գրքին, շնչավորել է այն և դարձրել գրեթե պաշտամունքի առարկա»: Իբրև իր այս եզրակացության հաստատում՝ Բախչինյանը բերում է ականավոր միջնադարագետ Սիրարփի Տեր-Ներսիսյանի վկայությունն այն մասին, որ «հայ մարդու համար ձեռագիր պատվիրելն ու նվիրաբերելը նույն նշանակությունն ունեն, ինչ հույնի համար՝ սրբապատկերը»: Բերվում է XIII դարի գրիչ Գրիգոր Կրոնավորի միտքը, որ «հավիտենական կյանքի համար մարդիկ սիրում և կատարում են բարին, իսկ բարու պտուղներն են եկեղեցին, խաչը, գիրքը»<sup>3</sup>:

Միջնադարի այս իրողությունները շատ թանկարժեք վկայություններ են հայկական մշակություն գրքի կատարած հսկայական դերի մասին: Եթե դրանց գումարենք հայոց մեջ եղած երկյուղած վերաբերմունքը Նարեկացու Մատյանի, առհասարակ գրավոր մատյանների հանդեպ (Նարեկացու գիրքը հիվանդի գլխի տակ դնելը, իբրև օժիտ տալը, զանազան արհավիրքների ժամանակ հաճախ մեծ զոհողությունների գնով գրքեր փրկելը), պատկերն ավելի ամբողջական կդառնա: Շատ կարևոր է այս հանրահայտ փաստերը իմաստավորել հայկական մշակույթի առանձնահատկությունների համատեքստում:

Այս խնդրում պետք է նկատի առնել և մի այլ իրողություն գրքի պաշտամունքի կրողները ոչ միայն գրագետ, «կարդացող» մարդիկ էին՝ գրիչներն ու կրոնավորները, ազնվականության մի մասը, այլև ռամիկն ու շինականը, ամբողջ ժողովուրդը: Դա իսկական պաշտամունք է եղել, որն իր խոր դրոշմն է դրել հայ մարդու հոգեբանության, աշխարհընկալման վրա: Մանավանդ պետության բացակայությունը նպաստում էր գրքին միստիկական

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 23-24:



արժեք հաղորդելուն: Մարմնավոր իշխանությունների թուլությունը կամ բացակայությունը սրում էր հոգևորի կարևորությունը:

Անշուշտ, այս վերաբերմունքը միջնադարով չսահմանափակվեց: Նոր ժամանակներում այս իրողությունը շարունակում է եսկան դեր կատարել հայ ժողովրդի կյանքում: Նա դարձյալ զուրկ էր պետականությունից, և գրքի ու գրավոր մշակույթի էական, երբեմն դարձյալ միստիկական արժեքը պահպանվում է: Պատահական չէ հաջատուր Աբովյանի ցավն այն բանի համար, որ հայ մարդիկ, հայ պատանիներն ընթերցանության լավ գրքեր չունեն, չգիտեն իրենց հերոսների մասին և այլն: Բայց մեր թեմայի առնչությամբ շատ ավելի հետաքրքրական միտք ենք գտնում Ռաֆֆու «Կայծեր» վեպում: Հերոսներից մեկը՝ Համրը, հանդգնած ասում է, որ մեկ լավ գիրքը կարող է մի ողջ ժողովուրդ փրկել: Ահա գրքի հանդեպ այս հավատը հայկական մշակույթի ամենաբնորոշ առանձնահատկություններից մեկն է:

Բայց ոչ միայն հավատը: Գրքի ազդեցությունը իրապես շատ մեծ է եղել XIX դարի հայ իրականության մեջ, հատկապես ազատագրական պայքարի սկզբնավորման շրջանում: Հայ պատմագիտության մեջ մի զարմանալի վկայություն կա այդ մասին: Իր հայտնի «Անցյալից հուշերի» գրքում Լեոն հաղորդում է, որ հարևան խանութի երիտասարդ տերը, կարդալով Ռաֆֆու «Խենթը», թողել է իր առևտուրը, հրացանը վերցրել և անցել է Արևմտյան Հայաստան՝ այն ազատագրելու համար: Անկասկած, այս երիտասարդը միակը չի եղել, 19-րդ դարի վերջին երիտասարդ հայ մարդիկ խմբերով, ոչ առանց գրականության, նույն Ռաֆֆու գրքերի ազդեցության, գնում էին Արևմտյան Հայաստան կռվելու: Եվ առհասարակ Ռաֆֆու վեպերը շատ մեծ դեր են կատարել ազատագրական պայքարի գաղափարախոսությունը մշակելու և հայ երիտասարդությանը ոգևորելու համար:

Ի դեպ, այս կետում հետաքրքրական զուգահեռ է գծագրվում հայկական և ռուսական մշակույթների միջև: Ինչպես XIX դարի հայ հասարակությունը, այնպես էլ ռուսականը, լարված որոնումների մեջ էին: Հայերը մտածում էին Արևմտյան Հայաստանի

ազատագրության մասին: Ռուսական կյանքը ևս առաջադրում էր բազմաթիվ սուր հարցեր, որոնք ավելի շատ կապված էին Ռուսաստանի սոցիալական և հոգևոր կյանքի, անհատի ազատագրության, ավելի կատարյալ հասարակության ստեղծման հետ: Եվ առաջին հերթին ռուսական գիրքն ու գրականությունն էին արծազանքում այդ խնդիրներին խորը ազդեցություն գործելով ռուսական մտածողության վրա: Պետք է այստեղ հիշել ոչ միայն այն վեպերը, որոնք գեղարվեստական իմաստով անվիճելի նվաճումներ էին (Տոլստոյի, Դոստոևսկու և ուրիշների երկերը), այլ նաև այնպիսի գիրք, ինչպիսին էր Չերնիշևսկու «Ինչ անելը», որի գեղարվեստականությունը միշտ վեճի առարկա է եղել: Այս գիրքը հեղափոխականների սերունդներ է դաստիարակել այնպես, ինչպես Րաֆֆու վեպերը մեզանում:

XX դարը ևս տալիս է գրքի հանդեպ ընդգծված հարգալից վերաբերմունքի բազմաթիվ օրինակներ: Նախ, այստեղ պետք է ուշադրություն դարձնել սփյուռքում 1920-ական թվականներին ծավալված ակտիվ գրահրատարակչական գործունեության վրա: Եղեռնից հազիվ փրկված հայկական զանգվածները ոչ միայն դպրոցներ են ստեղծում և թերթեր հրատարակում, այլև տպագրում են բազմաթիվ գրքեր, որոնց մեջ շատ կային հետազայում բարձր համբավ վաստակած գրողների գործեր (Շահան Շահնուր, Համաստեղ, Վազգեն Շուշանյան, Հակոբ Օշական, Կոստան Զարյան և ուրիշներ): Պետք էր չափազանց մեծ նշանակություն տալ գրին ու գրքին հետեղեռնյան ծանրագույն պայմաններում այդքան գիրք, թերթ, հանդես հրատարակելու համար:

Հայրենական պատերազմի ժամանակ հայ գրողների գործերը տարածվում էին նաև ռազմաճակատում, և վկայություններ կան, որ հայրենիքին նվիրված որոշ գործերի հրատարակություններ գտնվել են զոհված զինվորների գրպաններում (օրինակ, Նաիրի Զարյանի «Ձայն հայրենական» պոեմը): Եվ, իհարկե, պատահական չէր, որ Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» վեպի հրատարակությունը այդպիսի իրադարձություն եղավ հայկական

մշակութային կանքում պատերազմի ժամանակ և հետպատերազմյան տարիներին:

1960-80-ական թվականները կարելի է համարել հայ գրքի ծաղկման տարիներ: Գիրքը դառնում է հոգևոր-մշակութային կյանքի կարևորագույն գործոններից մեկը: Եվ դասականների, և՛ ժամանակակից գրողների գործերը, հասարակական գիտություններին վերաբերող գրքերը տպագրվում են հսկայական տպաքանակներով ու արագորեն սպառվում: Կարելի է հիշել Հայկական Սովետական Հանրագիտարանը, Թումանյանի երկերի 10-հատորանոց հրատարակությունը (դրան բաժանորդագրվեց 100000 ընթերցող, հետո հրատարակիչները ստիպված եղան այդ թիվն իջեցնել 75000-ի: Հայաստանի անկախության տարիներին, դժբախտաբար, վերջին հատորները տպագրվեցին 500 օրինակով): Մեծ տպաքանակներով տպագրվում էին նաև Խսահայկյանի, Ռաֆֆու, մյուս դասականների գործերը: Ժամանակակից գրողների գործերը երբեմն տպագրվում էին դասականներին չզիջող տպաքանակներով (Սևակ, Շիրազ, Սարյան, Կապուտիկյան, Խանգաղյան և այլք): Հնարավոր է, որ բաժանորդներից շատերը ջանասեր ընթերցողներ չէին (ինչպես միջին դարերում Նարեկը հիվանդի բարձի տակ ղնողների մեծ մասն ընթերցողներ չէին): Բայց հենց այս իրողությունը պարադոքսալ կերպով վկայում է գրքի իսկական պաշտամունքի մասին:

Վերջին տարիներին մեր երկրում գրահրատարակության և գրքի հանդեպ վերաբերմունքի մեջ տեղի են ունենում արմատական փոփոխություններ՝ կապված և՛ սոցիալական, և տեխնիկայի, և՛ մշակույթի համակարգում տեղի ունեցող համընդհանուր փոփոխությունների հետ: Բայց դա առանձին, լուրջ հետազոտության նյութ է:

ՄԱՇՏՈՑՅԱՆ ՀԱՅՈՑ ՏՊԱԳԻՐ

ԱՅՐՈՒԲԵՆԻ 530-ԱՄՅԱԿԸ

Ինձ պատիվ է վիճակվել բացելու հայերեն առաջին տպագիր գրքի՝ «Ուրբաթագրքի» տպագրության 500-ամյա հորելյանին նվիրված հանդիսությունը ՉԱԱ գրականության ինստիտուտի գիտաժողովում 2012 թ. հունվարի 30-ին, ինչպես և Պատմության ինստիտուտի գիտաժողովում 2012 թ. դեկտեմբերի 25-ին: Դրանք ես տեսնում եմ յուրօրինակ խորհուրդ. տակավին ԵՊՀ-ի Արտասահմանյան գրականության և գերմաներեն լեզվի ասպիրանտուրայում սովորելիս 1956 թ. կազմակերպեցի տպարան՝ բրայլյան ուռուցիկ տառերով գրքերի տպագրության համար: Իմ խմբագրությամբ առաջին անգամ լույս տեսան ոչ միայն դասագրքեր բոլոր առարկաների գծով, այլև 20-ամյա արգելքից նոր հրատարակության թույլատրված Եղիշե Չարենցի ժողովածուն և Սկրտիչ Արմենի «Չեղնար աղբյուր»-ը, Ավետիք Իսահակյանի երկերը, Ռաֆֆու «Նամվել»-ը, Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և այլն: Հայ գրքի 500-ամյա հորելյանի առթիվ թող այսօր հիշվի նաև այս համեստ փաստը:

Համաշխարհային բազմալեզու տիեզերածավալ գրականության տպագրության, այդ թվում հայ բազմադարյան ձեռագրերի տպագիր բազմացման համար, համայն մարդկությունը պարտական է գերմանացի Յոհան Գուտենբերգին՝ տպագրության հանճարեղ գյուտարարին, ում անունը, ցավոք, հազվադեպ է հիշատակվում: Իմ ձեռքին է XIX դարի առաջին կեսի ավստրիացի ականավոր ռոմանտիկ բանաստեղծ Նիկոլաուս Լենաուի «Գուտենբերգ» բանաստեղծությունը, որ գերմաներենից թարգմանել եմ առաջին անգամ հայ գրքի տպագրության 500-ամյա այս հի-

րավի համաշխարհային հանդիսության առիթով, որի պատվին Երևանը հռչակվեց *գրքի, տպագրության մայրաքաղաք*: Գուտենբերգին ծոնված այս եզակի բանաստեղծությունը Լենատն տպագրել է առաջին անգամ 1835 թ., իր մտերիմ ընկեր Ռայնբեկի Շտոտզարտոմ հրատարակած «Շիլլերյան ալբոմ»-ում, որ նվիրված էր մեծ բանաստեղծ Ֆրիդրիխ Շիլլերի մահվան 30-ամյա տարելիցին: Թեև ծանոթագրություններում չի նշված, բայց Յո. Գուտենբերգի կենսագրության ուսումնասիրությունից պարզեցի, որ բանաստեղծությունը Լենատն հղացել է Գուտենբերգի գյուտի 400-ամյա տարելիցի առթիվ: Ահա իմ թարգմանությունը.

Երկրի վրայով սուրում է պաղ հողմ.

Ասես տարածամ է, գիշեր ամեն կողմ.

Բայց դեռ մոլեգնում է մարդկության

Հին կռիվ՝ հանուն ազատության,

Լույսի, իրավունքի համար.

ճակատում են իրար դեմ համառ

Եվ կոտորում են իրար կրկին –

Ես բաշխում եմ ահա երկու կողմի զորքին

Ձենքեր ու զրահներ անհաշիվ:

Թող զարկվեն, դառնան դժոխքի բաժին,

Միայն այս քառսից խառնափնթոր

Մարդկությունը գտնի զեթ մի ժամ անդորր»:

Այսպես խորհեց հանճարի ոգին՝

Մարդկության առաջնորդը մեծ,

Երբ շնորհ տվեց Գուտենբերգին

Ու նրա ճակատը շոյեց:

Ինչու՞ է այսպես զայրացած ավստրիացի ռոմանտիկ բանաստեղծը: Մարդկության առաջընթացի ուղին անցնում և ընդհատվում էր շարունակաբար արյունալի հանգրվաններով՝ հարյուրամյակներ տևած խաժամուժ հորդաների արտագաղթեր. նաև սև ու սպիտակ ոչխարների անվերջանալի հոտեր, որոնք իրենց իսկ ամայացրած անապատներից դուրս հորդացին դեպի Առաջավոր Ասիայի և Եվրոպայի առատ խոտածածկույթները և արա-

ծելով՝ նվաճեցին այլ ժողովուրդների պատմական հայրենիքներ, տասնամյակներ տևած խաչակրաց արշավանքներ, յոթնամյա ու երեսնամյա պատերազմներ Եվրոպայում, կարմիր ու սպիտակ վարդերի պատերազմ Անգլիայում:

Հույս կար, որ Յոհան Գուտենբերգի հանճարեղ գյուտը՝ գիրքն ու գրականությունն անսահմանափակ բազմացնելու և տարածելու հրաշքը, քաղաքակրթելու է մարդկությունը և մարդկային բազմությունների կռիվը ռազմի դաշտերից փոխադրելու է թղթի անձայրածիր սպիտակ դաշտերի վրա, և դրանով իսկ լիցքաթափելու է վայրագ արյունահեղության մարդկային եռանդը, քանզի ազատության լույսի և իրավունքի պատերազմն ընդունելու էր քաղաքակիրթ պայքար մղելու ձևեր՝ բանավեճ, հայացքների ու գաղափարների ընդդիմակայություն և փոխանակում: Բայց Յո. Գուտենբերգի գյուտից՝ այդ մտավոր զենքից, հավասարապես օգտվելու էին նաև մութ ուժերը՝ լույսի մասին ճամարտակողները: Գիրքը և տպագիր միջոցները՝ մամուլն ու լրագրությունը, աներևակայելի նպաստեցին մարդկության զարգացմանը, որ ընթանում է նաև ջղածիզ պոռթկումներով: Միջնադարյան տիտանների նման նորագույն ժամանակներում խարույկ բարձրացան նաև գրքերը՝ որպես «քաղաքակրթության» առաջամարտիկներ, ուրեմն և նահատակներ: 1934–35 թթ., Գերմանիայում ֆաշիզմի տիրապետության համատարած խավարում, այս ու այնտեղ կետկետում էին կրակներ. այդ Հայնրիխ Հայնեի գրքերն էին այրում խարույկի վրա, իսկ նույն ժամանակ Խորհրդային Հայաստանում այրում էին եղիշե Չարենցի «Գիրք ճանապարհի»-ն.

Լուսավորվել է աշխարհը կարծես,  
խավարն էլ ոնց որ շատ չի՝ թանձրանում,  
Երբ միջնադարյան տիտանների պես  
Գրքերն են արդեն խարույկ բարձրանում:

Եվ սակայն վերջ ի վերջո հենց այս ամենից ծերբազատվելու համար եղավ Յոհան Գուտենբերգի հանճարեղ գյուտը:



Յոհան Գուտենբերգը (լրիվ անունն է՝ Johannes Gensfleisch zum Gutenberg) ծնվել է 1394 և 1399 թվերի միջև, ենթադրաբար՝ Մայնց քաղաքում, վախճանվել 3.02.1468 թվականին Մայնցում: Գուտենբերգը պատկանում էր Մայնցի պատրիկներից մեկի Գենսֆլայշ (սագի միս) կոչված ընտանիքին: Մայնցում պատրիկյան տոհմերի դեմ համքարությունների տարած հաղթանակից հետո նա փոխադրվեց Շտրասբուրգ, որտեղ տնտեսական ապրանքների զարգացող արտադրության և նրանց պիտակների բազմացման, ինչպես և գիտության առաջընթացի վերաբերյալ տեղեկատվության տարածման անհրաժեշտությունը նրան մղեց տեղեկատվության ձևերի բազմացման, այն է տպագրության գյուտի գաղափարին: 1436 թվականից սկսած, ոսկերիչ վարպետների մոտ ծուլման գաղտնիքներին հմտանալով, ոսկերչական գործիքների և ծուլման նուրբ կաղապարների պատրաստման գործում ձեռք բերած փորձառությունը սրամիտ կերպով գործի դնելով՝ նա ստեղծեց ձեռքի ծուլման գործիք ցանկացած քանակի լատիներեն համաչափ տպատառեր ծուլելու համար: Իսկ 1444 թվին Մայնց վերադառնալուց հետո հորինեց համաչափ շարժական տպատառերով շարվածքը բազմացնելու մամլիչ-հաստոց, որն աշխատում էր այդ ու ձախ թեքվող սեղմիչ կոթառի օգնությամբ: Այդ գաղափարը Գուտենբերգը փոխառել էր խաղողից հյութ քամող սարքից: Այսպես նա ստեղծեց առաջին տպագրական հաստոցը և ստացավ տպագրության համար անհրաժեշտ սև ներկ, որով և սկսեց տպագրության գործը: Իր գյուտով Գուտենբերգը հիմք դրեց տպագրական հեղափոխությանը Եվրոպայում, որը քաղաքակրթության զարգացման ասպարեզում տեխնիկական մտքի մուծած կատարյալ հեղափոխության էր հավասար:

Առաջին փոքր ծավալի տպագրություններից էին «Վերջին դատաստան»-ը և «Ապաշխարության նամակներ»-ը: Գուտենբերգն իր գյուտը համարում էր հասարակական երևույթներին արծագանքելու լավագույն միջոց: 1453 թվի ապրիլին սուլթան Մեհմեդ Բ-ի ավելի քան 200-հազարանոց զորքը արշավեց Կոստանդնու-

պոլսի վրա և 51 օրվա պաշարումից հետո գրավեց նախկին Բյուզանդիայի մայրաքաղաքը, որ ենթարկվեց սոսկալի կողոպուտի ու ավերի: Այդ առթիվ Գուտենբերգը հրատարակեց «Թուրքական օրացույցը», որի 12 ամիսների թերթերին Ատոնուց խնդրվում էր քրիստոնեությունը և եվրոպան փրկել Կոստանդնուպոլիսը նվաճած Մեհմեդ Բ սուլթանի թուրք ելուզակներից: 1450 թվին, վաճառական Յոհան Ֆուստի տրամադրած վարկով, Գուտենբերգը իրագործեց իր հոյակապ գլուփագործոցը՝ 42 տողանի լատիներեն Սուրբ Գրքի տպագրությունը, որն ավարտեց 1455 թվին և իր շքեղության շնորհիվ հետագայում կոչվեց «Գուտենբերգի Բիբլիա»: Այնուհետև ձեռնարկեց Սաղմոսարանի նախապատրաստումը:

Տեսնելով ձեռնարկած գործի փայլուն հաջողությունը՝ վաճառական Ֆուստը, որը սկզբում համաձայնել էր հավասարի իրավունքով մասնակցել այդ գործին, իր ներդրած գումարը շուտափույթ հետ ստանալու պահանջով դատական գործ հարուցեց գյուտարարի դեմ և արդյունքում տեր դարձավ ոչ միայն տպագրական գործին, այլև Յո. Գուտենբերգի ամբողջ ունեցվածքը, տպագրական հաստոցը, Աստվածաշնչի օրինակները և, նույնիսկ, նախաձեռնած Սաղմոսագիրքն անցան վաճառականին, որն իր փեսա Շյոֆֆերի հետ 1457 թվին շարունակեց տպագրության գործը, իսկ Յո. Գուտենբերգը, մինչև իր կյանքի վերջը (1468 թ.), փաստորեն, անմասն մնաց իր ստեղծած գյուտի բարիքներից:

Գուտենբերգի Բիբլիան, ինչպես և Մայնցի Սաղմոսագիրքը, համարվում են տպագրական արվեստի բարձրագույն նմուշներ: Ոսկան Երևանցու համար, 1666 թվին Ամստերդամում հայերեն պատկերազարդ Աստվածաշունչը հրատարակելիս, անշուշտ, ոգեշնչման և ընդօրինակման կատարյալ օրինակ պետք է ծառայեր Գուտենբերգի Բիբլիան: Վերջինիս 46 օրինակները ներկայումս խիստ հաշվառման մեջ են գտնվում Գերմանիայում ոչ միայն հին գրքերի պետական պահուստներում, այլև անհատ գրքատերերի հավաքածուներում: Սա ընդօրինակման արժանի կարևոր միջոցառում պետք է լինի նաև մեզանում՝ նկատի առնե-

լով, թե մենք ինչպիսի անփութությամբ ենք վերաբերում այնպիսի բարձրարժեք տպագրության օրինակներին, ինչպիսին է Ոսկան Երևանցու պատկերագարդ հայկական հնագույն տպագիր Աստվածաշունչ մատյանը, որի եզակի օրինակները մասնավոր հավաքածուներում որևէ հաշվառման չեն ենթարկվում՝ ի տարբերություն Գուտենբերգի Բիբլիայի:

Գուտենբերգի մահից հետո գրքի տպագրության գործը վաճառական Ֆուստն ամբողջությամբ հանձնեց Շյոֆֆերին: Ասկայն տպագրության գյուտի և առհասարակ գրատպության հետագա տարածման գործում մեծ դեր էր վիճակված Մայնցի տաճարի կանոնիկոս Բերնհարդ ֆոն Բրայդենբախին, որը մտածեց գերմանական գրքի տպագրության համար գումարներ հայթայթել Գուտենբերգի տպագրության գյուտը տարածելու միջոցով և այդ գործի մեջ ներգրավել այլ ազգերի շահագրգիռ կրոնական միաբանություններ: Այդ նպատակով Բրայդենբախն ուխտագնացություն ձեռնարկեց դեպի Սուրբ երկիր՝ Երուսաղեմ և Սինա, ուղեկից ընտրելով հուլանդացի նկարիչ-փորագրիչ Էրհարդ վան Ռեուվիխին (Ռոյվիխ, Ռեվեյ), որն այդ ժամանակ Մայնցում նկարագարողում էր Շյոֆֆերի նախածեռնած ղեղաբույսերի մի տեղեկագիր՝ «Պարտեզ ողջության» վերնագրով: Հենց այս փաստը համոզիչ վկայում է, որ ձեռներեց կանոնիկոսը Երուսաղեմ էր մեկնում ոչ թե սոսկ ուխտագնացության, այլ գործնական նպատակով՝ Յո. Գուտենբերգի գյուտի ոլորտը ներգրավելու նաև այլ ազգերի լեզուներով գրված ձեռագիր մատյանների բազմացումը: Երուսաղեմն այն վայրն էր, որտեղ մեկտեղված էին տարբեր դավանանքի պատկանող ազգային միաբանություններ իրենց վանքերով և սրբավայրերով. այստեղ էր լատին, հույն, ասորի, ղպտի և, իհարկե, Սրբոց միջնադարյան նշանավոր հայոց Հակոբյանց վանքը: Ուստի Բրայդենբախը 1483–1484 թվերին Ռոյվիխի հետ շրջագայեց Երուսաղեմում և Սինայում:

Երուսաղեմի հայոց վանք կատարած այցելությունը Բրայդենբախը նկարագրում է առանձին ջերմությամբ ու հետաքրքրությամբ: Հոգաբարձուները և միաբանները գրկաբաց ընդունեցին

Բրայդենբախի առաջարկը հայոց գրի տպագրության համար ծուլման և դրոշմելու սարքեր ստեղծելու վերաբերյալ: Նկարիչ Ռոյվիխին զարմացնում էր ոչ միայն հայոց գրերի անժամոթ գծագրությունը, այլև դրանց գեղագրությունը: Նրա ստեղծած փայտակերտ այբուբենը ներկայացնում է մաշտոցյան 36 նշանագրերը և հավելյալ «Փ» տառը, որ հուլանդացին իր հերթին դրվագել է ջանադիր բժախնդրությամբ:

Այդ ուղևորության ընթացքում կատարած գրառումներն ու դիտարկումները, ինչպես և Ռոյվիխի էքզիզներն ու փորագրությունները Մայնց վերադառնալուց հետո Բրայդենբախն օգտագործեց իր «Ուխտագնացություն դեպի Սուրբ երկիր» գրքում, որը լույս տեսավ 1486 թվին լատիներեն և գերմաներեն լեզուներով՝ «Peregrinatio in Terram Sanctam, Mainz, 1486», իսկ գերմաներեն վերնագիրն է՝ «Die heyligen reyszen gen Jherusalem, Mainz, 1486»: Գրքում տպագրված էին Երուսաղեմում նրանց ուսումնասիրած և Ռոյվիխի փորագրած յոթ արևելյան այբուբեններ՝ արաբերեն, եբրայերեն, ասորերեն, ղպտերեն, հայերեն, հունարեն և եթովպերեն: Բացի այբուբեններից գիրքը զարդարում են Վենետիկի Կորֆուի, Կրետեի, Ռոդոսի, ինչպես և Երուսաղեմի սրբավայրերի տեսարաններ, որոնց խորհրդավոր շուք է հաղորդում Տիրոջ գերեզմանը: Գրքում տեղ են գտել նաև իրական և առասպելական կենդանիների պատկերներ: Բրայդենբախի գիրքն առաջին պատկերազարդ ուղեգրությունն էր, որ այդ ժամանակից լայն հռչակ ձեռք բերեց Եվրոպայում և ունեցավ բազմաթիվ և բազմալեզու տպագրություններ: 1486–1546 թթ. այն լույս է տեսել լատիներեն, գերմաներեն, ֆրանսերեն, հուլանդերեն, իսպաներեն լեզուներով, իսկ 1610 թվին նաև լեհերեն: Այն ոչ միայն ցուցադրում է Երուսաղեմի սրբավայրերը, այլև պատմում է արևելքի ժողովուրդների մասին, որոնց համայնքները բնակվում էին Ավետյաց երկրում՝ սարացիներ (իմա՝ արաբներ), հրեաներ, հույներ, հայեր, եթովպացիներ և այլն:

Գուտենբերգի գյուտին, ինչպես և Բրայդենբախի գրքին ու նրանում տպագրված արևելյան այբուբեններին անդրադարձել են շատ եվրոպացի հետազոտողներ, իսկ խորհրդային Միությունում

մասնավորապես երեք լեռնագրադղի մշակութաբան-գրքագետներ՝ Վ. Ի. Լյուբլինսկին՝ «Տպագրության արշալույսին» գրքում (Լեռնագրադ, 1959)<sup>1</sup>, Ն.Վ. Վարբանեցը՝ «Յոհան Գուտենբերգը և գրատպության սկիզբը Եվրոպայում» (Մոսկվա, 1980)<sup>2</sup>, Լ. Ի. Կիսելյովան՝ «Արևմտաեվրոպական գիրքը XIV-XV դարերում» (Լեռնագրադ, 1985)<sup>3</sup>: Լյուբլինսկի Կիսելյովան իր աշխատության մեջ Ռոյվիխի փորագրած հիշյալ այբուբեններից զետեղել է միայն հայկական փայտակերտ այբուբենի լուսանկարը, որն արժանացել է նրա հիացմունքն՝ շնորհիվ ճուրբ կատարման:

Է	Բ	Գ	Դ	Ե	Ն	Ը	Թ	Պ	Պ	Պ	Պ
Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ
Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ
Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ
Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ
Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ
Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ
Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ
Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ
Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ
Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ

1986 թվին Գևորգ Աբգարյանը մեզանում առաջին անգամ հանդես եկավ «Հայոց տպագիր այբուբենը 500 տարեկան է» հոդվածով<sup>4</sup>: Իրապես, այդ թվականին լրանում էր Բրայդենբախի գրքի հրատարակման 500-ամյակը, իսկ նրանում արտատպված հայկական փայտակերտ այբուբենը պետք է փորագրված լիներ դրանից երկու տարի առաջ՝ 1484 թվականին: Երևանի պետական համալսարանի հայագիտական կենտրոնի հրավիրած գիտական նստաշրջանում հանգամանալից զեկուցմամբ հանդես եկավ Գ. Աբգարյանը՝ ցույց տալով, որ մաշտոցյան հայկական

<sup>1</sup> Люблинский В. И., На заре книгопечатания, Ленинград, 1959.  
<sup>2</sup> Варбанец Н. В., Йоханн Гутенберг и начало книгопечатания в Европе: Опыт нового прочтения материала, Москва, 1980.  
<sup>3</sup> Киселева Л. И., Западноевропейская книга XIV-XV вв., Ленинград, 1985.  
<sup>4</sup> «Հայրենիքի ծայն» շաբաթաթերթ, 1986, N 4:

այբուրենը փորագրվել է փայտի վրա Գերմանիայի Մայնց քաղաքում ավելի քան քառորդ դար առաջ, քան 1512 թվականին Վենետիկում Հակոբ Մեղապարտի տպագրած հայերեն առաջին գիրքը, որ կոչվում է «Ուրբաթագիրք»: Գ. Աբգարյանի հաջորդ նշանակալից հրատարակությունը «Հայ տպագրության նախապատմություն» (ԵՊՀ հրատ., 2001) գրքույկն է, որ արժեքավոր ներդրում է հայ գրատպության նախապատմության, օտար հին հեղինակների ձեռագիր երկերում պահպանված հայերեն խոսքի և հայ գրատպության պարբերացման ասպարեզում:

Դժվար է ենթադրել, որ 1486 թվից այդ փորագրած հայերեն այբուրենը մնացել է անգործ մինչև 1512 թվականին հրատարակված հայոց առաջին «Ուրբաթագիրք»-ը:

Ինչպես արդեն նշել է Գ. Աբգարյանը. «Բրայդենբախի գրքում մի ամբողջ գլուխ նվիրված է հայերին, որոնք ներկայացված են որպես գիր ու գրականություն ունեցող քաղաքակիրթ ժողովուրդ. կնշանակի առաջին իսկ տպագիր գրքերում հայը Եվրոպային ներկայանում է որպես գրագետ, ստեղծագործ ազգ»<sup>5</sup>: Թեև վրացիների համայնքը նույնպես ներկա էր Երուսաղեմում, սակայն վրացերեն գրի բացակայությունն իր գրքում Բրայդենբախը բացատրում է այն հանգամանքով, որ վրացիները «Եկեղեցական արարողությունների ժամանակ գործածում են հունարեն լեզուն ու բարբառը, իսկ մյուս դեպքերում՝ սարացիներենը և քաղղեներենը (նկատի ունի արաբերենն ու ասորերենը)»<sup>6</sup>:

Գ. Աբգարյանի աշխատությանը ծանոթանալիս երախտագիտությամբ տեղեկացա, որ մեր նշանավոր հայագետը հայ գրքի տպագրության շատ կարևոր հարցեր լուսաբանելու և ճշգրտելու հետ միասին անուշադիր չի եղել նաև Հայաստանում բրայլյան տպագրության սկզբնավորման հարցին, որին մինչ այդ նշանակություն չեն տվել Հայաստանում հայերեն տպագրությամբ զբաղված հետազոտողները. «Տեսողությունից զրկված հայերը, նկատում է նա,- հավերժ երախտապարտ են հայագետ Ալբերտ

<sup>5</sup> Աբգարյան Գ., Հայ տպագրության նախապատմություն, Երևան, 2001, էջ 12:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 17:

Մուշեղյանին, որի կազմակերպած ուռուցիկ տառերով տպագրությամբ հնարավոր դարձավ կարդալ Չարենցին, Իսահակյանին, Հայնեին և այլոց: 1956 թ. կազմակերպված այդ բրայլյան տպագրությամբ այժմ գոյություն ունի մի ամբողջ հայ գրականություն, որի տառերը մեսրոպյան չեն: 1875 թ. Բրինգտոնում լույս տեսան դոկտոր Մուրի ձեռքով հայերի համար ուռուցիկ տառերով տպագրված անդրամիկ հայերեն բնագրերը՝ 34-րդ և 86-րդ սաղմոսներից հատվածներ, որոնց շնորհիվ դոկտոր Մուրի անունը երախտագիտությամբ պետք է հիշվի հայոց պատմության մեջ (որքան մեզ հայտնի է, այս երախտավորի անունը հիշվում է առաջին անգամ մեր սույն հոդվածում, այնինչ հայ գրքի պատմության մասնագետները պարտավոր էին նրան առանձին տեղ հատկացնելու)»<sup>7</sup>: Ի լրումն ասվածի, պետք է նշեն, որ նույն այդ 1956 թվականին իմ պարտքը համարեցի ուռուցիկ գծագրությամբ հրատարակել նաև մաշտոցյան ձեռագիր և տպագիր փոքրատառ ու մեծատառ այբուբենը:

405 թվին ստեղծված մաշտոցյան այբուբենը շարունակեց իր հաղթական ընթացքը դարերի միջով և իր հազարամյակը բոլորեց հենց այն դարում, երբ տեղի ունեցավ Գոտենբերգի տպագրության գյուտը, իսկ Բրայդենբախի գրքի շնորհիվ հայոց գիրը իբրև առաջիններից մեկը ներկայացվեց եվրոպացի բազմազգ ընթերցողներին:

\*  
\* \* \*

Եվրոպայի կենտրոնում՝ Բավարիայի Վյուրցբուրգ քաղաքի Արքեպիսկոպոսական դրյակում (կառուցված 1719–1744 թթ.), ընդարձակ շքանուտքի գրեթե 700 քառ. մետր մակերեսով առաստաղին իտալացի որմնանկարիչ Ջիովաննի Բատիստա Տիեպոլոն (Վենետիկ) 1752–1753 թվերին նկարել է մի համայնապատկեր, որ ներկայացնում է չորս աշխարհամասերը (Ասիա, Աֆրիկա,

---

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 35:

Եվրոպա և Ամերիկա) և համաշխարհային պատմությունը՝ հեթանոս աստվածներից մինչև քրիստոնեության դարաշրջան: Պատվիրատուն էր գերմանացի արքեպիսկոպոս Կարլ Ֆիլիպ ֆոն Գրայֆենկլաուն, որ 1749–1754 թվերին Եպարքիայի ազդեցիկ աթոռակալն էր: Ասիայի մի հատվածում ողորկ սալաքարի առջև, որի վրա չորս շարքով փորագրված են 43 հայկական ձեռագիր տառեր (այբուբենի 38 տառերից մի քանիսը կրկնված են), նստած է հայոց այբուբենի համճարեղ արարիչ Մեսրոպ Մաշտոցը՝ պատկառելի մորուքով և լայնեզր գլխարկով, ձախ ձեռքին վառվող ջահ: Ինչպես հաղորդում է Գերմանիայից մեր հայրենակից Արամ Սկրտչյանը, 1965 թվին որոշ ուսումնասիրողներ հայտարարեցին, թե վերոհիշյալ որմնանկարի վրա պատկերված են մեհենագրեր, բայց 1988 թվականին Վյուրցբուրգի Արքեպիսկոպոսարանը պաշտոնապես հայտարարում է, որ տառերը հայկական են:



1996 թ. աշնանը Մաշտոցի Մատենադարանի ձեռագիր բժշկարանների և հայ բժշկագիտության պատմության ճանաչված մասնագետ Ստելլա Վարդանյանը հրավեր ստացավ մասնակցելու գերմանական Վյուրցբուրգ քաղաքի համալսարանի բժշկագիտության ինստիտուտի գիտական նստաշրջանին: Տիեպոլոյի ստեղծած որմնանկարից հուզված բժշկագետը գրում է. «Ո՞ր հայ սիրտը չէր ցնցվի հուզումից, տեսնելով իր ազգի

սրբությունը Եվրոպայի կենտրոնում, հայրենիքից հեռու, աշխարհահռչակ իտալական վարպետի որմնանկարի վրա...» և փորձում է յուրովի պատասխան գտնել այն հարցին, թե ինչու՞ են Տիեպոլոն և նրա պատվիրատու Գրայֆենկլաուն բոլոր ասիական այբուբեններից կանգ առել միայն հայկականի վրա<sup>8</sup>:

Մաշտոցի ձեռքին վառվող ջահը խորհրդանշում է քրիստոնեական քաղաքակրթության լույսը: Եվ իսկապես, ինչո՞վ բացատրել Տիեպոլոյի կերտած համայնապատկերի վրա Մեսրոպ Մաշտոցին և հայոց այբուբենին տրված այդքան բարձր խորհրդանշական գնահատականը՝ այս հարցին տրվել են տարբեր մեկնաբանումներ: Իմ կարծիքով, պատասխանը միայն մեկն է: 1711 թվականից Վենետիկի մերձակա սուրբ Ղազար կղզում մեծանուն Մխիթար Սեբաստացու հիմնած միաբանությունը սկսեց աննախադեպ գործունեություն ծավալել բազմադարյան հայ ձեռագիր մատյանների տպագրության ուղղությամբ, որի շնորհիվ հարյուրավոր օրինակներով բազմացվում և Եվրոպայով մեկ տարածվում էին վաղ միջնադարում հայերեն թարգմանված հույն, լատին, ասորի, եբրայեցի և այլազգի հին հեղինակների ձեռագիր մատյանները: Հայերեն թարգմանված այդ բազմալեզու երկերի տպագրությունը ցույց տվեց, թե ինչպիսի՞ մեծ ծառայություն են մատուցել հայոց լեզուն և մաշտոցյան գիրը մյուս ազգերին՝ V դարից սկիզբ առնող իր դարավոր թարգմանական գործունեությամբ: Նախ, հայերեն թարգմանություններից պարզվեց, որ այլալեզու բնագրերի զգալի մասը չի պահպանվել մայրենի լեզվով և այդ երկերը զոյություն ունեին միայն հայերեն, ինչպես հույն փիլիսոփա Արիստոտելի «Ստորոգութիւնք» տրակտատը, Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակականք» («Քրոնիկոն») պատմական երկը, նշանավոր պատրիարք Հովհան Ոսկեբերանի բազմաթիվ ճառերը, IV դարի աստվածաբան Եփրեմ Ասորու մեկնությունները,

---

<sup>8</sup> Վարդանյան Ս., Տիեպոլոն և Հայաստանը, «Հանդես ամսօրեայ», 1999, թիվ 11-12, էջ 469-502:

Փիլոն Եբրայեցու «Յաղագս կենդանեաց» և այլ տրակտատներ, ինչպես և այլ հեղինակների մատյաններ:

Այս պատճառով Վենետիկի մխիթարյանները, որոնք քաջահմուտ էին լատիներենի և հունարենի մեջ, սկսեցին ոչ միայն հրատարակել հայերեն թարգմանությունները, այլև դրանք հայերենից թարգմանել լատիներեն ու հունարեն և այդպիսով հնարավորություն տալ տարբեր ազգերի բանասերներին՝ վերականգնելու կորած երկերի մայրենի բնագրերը: Նույնիսկ այն դեպքում, երբ օտարալեզու բնագրերը պահպանված էին, դրանց հայերեն թարգմանությունները միջոց էին տալիս բաղդատելու և շտկելու աղավաղված տեղիները կամ լրացնելու դարերի ընթացքում կորած մասերը: Ակնհայտ է, թե միջազգային հանրությունը տպագրության զարգացման շրջանում ինչպես պիտի արժևորեր Մաշտոցյան հայոց այբուբենի անգնահատելի դերը հին ձեռագիր բազմազգ մատյանները կորստից փրկելու գործում: Այս ամենին քաջատեղյակ լինելով՝ վենետիկցի նշանավոր որմնակարիչ Տիեպոլոն իր պատվիրատու Գրայֆենկլաուի համաձայնությամբ, այդ համամարդկային ծառայության համար համայնապատկերի վրա ներկայացրել է Մաշտոցին՝ ձախ ձեռքին վառվող ջահ բռնած, քրիստոնեական քաղաքակրթության լույսը տարածող ռահվիրայի կերպարով:

Տիեպոլոն, անշուշտ, իր հայրենի Վենետիկում՝ սուրբ Ղազար կղզու Մխիթարյան միաբաններից տեղեկացել էր հայոց այբուբենի հանճարեղ արարիչ Մեսրոպ Մաշտոցի մասին, որն, ըստ ավանդության, Բալախովիտ գավառում, Արածանի գետի աջ ափին բարձրացող լեռան վրա, փորագիր արձանագրություններով ծածկված վեմի առաջ յոթ շաբաթ տքնելով, ամբողջացրեց հայոց այբուբենը՝ լրացնելով պակասող 14 նշանագրեր, ինչպես վկայում է XIII դարի հայ պատմիչ Վարդան Արևելցին: Եվ այժմ, Եվրոպայի կենտրոնում վեր խոյացող դրյակում, ընդարձակ շքամուտքի առաստաղին վերստեղծել է հենց այդ պատկերը. «Ի հինգերորդ ամին սորա (Վռանշապուռի հայոց թագավորի – Ա. Մ.) և յա-

ռաջին ամին Արտաշրի որդւոյ Շապիոյ՝ սուրբն Մեսրոպ յօրինէ դպրութիւն հայերէն. քսան և երկու գիր առ Դանիելի Ասորւոյ գտեալ 'ի հին ժամանակաց, որ վասն ոչ պարզելոյն զընդարծակութիւն լեզուիս, անհոգացեալ եղև յառաջնոցն, յոյն և ասորի և պարսիկ գրով շատացեալք. և ոչ Մեսրոպ կարէր նոքօք փոխել զաստուածաշունչ մատեանս 'ի հայ բարբառ: Վասն որոյ աղօթից տուեալ զանձն գործակցութեամբ սրբոյն Սահակայ, տայ նմա Աստուած զխնդրելին, չորեքտասան գիրս, աջով իւրով դրոշմեալ առաջի նորա որպէս մեծին Սովսեսի 'ի լեառն Սինայ, և սմա 'ի լեառն Բալուայ, որպէս տակաւին ցուցանի դրոշմն աստուածագիծ վիմին և նկարք գրերոյն, և պատուի տեղին խնկօք և քահիւք միշտ 'ի (Տաճկաց և քրիստոնէից) բնակչաց տեղւոյն: Եւ զի լեալ է հայերէն գիր հնոցն՝ վկայեցաւ 'ի ժամանակս Լևոնի արքայի, զի գտաւ դրամ 'ի Կիլիկիա, հայերէն գրով դրոշմեալ զանուն կռապաշտ թագաւորացն Հայկազանց...»<sup>9</sup>:

Իրավացի է բժշկագետ Ս. Վարդանյանը, ենթադրելով, որ Տիեպոլոն Մաշտոցյան ձեռագիր տառերն ընդօրինակելու համար ձեռքի տակ ունեցել է 1690 թվականին Ամստերդամում հրատարակված «Մասսեաց աղանի» խորհրդապատկերը՝ Մասիս լեռան համայնապատկերի վրա դրոշմված հայոց այբուբենի հնատիպ մի օրինակով՝ 38 ձեռագիր տառ լատիներեն անվանումներով<sup>10</sup>: Այստեղ, ինչպես Տիեպոլոյի որոնմանկարում, հայոց այբուբենի գրերը ներկայացված են իրենց ձեռագրային յուրահատուկ ձևերով և դասավորված են հինգ շարքով<sup>11</sup>:

Բայց Մաշտոցյան հայոց տառերը համաշխարհային քաղաքակրթության լույսի խորհրդանիշ հռչակվող ժամանակներին հաջորդել են նաև դժվարին էտապներ: Ամփիճելի է, որ խորհրդային շրջանում գիրքն ու գրականությունը մեծ ծաղկում ապրեցին՝

<sup>9</sup> Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 49–50:


<sup>10</sup> Boghossian Sarkis, Iconographie arménienne, Paris, 1987.

<sup>11</sup> Վարդանյան Ս., նշվ. աշխ., էջ 482:

շնորհիվ սոցիալիստական ռեալիզմի, կուսակցական գաղափարախոսությամբ տոգորված «ծևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական» նշանաբանի, բայց այդ ընթացքում լուրջ փորձության ենթարկվեց Մաշտոցյան հայոց այբուբենը, որն ավելի քան 5 դար առաջ էր ստեղծվել, քան սլավոնական կիրիլիցան: Թեև XV դարի կեսերից տպագրության գործն առաջին անգամ ընկավ մամլիչի տակ, բայց այդ մամլիչը տեխնիկական էր, այլ ոչ քաղաքական և, մանավանդ, ոչ կուսակցական: Այս կապակցությամբ նորից մտաբերենք այն պահը, երբ գերմանացի Բրայդենբախը և հոլանդացի Ռոյվիխսն անսպասելի հայտնվեցին հայոց Սրբոց Հակոբյանց միաբանությունում: Իհարկե, նրանք իրենց գործի դյուրության համար կարող էին գայթակղիչ առաջարկ անել հայ միաբաններին՝ անցնելու լատինատառ գրի գործածության, մանավանդ շատ ավելի շահեկան կլիներ էժան գնով ձեռք բերել պատրաստի լատին տպատառեր և դրանք հարմարեցնել հայոց լեզվով գրքեր տպագրելուն: Բայց հայ հոգևորականները հավատարիմ էին դարերով սրբագործված իրենց գրին:

Սրան հակառակ, 1921–1922 թթ. Խորհրդային Հայաստանի ներքին գործերի և լուսավորության ժողկոմ Պողոս Մակինցյանը մոսկովյան «բայլշևիկների» պատվերով առաջարկում էր մաշտոցյան գրի փոխարեն հայոց լեզվին հարմարեցնել լատիներեն տառերը, և հենց այդ իրագործելու նպատակով ձեռնարկվեց մաշտոցյան դասական ուղղագրության չարաբաստիկ ռեֆորմը, և դա այնքան մեծ հարված հասցրեց դասական ուղղագրությանը, որ հետագայում կատարված բարեփոխումները չշտկեցին վիճակը, իսկ ինքը՝ Պ. Մակինցյանը, ցավալիորեն չխուսափեց 1938 թ. գնդակահարման դիվային վճռից:

Եվս մի ուշագրավ դրվագ. 1968 թ. ՄԱԿ-ն օրինագիծ ընդունեց երթևեկության միասնական միջազգային նշաններ սահմանելու մասին և այդ կապակցությամբ առաջարկվեց ամբողջ աշխարհում երթևեկության ցուցանակներում գործածել միայն հայկական տառեր:



Քանի որ ՄԱԿ-ի անդամ մեծ ազգերի գործածած այբուբենները լատինականն ու սլավոնականն էին, ապա այդ առաջարկը նպատակ էր հետապնդում զոնե միջազգային երթևեկության ճանապարհները դուրս թողնել մեծ տերությունների գաղափարական ազդեցության գոտիներից: 1971 թ. օգոստոսի 26-ին ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի սուսնդարտների պետական կոմիտեի որոշմամբ բոլոր հանրապետությունների ներքին գործերի մինիստրություններին հրահանգ իջեցվեց՝ իրենց կարծիքը հայտնել հայկական տառերը միջազգային երթևեկության ցուցանակներում գործածելու ՄԱԿ-ի առաջարկի մասին: Սակայն վերջնական որոշմամբ ՄԱԿ-ը չընդունեց այդ առաջարկությունը: Այդ որոշմանը դեմ արտահայտվեցին մեր հայրենի խորհրդային Միությունը՝ իր արբանյակներով և Թուրքիան:

## ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՃՈՐՐՈՇ ԴԵՐԸ

Պետությունը, որպես հասարակության պաշտոնական ներկայացուցիչ և ղեկավար ուժ, ունի ոչ միայն հարկադրանքի գործառույթ, այլև հասարակության ընդհանուր գործերի կառավարումն ապահովող, այդ թվում՝ մշակութային գործառույթ: Հայաստանի նորաստեղծ խորհրդային հանրապետության առաջին լուսավորության ժողկոմ Աշ. Հովհաննիսյանի ստորագրությամբ հրապարակվեցին հայոց լեզուն պետական ճանաչելու, անգրագիտությունը վերացնելու, պետական հրատարակչություն կազմակերպելու, կուլտուր-պատմական ինստիտուտի ստեղծման, Երևանի հեղափոխության թանգարանի հիմնադրման և այլ դեկրետներ, որոնք բացառիկ ներգործություն ունեցան ժամանակակիցների վրա ինչպես երկրում, այնպես էլ երկրից անդին:

Խորհրդային Հայաստանի ղեկավարության (Ս. Կասյան, Ալ. Մյասնիկյան, Աշ. Հովհաննիսյան, Ս. Լուկաշին) անմիջական ջանքերի շնորհիվ է նաև, որ հայրենիք վերադարձան հայ մշակույթի բազում ճանաչված դեմքեր՝ պատմաբաններ Լեոն և Հակոբ Մանանդյանը, գրողներ Ալեքսանդր Շիրվանզադեն, Դերենիկ Դեմիրճյանը, Ավետիք Իսահակյանը, կոմպոզիտորներ Ալեքսանդր Սպենդիարյանը, Ռոմանոս և Սպիրիդոն Մելիքյանները, Նիկողայոս և Արմեն Տիգրանյանները, գրականագետներ Մանուկ Աբեղյանը, Ստեփան Մալխասյանցը, Պողոս Մակինցյանը, ճարտարապետներ Ալեքսանդր Թամանյանն ու Թորոս Թորամանյանը, նկարիչներ Մարտիրոս Սարյանն ու Ստեփան Աղաջանյանը և շատ ուրիշներ: Խորհրդային Հայաստանի առաջին ղեկավարները պետական հոգատարություն են ցուցաբերել հայ մշակույթի նշանավոր դեմքերին աշխատանքի տեղավորելու և ընձեռնված հնարա-

վորությունների սահմաններում անհրաժեշտ կենցաղային պայմաններ ստեղծելու ուղղությամբ: Ուշագրավ է, որ Ալեքսանդր Մյասնիկյանի առաջարկությամբ Խորհրդային Հայաստանի կառավարությունը Երևանից Էջմիածին տանող ճանապարհին՝ Նորագյուղ կոչվող թաղամասում երեք հեկտար այգի է տրամադրում հայ նոր բանաստեղծության ռաիվիրա Հովհաննես Հովհաննիսյանին: Բանաստեղծին շատ մտերիմ Աշ. Հովհաննիսյանը պատմում էր, որ այդ այգին մինչև 1929 թվականը (մինչև բանաստեղծի մահը) դարձել էր հայ մտավորականության ամենասիրելի հավաքատեղին:

Հայ ժողովուրդը մտավոր և նյութական մշակույթի մշտամնա արժեքներ է ստեղծել քաղաքակրթության ողջ ընթացքում՝ յուրաքանչյուր դարաշրջանում մարմնավորելով ժամանակի մտածողությունը, մարդկային մտավոր առաջընթացի ձեռքբերումները: Յուրաքանչյուր նոր սերունդ պետք է կարողանա պատմությունը գնահատել պատմականության դիրքերից:

Տարաբախտաբար Հայաստանի երրորդ հանրապետության հատկապես 1990-ական թվականների Հայոց համազգային շարժման (ՀՀԸ) որոշ ղեկավարներ սկսեցին յուրահատուկ «խաչակրաց արշավանք» մեծ մասամբ Խորհրդային ժամակաշրջանում ստեղծված մշակույթը ոչնչացնելու կամ լավագույն դեպքում՝ նենգափոխելու համար: Նրանք չկարողացան գիտակցել, որ պատմության ոչ մի դարաշրջան հայ ժողովրդի մշակութային սլացքի այնպիսի անանց արժեքներ չի պարզևել, որքան Խորհրդային Հայաստանի յոթ տասնամյակը, ժամանակաշրջան, որի ընթացքում կերտվեց մի մշակույթ, որն իրենից ներկայացնում է ազգային և համամարդկային, ամեն մի առաջադիմականի փոխհարստացմամբ սինթեզված հոգևոր արժեքների օրգանական միաձուլվածք: Այդ ժամակաշրջանի մեր գրականությունը, երաժշտությունը, կերպարվեստը, ճարտարապետությունը, թատերական արվեստը գերում էին իրենց մարդասիրությամբ. ազգային գաղափարաբանությամբ, աշխարհընկալման բազմազանությամբ և գեղարվեստական հարստությամբ: Դա մի մշակույթ է,

որը, բարձրանալով ազգային ավանդույթների հենքի վրա, իր համամարդկային բովանդակությամբ արժանանում էր օտարագրի գիտակ և անկողմնակալ մասնագետների բարձր գնահատականին: Նրանք տեսնում էին, որ դարեր շարունակ լեռնաշխարհի քարից տաճարներ, ամրոցներ և կամուրջներ կերտած հայ վարպետների կառուցողական մուրճն ավելի արդյունավետ է գործում: Այդ մուրճով կյանքի էին կոչվում ազգային վերածնությունը հաստատող նոր քաղաքները, ավանները, գյուղերը, գործարանները, ջրանցքներն ու էլեկտրակայանները, թանգարաններն ու հուշարձանները: Տառչացիորեն մեկ սերնդի աչքի առաջ բարձրացավ նոր Երևանը՝ իր թաղամասերով, վարչակառավարական բազուն կոթողային շենքերով, բնակելի զանգվածներով:

Պետությունը մարդկանց ճաշակի բարձրացման ուղղությամբ բոլոր միջոցներն օգտագործում էր, որպեսզի հայ ազգային մշակույթը դառնա յուրաքանչյուրի սեփականությունը և արտահայտվի ամենից առաջ հայեցի դաստիարակության մեջ, կենցաղում, ուսման ու կրթության ոլորտներում, բնավորության ու հոգեբանության առանձնահատկություններում: Ազգային առանձնահատկությունները, ազգային ձևերը, պետական ծրագրված քաղաքականության շնորհիվ, չէին անհետանում, մաշվում, համակրթվում, այլ անընդհատ զարգանում ու կատարելագործվում էին՝ կրելով ժողովրդի վերընթացի պահանջմունքներից բխող փոփոխություններ:

Մինչև Հայաստանի Հանրապետությունում խորհրդային կարգերի հաստատումը, հայկական գրահրատարակչական գործը ընթանում էր հիմնականում հայրենիքից դուրս՝ օտար երկրներում: XIX դարի սկզբից առանձնապես Արևելահայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո, Հայկական մարզում հայկական տպագրության միակ կենտրոնը էջմիածինն էր: Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո՝ 1921 թ., Երևանում կազմակերպվում է պետական հրատարակչություն (Հայպետհրատ), որն ստանձնում է տարբեր բնույթի գրքերի խմբագրման և հրատարակման գործը: Ուշագրավ է նաև, որ 1920-ական թվականների

սկզբից տպագրությունն ու տպարանն անջատվում են հրատարակչությունից: Տպարանը դառնում է պետական պատվեր իրականացնող արդյունաբերական-արտադրական ձեռնարկություն: 1964 թ. Հայպետհրատը վերանվանվեց «Հայաստան»: 1955 թ. Հայրետհրատից առանձնացավ «Հայպետմանկիրատ» (հետագայում՝ «Լույս»), իսկ 1976 թ. «Սովետական գրող» հրատարակչությունը: Վերջինս միայն 1983 թ. լույս է ընծայել 280 անուն գիրք՝ ավելի քան 4 միլիոն տպաքանակով:

Խորհրդային Հայաստանում գործում էին նաև այլ հրատարակչություններ՝ Երևանի պետական համալսարանի, Հողժողովմատի, Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի, «Գիտելիք» ընկերության, ՀԽՍՀ ԳՎ-ի և այլն: 1967 թ. սկսեց գործել Հայկական Սովետական Հանրագիտարանի գլխավոր խմբագրությունը, իսկ 1987 թ. ստեղծվեց մանկապատանեկան «Արևիկ» հրատարակչությունը:

1970-ական թվականներին Խորհրդային Հայաստանում գործում էին տասնյակ տպարաններ, 20-ը՝ միայն Երևանում: Տպարաններ էին գործում հանրապետության բոլոր շրջաններում ու քաղաքներում:

Խորհրդային Հայաստանի գոյության յոթ տասնամյակում հանրապետությունում տպագրվել է ավելի քան 70 հազար անուն հայերեն գիրք ու գրքույկ՝ շուրջ 300 միլիոն տպաքանակով: Չափազանց բարձր էր հրատարակվող գրքերի տպաքանակը: Խոսենք թվերի լեզվով: Հայ-ռուսերեն մեկհատորյա բառարանը տպագրվել է 60 հազար օրինակով, Պարույր Սևակի վեցհատորյակը՝ 50.000, Ջոն Կիրակոսյանի «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» երկհատորյակը՝ 20.000, մույնի ռուսերենը մեկ գրքով՝ 50.000, Համո Սահյանի բանաստեղծությունների երկհատորյակը՝ 30.000, Հայկական Սովետական Հանրագիտարանը՝ 100.000, Հայ դասականների գրադարանը՝ 51.000, Վահան Թոթովենցի երկերը երեք գրքով՝ 50.000, Հայ ժողովրդի պատմության ութհատորյակը՝ 12.000, Եղ. Ջրբաշյանի գրականագի-

տական բառարանը՝ 20.000, Հայկական խոհանոցը (ռուսերեն)՝ 50.000, «Հայաստանի արվեստը» ալբոմը՝ 30.000, Պլուրտարքոսի երկերը՝ 30.000, Գևորգ Դևրիկյանի «Գոյամարտ» վեպը՝ 20.000, Սերգեյ Սարինյանի «Հայկական ռոմանտիզմ» մենագրությունը՝ 25.000, Անատոլի Ռիբակովի «Արբատի զավակները»՝ 50.000 և այլն: «Սովետական Հայաստան» օրաթերթի տպաքանակը 1980-ական թվականներին հասնում էր 300.000-ի: «Պատի օրացույցը» տպագրվում էր 1.000.000 օրինակով և արագ իրացվում:

Իսկ ինչպիսին է վիճակն այսօր: Հողվածը թվերով չծանրաբեռնելու համար նշենք միայն, որ վերջին քսան տարում 10.000 տպաքանակով ոչ մի գիրք չի տպագրվել (բացառությամբ դպրոցական դասագրքերը): Խորհրդային տարիներին գրականության նկատմամբ պահանջարկն այնքան մեծ էր, որ գրքի պետական և կոոպերատիվ առևտրի մեծածախ ապրանքաշրջանառությունը 1965 թ. կազմում էր 4 միլիոն 400 հազար ռուբլի (ռուբլու փոխարժեքը դոլարից բարձր էր), 1970 թ.՝ 6 միլիոն, 1985 թ.՝ 18,5 միլիոն, 1989 թ.՝ 27 միլիոն 800 հազար ռուբլի: Միայն պետական հոգատարության շնորհիվ էր, որ Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանի ֆոնդը 1989 թ. հասավ 6 միլիոն միավորի, իսկ ՀԽՍՀ ԳԱ հիմնարար գրադարանինը՝ ավելի քան 2 միլիոն 600 հազար միավորի: Հիմնարար գրադարանը կապեր էր պահպանում արտասահմանյան 50 երկրների 620 գրադարանների հետ: Ցավոք, 1991 թ. սկսած գրադարանի գրքային ֆոնդը, ֆինանսական անհրաժեշտ միջոցների բացակայության պատճառով, շատ քիչ է համալրվում նույնիսկ Ռուսաստանի Դաշնության կարևորագույն հրատարակություններով:

Աննախընթաց մեծ պահանջարկի հետևանքով անընդհատ ընդլայնվում էր գրավաճառ ցանցը: 1980-ական թվականների կեսերին «Հայգիրք» միավորումը միայն երևանում ուներ 65 գրախանութ: 1986–1989 թթ. մայրաքաղաքի գրասերների առջև իրենց դռները բացեցին ևս 9 գրախանութ, այդ թվում՝ «Խաչատուր Աբովյան», «Հովհաննես Շիրազ», «Բարեկամություն»

գրատները, որտեղ կազմակերպվում էին նաև գրքի ցուցահանդեսներ, գիտագործնական սեմինարներ: 1980-ական թվականներին գրատներ բացվեցին նաև Լենինականում, Կիրովականում, Չարենցավանում, Ջերմուկում և այլուր: Դրանցից այսօր չի գործում և ոչ մեկը:

Որպեսզի համեմատության և հակադրության ցուցանիշներով շատ չժանրաբեռնենք հոդվածը, նշենք միայն, որ այսօր գրքի նկատմամբ պետական հովանավորության բացակայության պայմաններում, բոլոր հրատարակությունների համախառն տպաքանակը տարեկան չի անցնում 200.000-ի սահմանը:

Խորհրդային ժամանակաշրջանի հայկական պետականությունը մեծ ուշադրություն էր դարձնում ռուս գրականության դասականների և ժամանակակից գրողների երկերի թարգմանությանը: Եվ դա օրինաչափ էր: Մշակույթի զարգացման ղեկը վարողները գիտեին, որ հայ ժողովուրդը միշտ էլ ակնածանքով է մոտեցել ռուս ժողովրդի մշակութային արժեքներին, նրա գրականության և արվեստի գանձերին, հումանիստականը, գեղեցիկն ու բարոյականը դրվատող, ստորությունն ու ընչաքաղցությունը մերկացնելու ռուսական մտքի հսկաններին: Հատկանշական է, օրինակ, որ «Հայգիրք» միավորումը 1980-ական թվականների վերջերին, թեմատիկ պլանների մշակման պատվերների հիման վրա, Խորհրդային Միության կենտրոնական հրատարակչություններից տարեկան ստանում էր 3,5–4 միլիոն կտոր (11–12 միլիոն ռուբլու) գրականություն: Մինչդեռ շատ շուտով ամեն ինչ այստեղ էլ գլուխն ի վար փոխվեց:

Հայաստանի երրորդ հանրապետության, 1990-ականների հենց սկզբից, Հայոց համազգային շարժման կառավարիչները մշակութային ավերածությունները, բարեփոխումների անվան տակ, կատարում էին ծրագրավորված ու կանոնակարգված՝ հայ մշակույթը ոչ միայն զրկելով պետական հովանավորությունից, այլև այն ենթարկելով պետական ահաբեկչության: Ավերումի գործընթացը հատկապես գրահրատարակչության մարզում առավել ցցուն դարձավ այն բանից հետո, երբ 1991 թ. վերջերին

Հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի նախագահ նշանակվեց Կարեն Ա. Սիմոնյանը: «Հայաստանում ռուսերեն լեզվով ոչ մի գիրք չպետք է տպագրվի, իսկ առանց իմ գիտության «Սոյուզնիզմիցայից» ոչ մի գիրք հանրապետությունը չպետք է ստանա»՝ իր գլխավորած կոլեգիայի առաջին իսկ նիստում հայտարարեց «Լիտերատուրնայա Արմենիա» ռուսերեն ամսագրի երբեմնի խմբագիրը: Ինչպես և պետք էր սպասել, բախտախնդիր նախագահի խելացնոր պահանջադրումները հանդիպեցին կոլեգիայի անդամների մի մասի խիստ քննադատությանը: Նիստի ավարտից հետո պարոն նախագահն իր ընդդիմադիրներին ուղղակի սպառնաց՝ «Եթե դուք շարունակեք ինձ հետ խոսել հակադրվելու տոնով, ապա այս համակարգում մեր համատեղ աշխատանքը բացառվում է: Վարչապետ Վազգեն Մանուկյանն ինձ ուղարկել է այստեղ, որպեսզի ապամոնտաժեմ խորհրդային պետական հրատարակչությունը, պոլիգրաֆիան և վերացնեմ գրքի պետական առևտուրը: Հասկացա»: Տիրահաճ հանձնակատարը «Հայաստան» հրատարակչության դիրեկտոր Հրանտ Ղազարյանի և տողերիս հեղինակի կողմից (ես այդ ժամանակ «Հայգիրք» միավորման վարչության պետն էի) բառացիորեն որակվեց որպես «խելագար»: Սակայն դրանից ի՞նչ օգուտ... ոչ մի: Խելագար հանձնակատարը շուրջ երկու տարի շարունակեց իր ավերիչ գործունեությունը, իսկ հետո փախավ Փարիզ....

Դա մի ժամանակաշրջան էր, երբ վերադասի, թեկուզ և անհեթեթ, որոշումները չկատարելու համար մարդիկ անհապաղ մեկուսացվում էին, կադրերի ջարդն իրոք ծրագրավորված պետական քաղաքականություն էր, քաղաքականություն, որի հետևողական կենսագործմամբ արագորեն քայքայվում էին ոչ միայն պոլիգրաֆիան և գրահրատարակչությունները, այլև մշակութային գրեթե բոլոր հիմնարկները, որոնք կայացել էին սերունդների միջնակարգ աշխատանքով:

Ձգտելով նսեմացնել, իսկ հաճախ էլ լիովին ժխտել հայ մշակույթի առաջընթացն ապահովող խորհրդային ժամանակաշրջա-

նի փորձը՝ Հայաստանի երրորդ համրապետության գաղափարախոս «խորհրդագետները» օգտագործում էին բուլոր միջոցները ծուռ հայելու մեջ ներկայացնելու իրականությունը՝ խորհրդային պետական մշակութային քաղաքականությունը: Կեղծարարների համար ավելի տարածված եղանակներ էին՝ հայ ազգային մշակութի հակադրումը խորհրդային ինտերնացիոնալիստականին, ազգային ձևը՝ սոցիալիստական բովանդակությանը, ինտերնացիոնալիստական գործընթացում հայ ազգային մշակութի ուծացումը ազգային-պահպանողական արժեհամակարգին: Ամենակոպիտ ձևով նենգափոխելով հայ ազգային մշակութի զարգացման խորհրդային պատմաշրջանի վերընթացը՝ վերջինիս վերագրում էին այնպիսի գծեր, որոնք իբր տանում էին ազգային կորստյանն ու դուրս մղմանը, ռուսական մշակութի կողմից հայ ազգային առանձնահատկությունների վերացմանը և, ի վերջո, կլանմանը:

Իսկ ի՞նչ կատարվեց ազգային մշակությը «հանգումից» փրկելու համար: Հայ մշակութի «անկախության» ջատագովները դա տեսան պարզունակ գվարճությունների և կեղծ գեղարվեստական ձևերի մեջ զգեստավորված՝ ժամանակակից էլեկտրոնային տեխնիկայի վրա «մասայական կուլտուրան» (զանգվածային մշակությը) խորհրդային ինտերնացիոնալիզմի «ախտով» վարակված ժողովրդին ներարկելու մեջ, մի մշակույթ, որը, նրանց կարծիքով, այն համամոլորակային «սուպերկուլտուրան» կարող է դառնալ, որը սկզբնական շրջանում ի վիճակի է «խլացնել», իսկ ժամանակի ընթացքում դուրս մղել ազգայինը և տարածաշրջանայինը: Շուտով հայ «ժողովրդավարների» մշակութային քաղաքականությունն ի հայտ բերեց իր արդյունքը: Եթե տակավին ոչ հեռու անցյալում, խորհրդային պետականության մշակութային քաղաքականության պայմաններում, «մասայական կուլտուրան» մշակութի «զանգվածային թափոն» էր դիտվում, ապա այն հետագայում արձակ ու համարձակ տիրապետող դիրքեր է գրավում և հավակնում ամբողջովին «մաքրել» խորհրդային ժամա-

նակների գաղափարներով «ստրկացված» հայ ժողովրդի հոգևոր աշխարհը:

Այսօր, տարաբախտաբար, կանգնել ենք կատարված իրողության առաջ: Խորհրդային Միության փլուզումից հետո այդ «մասսայական կուլտուրան», որն առաջին հերթին նեոհիմպերիալիզմի և նեոգաղութատիրության, նրանց ինտելեկտուալ բիզնեսի նպատակադրումների ստերեոտիպների հարազատ զավակն է, ստիպում է, որ տոտալ ներխուժման հարվածների տակ հայ ազգային գրականությունն ու արվեստը փախուստ տան Կրեմլի նման: Նրանք կինոթատրոններում, հեռուստատեսությամբ ցուցադրվող բազմասերիալ ֆիլմերին, դաժանությունն ու պոռնոգրաֆիան փառաբանող գրքերի ու պարբերականների (հատկապես ամսագրերի) խորագրերին, ունիվերսալությամբ հարուստ և իմաստով մերկ գովազդներին և համերգ-շոուների հայտարարություններին տալիս են անկաշկանդ ճանապարհ: Դրանցում գեղոնիստական (հաճույքը կյանքի ամենամեծ բարիքն է) ֆունկցիան այն աստիճան է հիպերբոլացվում, որ դուրս է մղում մարդկային ազնիվ ներուժի հնարավոր դրսևորման գործնական ցանկացած ընթացք: Եվ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև «մասսայական կուլտուրայի» հանգստաժամանցային բնույթը պայմանավորված է նրա արժեքների ամբողջ համակարգով, որի հիմքում ընկած է մերկ շահը և սպառողական իրատեսությունը: «Մասսայական կուլտուրան» ընթերցողից և լսարանից չի պահանջում ինտելեկտուալ ջանքեր, մտքի լարում, այն տաք մի լուգանք է, որտեղ բուրժուական լիբերիալիզմի ջատագովներն առաջինն իրենք են կտրում ազգային պետականության երակը: Անկախության հռչակումից ի վեր Հայաստանի Հանրապետությունում չի տարվել ազգային մշակութային քաղաքականություն, չի հովանավորվել գրահրատարակչական գործը, չեն խրախուսվել գրողը, գիտնականը, արվեստագետը, մշակույթի այլևայլ բնագավառների գործիչները: Իմ՞չ անել:

Մտավոր մշակույթի դեգրադացիայի այս աղետալի կացությունից կարելի՞ է դուրս գալ: Կարելի է, եթե պետությունն ունենա

ազգային մշակույթի պահպանման ու զարգացման համապարփակ ծրագիր և այն իրականացնելու ռազմավարություն: Կարելի է, եթե ամենուրեք գերակայի ազգային ավանդույթների պահպանությունն ու քաղաքակիրթ օրենքները: Կարելի է, երբ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի ու բալետի պետական ակադեմիական թատրոնի, ինչպես նաև այլևայլ մշակութային համալիրների տարածքները, որպես փոխարժեք իրենց կատարած ծառայություններին, չտրամադրվեն «պետական» և «թաղային գործիչների»՝ սրժարանների, ռեստորանների ու գիշերային ժամանցի վայրերի վերածվելու համար: Կարելի է, եթե լրատվամիջոցները դադարեն կեղծիքի ամբիոն լինելուց, չեղած նվաճումները թմբկահարելուց և դառնան իրական կյանքը լուսաբանող, քննարկող և հանրության տեսակետներն արծանագրող միջոցներ. կարելի է, եթե «քաղաքական» և «պետական» գործիչները հավակնեն լուծել խնդիրներ, որոնց մեծամասնությունը գոյություն չէին ունենա, եթե իրենք իրենց հակազգային գործունեությանը չհարուցեին դրանք: Ավելին, նրանք փորձում են իրենց գործած անօրինականություններից ծնունդ առած իրավիճակը ներկայացնել որպես «անցման ժամանակշրջանին հատուկ գործոն», այլևս չենք խոսում այն մասին, որ կապիտալիզմի վայրենի ռեստավրացիան ընդհանուր առմամբ կոչում են «անցման ժամանակշրջան»:

Մենք ունենք այն խորին համոզմունքը, որ հնարավոր չէ կասեցնել երկրում 1990-ական թթ. մեկնարկած համընդհանուր, այդ թվում նաև բարոյամշակութային անկումը, առանց պետական կառավարման համակարգային փոփոխության, առանց իսկական ժողովրդավարության հաստատման:

## ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՏՊԱՐԱՆԸ

1605–1606 թթ. Շահ Աբասը տեղահանում է շուրջ 300000 հայերի և նրանց մի մասին բնակեցնում Սպահանի մոտ՝ Նոր Զուղա ավանում, որն այսօր Սպահանի մի թաղամասն է դարձել: Ժամանակին այնտեղ գործել է 13 եկեղեցի: Դրանցից մեկն էր Ս. Ամենափրկիչ վանքը, ուր վանքի առաջնորդ խաչատուր վարդապետ Կեսարացին (1590–1646) ծավալում է կրթամշակութային լայն գործունեություն<sup>1</sup>: Կիպրոսի Ս. Մակար վանքից նա սկզբում տեղափոխվում է Երուսաղեմ, այնուհետև՝ Կ. Պոլիս, Էջմիածին, իսկ 1620 թ.՝ Նոր Զուղա, ուր դառնում է հոգևոր առաջնորդ և Ս. Ամենափրկիչ վանքի վանահայր:

1636 թ. (որոշ աղբյուրներում՝ 1638 թ.) խաչատուր Կեսարացին հիմնում է Իրանի հայկական առաջին տպարանը<sup>2</sup>: Իր գործունեության ամենաեռուն շրջանում՝ 1636–1642 թթ., Կեսարացուն հաջողվել է հրատարակել չորս գիրք:

Առաջին գիրքը՝ «Սաղմոսը» (604 էջ), տպագրվել է 1638 թվականին՝ «ի քաղաքին Շօշ, յանապատին Զուղայոյ, ի թուին ՌՁ և Է, ձեռամբ նուաստ խաչատուր վարդապետի Կեսարացոյս, որ տարի մի և հինգ ամիս, որ զցայգ և զցերեկ անդադար աշխատիմք հանդերձ միաբան ուխտիս, զի ոչ եմք տեսեալ ի վարդա-

<sup>1</sup> Իշխանյան Ռ., Հայ գիրքը 1512–1920, Երևան, 1981 էջ 50, նաև Իշխանյան Ռ., Հայ հնատիպ գիրքը, Երևան, 1968, էջ 23, Սիրզոյան Հ., 17-րդ դ. հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Երևան, 1983, էջ 91, Արտ. եպ. Սմբատեան, Ս. Էջմիածնի միաբանութեան գրական-կրթական գործունեութիւնը և Մայր Աթոռի տպարանը, Էջմիածին, 1973, էջ 28, <http://team-aow.discuforum.info/t/5006.htm>, «Նորջուղայեցիների գործունեությունը Սպահանում և Եվրոպայում», «Հայաստանի ազգային ատլաս», հ. Բ, Երևան, 2008, էջ 155, «Հայկական Սովետական Հանրագիտարան», հ. 8, Երևան, 1982, էջ 386:

<sup>2</sup> Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 5, Երևան, 1979, էջ 23:

պետև և ոչ ունիմք ուսուցիչ, բայց միայն գիտգին Սուրբ ... և օժանդակ գործոյս հոգևոր որդեակք իմ վարպետ Յակոբճանն և տէր Յովհաննէս քահանայն և տէր Միքայէլն և Յովսէփն»<sup>3</sup>: Այսպես է իրականացվել «Սաղմոսի» հրատարակության դժվարին գործը:

Երկրորդ գիրքը՝ «*խորհրդատետրը*» (47 էջ), խաչատուր Կեսարացին տպագրել է «թիւ ՌՂ (1641)»-ին: «Ո՛վ սուրբ պատարագող, յիշեայ զԽաչատուր վարդապետս և գմայր իմ»<sup>4</sup>, - գրում է նա հիշատակարանում: Ենթադրելի է, որ մոր մասին հիշատակությունը կապված է նրա մահվան հետ: Ընդհանրապես խոսվում է տպագրական դժվարությունների մասին: Այս գիրքն անհամեմատ ավելի բարձր արվեստ տպագրություն է, քան իր նախորդը<sup>5</sup>:

«*Չարանց վարքը*» (1641 թ.) (705 էջ) Նոր Ջուղայում Կեսարացու տպագրած երրորդ գիրքն է: Փաստերի պակասի պատճառով Լեոն ենթադրել է, թե նա միայն այս գրքով է մտել հայ մշակույթի անդաստանը: Նա գովեստի ու գնահատանքի սքանչելի խոսքեր է գրել այս մասին. «Տպարանը Պարսկաստանի խորքում, այն էլ այդ խավար ու բարբարոսական ժամանակներում, ինքնըստինքյան մի մեծագործություն էր, որ պատիվ էր բերում հայի կուլտուրական ընդունակություններին: Բայց հրաշալին այդ չէ, այլ այն, որ Ջուղայի տպարանը ամբողջովին շինված էր տնային միջոցներով: Խաչատուր վարդապետը ոչ ոքից չէր սովորել տպագրական արվեստը, այդպիսին էին և նրան շրջապատողները: Բայց նրանք կարողացան խելքով ըմբռնել, թե ինչ է պահանջվում և փորագրեցին տառեր, շինեցին մամուլ, մինչև իսկ թուղթն էլ պատրաստեցին տեղն ու տեղը, շինեցին և տպագ-

<sup>3</sup> Ոսկանյան Ն., Կորկոտյան Զ., Սավալյան Ա., Գայ գիրքը 1512-1800 թվականներին. հայ հնատիպ գրքի մատենագիտություն, հ. Ա, Երևան, 1988, էջ 22 ա-բ:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Իշխանյան Ռ., Գայ հնատիպ գիրքը, էջ 24:

րեցին»<sup>6</sup>: Գ. Ջարպիանայանն նաեւ ինչպէս տպագիր գիրքը համարում է նույն «Չարանց վարքը» և նրան հաջորդող գիրք համարում «Ատենի ժամագիրքը»՝ կրկին չիմանալով մյուս երկու հրատարակությունների մասին<sup>7</sup>: 705 էջանոց գրքի հիշատակարանն ավարտվում է տպագրիչի՝ իր մասին գրված հետևյալ տողերով, թե գործն ավարտվել է «Ի քաղաքն Շօշ, որ է Սպահան, յանապատն Նոր Ջուղայ, ի թագաւորութեան պարսից Շահ Սեֆոյն և ի յայրապետութեան Ս. Էջմիածնի տէր-տէր Փիլիպպոսի. ձեռամբն Խաչատուր վարդապետի Կեսարացոյ»<sup>8</sup>: Ռ. Իշխանյանը ևս բարձր է գնահատում «եվրոպական մշակույթի կենտրոններից հեռու ընկած վայրում» իրագործված իրոք հանդուգն ձեռնարկը՝ ասելով. «Դա, ըստ էության, տպագրության հայկական գյուտն էր՝ կատարված մի քանի համարձակ, հնարամիտ մարդկանց կողմից»<sup>9</sup>:

Չորրորդ գիրքը՝ «*Ժամագիրքը*» (699 էջ), Կեսարացու տքնանքի վերջին արտահայտությունը, տպագրվել է 1642 թ.: Նրան կցված են «Տոնացույցը» և «Օրհնութեանց» քաղվածո մասերը<sup>10</sup>: Գրքի հիշատակարանում բանաստեղծական տողեր են թողնված վարպետների դժվարին աշխատանքների մասին (200-րդ էջում առկա հիշատակարաններից մեկը, մտածել է տալիս, թե հեղինակը հավանաբար վատառողջ է եղել ու մտահոգվել իր վաղածամ մահվան մասին, ինչը կարող էր տպագրության ավարտը խափանելու պատճառ դառնալ): Այսպես.

Ով վայելող Սուրբ մատենիս,  
Մաղթեմ՝ յիշես եղկելիս.  
Ազարիայ շարօղ տառիս  
Դաւթի սրբոյ երգարանիս,

<sup>6</sup> Լեո, Երկեր, հ. 5, Երևան, 1986, էջ 211:

<sup>7</sup> Ջարպիանալեան Գ., Պատմութիւն հայկական տպագրութեան սկզբնաւորութենէն մինչ առ մեզ, Կենետիկ, 1895, էջ 73:

<sup>8</sup> Ոսկանյան Ն., Կորկոտոյան Զ., Սափայան Ա., մշվ. աշխ. էջ 24 ա:

<sup>9</sup> Իշխանյան Ռ., Չայ գիրքը 1512–1920, էջ 50: Նախկինում ևս գիտնականն այս կարծիքին է եղել (Իշխանյան Ռ., Չայ գրքի պատմություն, հ. Ա, Երևան, 1977, էջ 353–357):

<sup>10</sup> Սմբատեան Արտ. եպ., մշվ. աշխ., էջ 29:

Նաև յիշել մաղթեմ իս և զՍարգիսն,  
Ու՞մն շինօղ թղթի և մրիս,  
Միւսն գիժուցօղ և տպօղ քարտիս<sup>11</sup>:

Ձեռագրական տեքստերում երբեմն օգտագործվում են չափածո հիշատակարաններ: Երբեմն այդպիսիք պատահում են հնատիպ գրքերում: Բարեբախտաբար, ժամրի ուսումնասիրությունը մեզանում դառնում է ավելի տիրապետող<sup>12</sup>, ինչն օգնում է ուսումնասիրության մոր ուղիներ ընտրելու խնդրում: Հիշյալ տպագիրը Կեսարացու վերջին գիրքն է: Նա հնարավորություն չի ունեցել շարունակելու գրատպության գործը, առավել ծաղկեցնելու համայնքի մշակութային կյանքը:

Եհշտ է՝ Հովհաննես Ջուղայեցին քիչ ավելի ուշ շարունակեց նրան, բայց նրա գործերն էլ հաջող չընթացան: Այդ պատճառով սկսված կարևոր նախաձեռնությունը մնաց կիսատ: Մինչդեռ սա Մերձավոր և Միջին Արևելքում առաջին տպարանն էր, որ հիմնադրվել էր հայ առևտրականների կողմից<sup>13</sup> և կարևոր դեր ունեցավ տարածաշրջանի կյանքում:

Լուսավորական խոշոր գործիչ Հովհաննես Ջուղայեցին բազմակողմանի զարգացած անձնավորություն էր (փիլիսոփա, աստվածաբան, պատմաբան): Նա, բացի դպրոցից, որը հաճախ իրավացիորեն անվանում էին համալսարան, հիմնել է գրասուն, հավաքել ձեռագրեր<sup>14</sup>: Հեղինակ է կրոնի, ճարտասանության և տրամաբանության մասին գրքերի: 1630 թ. Մովսես կաթողիկոսի

<sup>11</sup> Ոսկանյան Ն., Կորկոտյան Զ., Սավայան Ա., Նշվ. աշխ., էջ 26 ա: Ռ. Իշխանյանի կարծիքով՝ տաղի հեղինակը Սիմեոն վարդապետն է (Իշխանյան Ռ., Հայ գիրքի պատմություն, հ. Ա, էջ 366):

<sup>12</sup> Բախչինյան Հ., Հայկական ձեռագրերի հիշատակարանները, Երևան, 1980, 124 էջ, նաև Պողոսյան Ն., Հայ հնատիպ գրքերի ձեռագիր հիշատակագրություններ (1512–1712), Երևան, 2012, 86 էջ:

<sup>13</sup> Բոգոյան Ա., Գրահարատարակչական գործի սկզբնավորումը Մ. Ա. Ս. էջմիածնում, «Գիրքը պատմամշակութային և տեղեկատվական հաղորդակցությունների համակարգում (հանրապետական գիտաժողովի զեկուցումների ժողովածու)», Երևան, 2010, էջ 24:

<sup>14</sup> Ղազիկեան Ա., Հայկական մոր մատենագրութիւն և հանրագիտարան հայ կեանքի, հ. Ա (Ա-Մ), Վենետիկ, 1909–1912, էջ 1128:

(1629–1632) խնդրանքով մեկնել է Լվով, ուր փորձել է հարթել համայնքի առաջնորդ, տխրահոջակ Նիկոլ Թորոսովիչի և համայնքի միջև առկա վեճը<sup>15</sup>։ Նա այն նույն վարդապետն է, որ «Լեհաստանում չէր իմացել, թե «վարեմ» բառը ինչ է՝ բա՞, թե՞ անուն,- գրում է Լեոն։ Նրա հետ էր մի երիտասարդ աբեղա, Սիմեոն անունով, որ նույնպես ենթարկվել էր լատին կրոնավորների ծաղրանքին»<sup>16</sup>։ Հասկանալի է, սակայն, որ այդ ամենը սադրիչ բնույթ էր կրում։ Կրոնավորներն իրականում բոլորովին էլ անգրագետ մարդիկ չէին։ Լվով քաղաքի խարդախ չեպիսկոպոս, անբարո Նիկոլ Թորոսովիչի և նրա բազմամյա ապօրինությունների ու բազմահնար չարագործությունների պատճառով համայնքի անդամները կրակն էին ընկել. այդ խարդախ ու կաշառակեր մարդն ամեն ինչ անում էր իր չարագործություններն առաջ տանելու, իրեն խանգարողներին պատժելու համար։

Այս մասին կարևոր մանրամասներ է հաղորդում Առաքել Դավրիժեցին<sup>17</sup>։ Իսկ կաթոլիկներն օգտագործում էին ամեն առիթ հայերին իրենց կողմը գրավելու և նրանց պատկանող գույքը և շինություններն անթաքույց սեփականելու նպատակով։

«Տակավին 1639 թ. Խաչատուր վարդապետի ջանքերով Եվրոպա է մեկնում Հովհաննես վարդապետը,- գրում է Արտ. եպ. Սմբատյանը,- որը Հռոմում ծուլել տալով հայերեն գեղեցիկ տառեր՝ տարբեր մեծության, ինչպես և տպագրական զարդեր՝ անցնում է Լիվոռնո, որտեղ 1643 թվին տպագրում է Սաղմոսը»<sup>18</sup>։ Այս իր տպագրածը վերցնելով՝ վերադառնում է Նոր Ջուղա։ Հաղթահարելով բազում դժվարություններ Խաչատուրի մահվա-

<sup>15</sup> Օրմանեան Ա., Ազգապատում, հ. Բ, Էջմիածին, 2001, էջ 2810:

<sup>16</sup> Լեո, Երկեր, հ. 5, էջ 210:

<sup>17</sup> Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Երևան, 1990, էջ 298–303, ժանոթ. էջ 513–514:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 30, նաև։ Մոհամմադ Մալեք Մոհամմադի, Իրանահայերի և իրանցիների տպագրության պատմությունից, «Գիրքը պատմամշակութային և տեղեկատվական հաղորդակցությունների համակարգում (հանրապետական գիտաժողովի զեկուցումների ժողովածու)», էջ 50–53:

մից հետո՝ Յովհաննեսը 1647 թ. տպագրում է «Պարզատումար Ազարիայի» երկը («Լիակատար պատմութիւն» վերնագրով մի գիրք է դա): Իսկ 1650 թ. սկսում է Աստվածաշնչի տպագրության գործը, որը, սակայն, չի հաջողվում ավարտին հասցնել<sup>19</sup>: Ժամանակի պատմիչ Խաչատուր Նորջուղայեցին իր «Պատմութիւն Պարսից» երկում այս մասին գրում է. «Վասն մեղաց մերոյ մնաց թերակատար, որպէս կայ մինչև ցայսօր ի միջի մերում. սա կարին լաւագոյն ունելով գթուղթն ու զգիրն, քան զառաջին տպեալ գրեանսն»<sup>20</sup>: Թեև թուղթը և տառերն ընտիր որակի են եղել, բայց, պատմիչի կարծիքով, գործած մեղքերի պատճառով գրքի տպագրությունը մնացել է կիսակատար: Յավոք, Խաչատուր վարդապետի մահվանից հետո՝ 1646 թ., Ջուղայեցու դեմ աստիճանաբար հալածանքներ են սկսվում և նա ստիպված հեռանում է հայրենի քաղաքից ու 1651 թ. թերևս զոհ դառնում մի արկածի (նա առևանգիչների ձեռքից ազատում է բռնի փախցված մի հայ աղջկա, որի պատճառով վերջիններս վրեժխնդրորեն սպանում են նրան)<sup>21</sup>:

Ինչ վերաբերում է հայ տպագրությունը, ապա այն հայրենի հողի վրա կարող էր հաստատվել տակավին 120 տարի ավելի վաղ, այսինքն՝ 1771 թվականից առաջ, բայց խափանվել է ինչ-ինչ պատճառներով, երբ էջմիածնում փորձ է արվել սեփականել Խաչատուրի աշակերտ՝ նույն Յովհաննես Ջուղայեցու տպարանը, որ նա Լիվոռնոյից տեղափոխել է Հայաստան: Իր «Պարզատումարի» հիշատակարանում ահա թե ինչ է գրում նա. «Առ բարեպաշտ անձսդ, ընթերցողաց, վասն մշտնջենաւոր յիշատակի՝ ի նուաստ ծառայէ Աստուծոյ Յովհաննես վարդապետէ Ջուղայեցույ: *Ձնի եւ թշնամի աշխատութեանքն մերոյ որ Իտալիայ, առեալ զգործարան տպագրութենէն, բազում նեղութեանք ածաք ի Հայաստան՝ ակն ունելով մեծի շնորհակալութեան և պարզևաց, այլ*

<sup>19</sup> Ոսկանյան Ն., Կորկոտյան Զ., Սավայան Ա., նշվ. աշխ., էջ 32 ք:

<sup>20</sup> Նույն տեղում:

<sup>21</sup> Իշխանյան Ռ., Հայ գիրքը 1512–1920, էջ 52:

*ոչ եղև այնպէս, որպէս յուսացայքն, քանզի պատահեաց մեզ երբեմն և սրբոց քերթողացն (նկատի ունի Մովսէս Խորենացուն, Ղազար Փարպեցուն – Ս. Ս.) (որ) դիմեցին յԱթոռն ... և յայլոցն ոչ եղեն ընդունելիք (ընդգծումը մերն է – Ս. Ս.), որոյ վասն և տրտմեցան յոյժ, տյնպէս և մեք»<sup>22</sup>։ Այս դեպքում էլ հին հայկական «հիվանդությունն» իրեն զգացնել է տվել։ Թերևս սկզբունքային մարդ լինելով՝ Յովհաննէս վարդապետը չի զիջել իր դիրքերը, իսկ Սայր Աթոռում ցանկացել են նրանից վերցնել իր իսկ տպարանը, ինչը նա թույլ չի տվել։ Այդ ամենը կատարվել է Փիլիպոս Ա Աղբակեցու (1633–1655) կաթողիկոսության շրջանում։*

Խաչատուր Կեսարացու հորդորներով Արևելք բերված տպարանը տեղափոխվում է Սպահան (Նոր Ջուղա), և, ինչպես արդեն նշեցինք, այնտեղ Յովհաննէսը տպագրում է իր երկու նոր գրքերը (երկրորդն անավարտ է մնում. խոսքը 1650 թ. Աստվածաշնչի մասին է)<sup>23</sup>։

Իրանցի հայագետ Սոհամնադ Մալեք Սոհամնադիի «Իրանի և իրանցիների տպագրության պատմությունից» հոդվածն իր հերթին շատ սուղ տեղեկություններ է տալիս այս մասին։ Յեղիմակը բերում է որոշ աղբյուրներ՝ ըստ որոնց Նոր Ջուղայի առաջին տպարանն իբր բացվել է Կարմեյան աղանդավորների կողմից, որոնք 1607 թ. եկել են Սպահան, ավելի ուշ բացել իրենց տպարանը և կրոնական բովանդակությամբ նյութեր տպագրել<sup>24</sup>։ Սակայն թվականների և այս հարցում նա ճշգրտումներ չի կատարում։ Բացի այդ՝ չհիմնավորված տեսակետ է հայտնում հայկական առաջին տպարանի մասին՝ գրելով, որ այն բացվել է 1632 թ.՝ դրանով խճճելով գրատպության առաջնայնության հարցն Իրանում՝ ընդհանրապես և հարցի քննությունը՝ մասնավորապես։ Ցավոք, չի ճշգրտում խոսքը ո՞ր տպարանի մասին է։ Երևի թե մեկ այլ տպարանի, քանի որ 1636 թվականն է համա-

<sup>22</sup> Ոսկանյան Ն., Կորկոտյան Զ., Սավայան Ա., նշվ. աշխ., էջ 28 բ։

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 31ա։

<sup>24</sup> Սոհամնադ Մալեք Սոհամնադի, նշվ. աշխ., էջ 50 (տողատակ)։

րում է Խաչատուր Կեսարացու գործունեության սկիզբը: Իսկ այլ հայկական տպարանի մասին խոսելը բնավ հիմնավորված չէ: Հետագայում Նոր Ջուղայի տպարանից բացի, 1888 թ. Թավրիզում, իսկ 1894 թ. Թեհրանում բացվում են նոր հայկական տպարաններ, իսկ պարսկական տպարանը բացվել էր քիչ ավելի վաղ՝ 1815 թ. թավրիզցի վարպետ *Ջեյն ալ Աբեդինի* կողմից Թավրիզում, որը տպագրում է *Միրզա Աֆուղասեն Դանե Մագհամի «Ֆարսի Լամե»* գիրքը՝ ռուս-պարսկական հարաբերությունների մասին պատմական մի աշխատություն<sup>25</sup>:

XVII դարի կեսերին այս անգամ Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսն է մտածում Մայր Աթոռում տպարան բացելու մասին: Նոր Ջուղայի տպարանի տառերը չհավանելով՝ նա 1655 թ. Եվրոպա է ուղարկում իր քարտուղար Մատթոս դպիր Ծարեցուն<sup>26</sup>: Սկսվում է հայ գրատպության նոր ու արգասավոր մի ժամանակ՝ անստերդամյան շրջանը, երբ հանդես եկան Ծարեցին, Ավետիսիսը, Ոսկան վարդապետ Երևանցին և ուրիշներ<sup>27</sup>: Դա այն դժվարին տասնամյակներին էր, երբ կաթոլիկ եկեղեցապետերը հրամայում էին իրենց ենթականերին՝ «ոչ ոք յարհեստաւորաց իշխեսցէ հանել զայս արհեստ և տալ ի ձեռս Հայոց և որք ըստ գործեալ արասցէն զայս գործ ծածուկ և կան յայտնի՝ պատիժս սաստիկ կրելոց են ի մէնջ»<sup>28</sup>:

Հայկական հողի վրա տպագրության գործն իրականացնելը հաջողվում է շատ ուշ: Սիմեոն կաթողիկոսին դժվարությամբ հաջողվում է Հայաստանում առաջին տպարանը հիմնադրել: Էջմիածնի տպարանը սկսում է գործել 1771թ.<sup>29</sup>: Տպագրության գործի հաստատումը Հայաստանում Սիմեոնի 20-ամյա երազան-

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 53: Ըստ հոդվածագրի՝ կարծիք կա, որ առաջին գիրքը տպագրվել է 1806 թ. Շիրազ քաղաքում, ոչ թե 1815 թ. Թավրիզում:

<sup>26</sup> Զամյանց Մ., Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թվականը), հ. Գ, Երևան, 1985, էջ 658:

<sup>27</sup> Սմբատեան Արտ. եպ., նշվ. աշխ., էջ 34:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 30:

<sup>29</sup> Իշխանյան Ռ., նշվ. աշխ., էջ 93:

քի իրագործումն էր<sup>30</sup>, ինչու չէ, նաև հայ մտավոր առաջընթացի կարևոր ձեռքբերումներից մեկը:

Խաչատուր Կեսարացու կատարած քայլը բացառիկ է ինչպես հայ, այնպես և Արևելքի մտավոր առաջընթացի պատմության մեջ: Դա մի խիզախում է, որ այլ կերպ չես անվանի: Կեսարացու՝ Նոր Ջուղայի տպարանը 1684–1688 թթ. կարճատև աշխատելուց հետո միայն 1872 թվականին կրկին սկսում է գործել առանց ընդհատումների<sup>31</sup>: Նոր Ջուղայի տպարանի գործունեության վաղ շրջանը տևեց մոտ տասնհինգ տարի՝ 1636–1650/1651 թթ.: Այդ ժամանակահատվածում Խաչատուր վարդապետ Կեսարացին, մինչ այժմ հայտնի տեղեկությունների համաձայն, տպագրեց իր չորս գրքերը՝ 1636–1642 թթ., իսկ հետո նրան փոխարինեց Յովհաննես վարդապետ Ջուղայեցին: 1647 թ. վերջինիս տպագրած «Պարզատունարը» համեմատաբար փոքր գիրք է՝ 84 էջից բաղկացած: Մինչդեռ 1650 թ. տպագրվել սկսած Աստվածաշունչը 8–10 անգամ ավելի մեծածավալ մի աշխատանք է և ավելի բարձր որակի: Փաստորեն, Յովհաննես վարդապետի ցավալի մահով դադարեց տպագրական գործը Նոր Ջուղայում: Սակայն մոտ 15-ամյա այդ ժամանակաշրջանը մեծ դեր խաղաց հայ կյանքում և տպագրված վեց գրքերը նշանակալից դեր ունեցան հայ մշակույթի և գրքի պատմության մեջ:

---

<sup>30</sup> Օրմանեան Ա., նշվ. աշխ., էջ 3580:

<sup>31</sup> Ոսկանյան Ն., Կորկոտյան Զ., Սավալյան Ա., նշվ. աշխ., էջ 28թ:

## ԶՄՅՈՒՆԻԱՐԱՅ ՄԱՍՈՒԼԻ ՏՊԱՐԱՆՆԵՐԸ

Զմյուռնիայի հայ գաղթօջախում գրատպությունը սկզբնավորվեց դեռևս 1759 թ., երբ Մահտեսի Մարկոսը Էջմիածնի այս տերունի թեմում տպագրեց երեք գիրք («Մեկնութիւն ժամանակագրութեան»՝ 1759, «Խորհրդատետր»՝ 1761 և Եզնիկ՝ 1762)<sup>1</sup>: Տպագրական գործն այստեղ շարունակվեց հաջորդ դարում՝ 1830-ական թթ. կեսերին, ամերիկյան բողոքական միսիոներների հիմնած տպարանում, որը գործում էր մերթ Դ. Դալլոքի, մերթ Գ. Գրիֆիթի անուններով: Այս տպարանը հիշարժան է նաև մեկ այլ հանգամանքով. այս հաստատությամբ Զմյուռնիայում դրվում էր հայ մամուլի տպագրության հիմքը: 1839-1846 թթ. նշված տպարանում լույս տեսավ ամերիկյան միսիոներների «Շտեմարան պիտանի գիտելեաց» ամսագիրը, որն անկախ իր դավանական նախասիրություններից, հայերեն առաջին մանկապատանեկան հրատարակությունն էր և, որպես այդպիսին, մտել է հայ պարբերական մամուլի պատմության մեջ: Թամգիմաթի հռչակումից հետո զմյուռնահայ մամուլի տպագրությունը զարգացման նոր ազդակներ ստացավ: 1840-ական թթ. հայտնի էին Ստ. Պապոյանի տպարանը, Թաթիկյան վիմագրատունը, Ս. Մեսրոպյան վարժարանի, «Արշալույս Արարատյան» լրագրի և «Արագածունյաց» ընկերության տպարանները, որոնք գրեթե բոլորն էլ կապ ունեին մամուլի տպագրության հետ:

Զմյուռնահայ առաջին լրագիրը՝ Ղ. Պալղազարյանի խմբագրությամբ հրատարակվող «Արշալույս Արարատյանը» (1840-

---

<sup>1</sup> Ալպոյաճյան Ա., Զմյուռնիո տպարանները, «Պատմաբանասիրական հանդես», 1964, N 2, էջ 72:

1885), նախապես տպագրվում էր Ստ. Պապոյանի, այնուհետև, 1844 թ.՝ սեփական տպարանում: 1845 թ. հունիսի 21-ի աղետալի հրդեհը մեծապես վնասեց զմյուռնահայ համայնքին և նրա ազգային հաստատություններին: 1847 թ. ապրիլի 4-ին Ներսես Աշտարակեցի կաթողիկոսին գրած նամակում Ղ. Պալղազարյանը հայտնում էր, որ այրվել է իր թերթի տպարանը՝ ամբողջ սարքավորումներով ու տպագրական մամուլով հանդերձ<sup>2</sup>: Դրանից հետո մի կարճ ժամանակ այս լրագիրը տպագրվեց անվթար մնացած Ս. Մեսրոպյանի և ապա խմբագրի ձեռք բերած սեփական տպարանում:

Զմյուռնահայ մյուս լրագիրը՝ Խ. Մելիքսեյումյանի խմբագրությամբ հրատարակվող «Չայրենասերը» (1843–1846), տպագրվում էր «Արագածունյաց» լուսավորական ընկերության տպարանում: Ավելացնենք, որ ընկերությունն ունեցավ տպագրական համեստ արդյունքներ: Այստեղ տպագրվեցին մի քանի ինքնուրույն և թարգմանական գրքեր, թեև տպարանն իր գործունեությունը շարունակեց «Չայրենասերի» դադարից հետո ևս՝ գործելով մինչև 1847 թ.:

Զմյուռնիայում հայկական կրթական-լուսավորական շարժման վերելքի արտահայտություններից էր Ս. Մեսրոպյան վարժարանի բարեկարգումը (որ սկսվել էր թանգիմաթից առաջ՝ 1820-ական թթ. սկզբներին և համազգային համբավ ձեռք բերել ականավոր մանկավարժ Ռուբեն Անդրեաս Փափազյանի տեսչության տարիներին՝ 1840–1850-ական թթ.): 1840 թ. սկսում է գործել Ս. Մեսրոպյան վարժարանի տպարանը, որի գործունեությանն իրենց մասնակցությունն էին բերում այդ կրթական հաստատության սաները, «որոնք հոն կը սորվէին նաեւ գրաշարութեան արուեստը»<sup>3</sup>: Այս տպարանը վարժարանին էին տրամադրել եվրո-

<sup>2</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 129, վավ. 94, վավ. 45, թղթ. 116, վավ. 27, 28ա:

<sup>3</sup> Ալպոյաճյան Ա., նշվ. աշխ., էջ 77:

պայում գործող զմյուռնացի մեծահարուստ վաճառականները: Առաջ ընկնելով նկատենք, որ Ս. Մեսրոպյանի ավագանուն կրթվող պատանիները, ոգևորված իրենց ուսուցչի հորդորներով, 1850-ական թթ. ձեռնարկեցին խմբագրական-հրատարակչական գործին՝ իրենց առավել քան համեստ տպագրական սարքավորումներով: Այս կերպ նրանք հրատարակեցին «Թուֆակ Հայկազյան» (1854–1855, «աշխատասիրութեամբ երից աշակերտաց Մեսրովպեան վարժարանիս Ձմիւռնիոյ») և «Երկասեր» պարբերականները: Վերջինս հեղինակում էր Մ. Նուպարյանը՝ տպագրական մամուլը ձեռք բերելով Տետեյան տպարանից, ինչպես հետագայում պատմում էր զմյուռնացի նշանավոր թարգմանիչ և բառարանագիր Մ. Նուպարյանը: Ավելացնենք, որ Ս. Մեսրոպյանի տպարանում տպագրվեցին Հ. Վանանդեցու «Ոսկի դար Հայաստանի» պոեմը, Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը և այլն:

Ձմյուռնահայ տպագրության պատմության մեջ ամենապատվավոր տեղն ամենայն իրավամբ պատկանում է Տետեյան հրատարակչական տանը, որն իր փայլուն արդյունքների և համբավի համար ամենից ավելի պարտական է Տետեյան եղբայրներից ավագին՝ Տիգրան Հարություն Տետեյանին: Եղբայրների հետ և իրեն հատուկ լայնախոհությամբ ու գործնական հատկություններով Տ. Տետեյանը 1853 թ. Ձմյուռնիայում հիմնեց իր տպարանը, որն աստիճանաբար ընդլայնեց իր արտադրական կարողությունները՝ Եվրոպայից բերված արդիական տպագրական սարքավորումների շնորհիվ: Սակայն տպագրապետն ավելին արեց, քան կանեին սովորական տպագրիչները: Տպարանի հետ միասին նա փաստորեն հիմնադրում էր նաև զմյուռնահայ թարգմանական դպրոցը՝ իր շուրջ համախմբելով զմյուռնահայ տաղանդաշատ երիտասարդներին և առաջարկելով նրանց թարգմանել որոշակի երկեր եվրոպական դասական գրականությունից, խրախուսելով նրանց ոչ միայն այդ երկերի տպագրության հարցում, այլև պարզևավճարներ տրամադրելով և ինքն էլ ներգրավվելով թարգմանական գործունեության մեջ: Այս կերպ կազմվեց զմյուռ-

նահայ թարգմանիչների այն փայլուն խումբը, որին իրենց մասնակցությունը պետք է բերեին Գր. Չիլինկիրյանը, Մ. Մամուրյանը, Մ. Նուպարյանը, Ա. Կ. Տետեյանը և այլք: Իր՝ Տիգրան Տետեյանի թարգմանությամբ նրա տպարանում տպագրվեցին «Հազարունեկ գիշերը» (արաբական հեքիաթների ժողովածուն), Մուլիեթի «Ազահը», «Ակամա բժիշկը», «Աերը բժիշկ է» կատակերգությունները, Ա. Դյումայի «Կոմս Մոնտե Քրիստո»-ն և այլն: Տետեյան տպարանում են տպագրվել Շեքսպիրի, Վոլտերի, Սվիֆտի, Շատոբրիանի, Սկոտի, Է. Սյուի, Զյուգոյի, Ժ. Սանդի և եվրոպական այլ հեղինակների շատ ստեղծագործություններ: Առանձին մաս են կազմում այս տպարանի ուսումնակրթական բնույթի հրատարակությունները՝ այբբենարաններ, աշխարհաբարի ուսուցման ձեռնարկներ և այլն, որոնք նպաստում էին ոչ միայն զմյուռնահայ, այլև առհասարակ արևմտահայ դպրոցի զարգացմանը: Ա. Ալպոյաճյանը Տ. Տետեյանին ամենայն իրավամբ համարում է «մեծ տպագրապետ և արևմտյան հայոց ամենամեծ հրատարակիչը»<sup>4</sup>:

Տետեյան տպարանը հատկապես կարևոր ավանդ ունեցավ 1860–1870-ական թթ. զմյուռնահայ մամուլի տպագրության գործում: Տետեյանների խմբագրությամբ այստեղ էր լույս տեսնում «Արփի Արարատյան» ամսագիրը (1853–1855): Ի սկզբանե այն ընթերցողներին պարզում էր իր նախասիրությունները մասնավորապես թարգմանական գեղարվեստական գրականության ասպարեզում: «Արփի Արարատյանի» հրատարակության հայտարարության մեջ (22 մայիսի, 1853) տեղեկացվում է, որ ամսագրի «նիւթերը պիտի ըլլան նախ՝ առջի 16 երեսին մէջ բարոյավէպ պատմութիւն մը շարունակելի, որ պիտի ըլլա կամ հեղինակութիւն (իմա ինքնուրույն գործ – Ա. Խ.) եւ կամ թարգմանութիւն: Միւս 16 երեսին մէջ պիտի տպուին զանազան խառն գրուածներ, ինչպէս եւ զուարճալի պատմութիւններ, ճառեր, Շեյքսպիրյ անգղիացի եւ Մուլիեր գաղղիացի հռչակաւոր կատակերգուներուն երեսելի քանի մը թատրոնները, ազգային լուրեր, ուսումնական

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 81:

տեղեկութիւններ եւ այլն»<sup>5</sup>: «Արփի Արարատյանում» բավական նկատելի իրեն զգացնել է տալիս Տ. Տետեյանի գործնական մոտեցումն ազգային խնդիրներին, դրանց մեջ լուսավորության ու կրթության հիմնահարցի առաջնայնության հետևողական գիտակցումը: Սահմանադրական պայքարի կրքերի մեջ խորացած ազգակիցներին նա ողջամտության ու խաղաղության հորդորներ էր տալիս՝ զգուշացնելով ծայրահեղություններից, իսկ իր հանդեսի բովանդակությունն առավելապես հագեցնում էր լուսավորական ու կրթական նյութերով<sup>6</sup>:

Տ. Տետեյանը վախճանվեց 1868 թ.՝ ապրելով ընդամենը 36 տարի: Նրա մահվանից հետո եղբայրները շարունակեցին հրատարակչական գործը՝ չունենալով, սակայն, ավագի տաղանդն ու անփոխարինելի կարողությունները:

Տետեյանների հրատարակչական վերելքի ժամանակ էր, երբ օսմանյան կառավարությունն արեց իր տեսքին փորձը՝ գրաքննական շրջանակների մեջ դնելու գրքերը, մամուլը և տպարանների գործունեությունը: 1858 թ. հուլիսի 25-ին հրապարակված քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածով քրեական հետապնդում էր նախատեսվում կառավարության անդամների կամ սուլթանի դեմ ուղղված որևէ գրքի կամ լրագրական հրապարակման նկատմամբ՝ միաժամանակ սահմանելով, որ «տպած բաներն ալ կը գրաւուին եւ տպարանն ալ յանցանքին ծանրութեանը համեմատ առժամանակեայ կերպով կամ մշտենջեմապես կը զոցուի»<sup>7</sup>:

Այս օրենքի և սահմանադրականների դեմ ազգային հետադիմության մղած պայքարի արդյունքն էր, որ 1861 թ. հուլիս-սեպտեմբերին խափանվեցին Կ. Պոլսում սահմանադրական պարբերականները՝ «Մեղուն» և հայատառ թուրքերեն «Մյունատիի երժիաս»-ը, ինչպես և ժամանակավորապես արգելվեց Տետեյան տպարանի գործունեությունը Ձմյուռնիայում՝ սահմանադրական-

<sup>5</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 171, վավ. 367:

<sup>6</sup> Հայ պարբերական մամուլի պատմություն, XVIII–XIX դարեր, հ. 1, Կահիրե, 2006, էջ 170–171:

<sup>7</sup> «Մասիս», Կ. Պոլիս, 8 մայիսի 1865:

ների տեսակետներն արտահայտող թռուցիկներ տպագրելու համար<sup>8</sup>: 1860-ական թթ. Տետեյան տպարանը շարունակեց իր հրատարակչական առնչությունները զմյուռնահայ մամուլի հետ: 1861–1865 թթ. և ապա 1867 թ. այստեղ են տպագրվել Ջմյուռնիայի «Ծաղիկը», «Գարուն Հայաստանի» հանդեսը (1862) և իրենց՝ Տետեյանների «Դիմակ» (1862) և «Արփի Արարատյան» պարբերականները:

1871 թ. իր գործունեությունն է սկսել զմյուռնահայերի ամենաերկարակյաց՝ «Արևելյան մամուլի» տպարանը, որ գործել է մինչև 1922 թ.՝ գաղթօջախի կործանումը: Այն հիմնել էր նշանավոր հրատարակախոս և մանկավարժ Մ. Մամուրյանը՝ ձեռնարկելով իր «Արևելյան մամուլ» ամսագրի (1871–1909) հրատարակությանը: Հետագայում Մամուրյան տպարանում տպագրվեցին «Արծազանք» (1908), «Արշալույս» (1908), «Դաշինք» և «Արևելյան մամուլ» (1919–1922) թերթերը:

1880–1881 թթ. Գր. Մսերյանի տպարանում էր հրատարակվում Գ. Մսերյանի խմբագրած «Մետեորա» տարեգիրքը: Այստեղ են տպագրվել նաև Գ. Մսերյանի հեղինակած մի շարք դասագրքերը և որոշ թարգմանական գործեր:

1907–1922 թթ. Ջմյուռնիայում գործում էր Քելշիշյան տպարանը՝ վերջին տպարաններից մեկը այս գաղթօջախի մշակութային իրականության մեջ: Այստեղ տպագրվել են «Արշալույս» օրաթերթը, «Միմոս», «Մունետիկ», «Աշխատանք» և «Փեթակ» շաբաթթերթերը, «Հայ գրականություն» հանդեսը, հայ բոյսկաուտների օրգան «Պատրաստը»: Ա. Ալպոյաճյանը «Ավելի նոր հաստատություն» է համարում Շեքերյան տպարանը. այստեղ տպագրվում էին «Իզմիրլի» և «Հտպիտ» պարբերականները իր՝ Հ. Շեքերյանի խմբագրությամբ:

Հայկական տպագրությունը Ջմյուռնիայում գործեց մինչև 1922 թ. օգոստոս-սեպտեմբեր՝ մինչև գաղթօջախի պատմության վերջին արարը:

---

<sup>8</sup> Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Երևան, 1955, էջ 383:

**ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՍՈՒԼԸ  
ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ**

(սկզբնավորումից մինչև 1860-ական թթ.)

Մուսուլմանական պետությունների շրջահայաց ղեկավարները դարեր շարունակ օգտագործել են հայազգի վարպետների հնարավորությունները՝ իրենց երկրները ծաղկեցնելու համար: 1603-ին այսպիսի մի արշավանք էլ դեպի Արևելյան Հայաստան ձեռնարկեց Շահ Աբասը, որը հազարավոր հայ արհեստավորների բռնի ուժով գաղթեցրեց Պարսկաստան: Հովհաննես Թումանյանի ողբը, թե սուգ, վայնասուն էր բարձրացել ժողովրդի մեջ, թե շատերը խեղդվեցին Արաքսի փոփրաղեզ ալիքների մեջ, մասամբ է ճշմարտացի, որովհետև Աբասի նպատակը այս գաղթյալների ուժերը իր երկրի բարգավաճման համար օգտագործելն էր և հենց այդպես էլ եղավ: Արհեստավոր հայերին հնարավորություն տրվեց ազատ գործունեություն ծավալել և դրա արդյունքը Նոր-Ջուղա հրաշակերտ հայկական քաղաքի ստեղծումն էր: Շահը մեծ իրավունքներ էր տվել հայերին բարեկեցիկ կյանք վարելու համար, սակայն նրա մահից հետո վերաբերմունքը հայերի նկատմամբ մի փոքր խստացավ, որն էլ առիթ դարձավ, որ նրանք Պարսկաստանից կամաց-կամաց անցնեն Հնդկաստան՝ այստեղ ստեղծելով հայկական նոր գաղթօջախ:

XVII դարի վերջին և XVIII դարի սկզբին հնդկահայ գաղթօջախը հանդիսանում էր հայ հասարակական-քաղաքական շարժման նշանավոր կենտրոնը: Շարժումն իր բնույթով բուրժուական էր, անշուշտ, ուներ նաև մի շարք առաջավոր կողմեր: Դրանցից առաջինն այն էր, որ հնդկահայ գործիչները հայ ժողովրդի ազգային անկախության գաղափարը կապում էին լուսա-

վորական շարժման հետ՝ առաջադրելով կրթության և լուսավորության պահանջը, որը նպաստում էր հայ ժողովրդի կուլտուրական մակարդակի բարձրացմանը: Երկրորդ, ազգային պետականության հիմնահարցն առաջավոր գործիչները առնչում էին Ռուսաստանի հետ միավորվելու պատմական ժամանակաշրջանի պահանջին: Հայերի համար Ռուսաստանի հետ միավորվելը տվյալ շրջանում առաջնային խնդիր էր ոչ միայն հայահավաքման ծրագիրն իրականացնելու, այլև Պարսկաստանի և Թուրքիայի բռնապետության տակ գտնվող հատվածները բնաջնջումից փրկելու համար, որի առաջին մունետիկը Իսրայել Օրին էր, որի առաջադրած ծրագրերը սեփականացրին ու նոր պայմաններին հարմարեցրին հնդկահայոց հաջորդ սերունդները:

XVII դարի 30–40-ական թթ. այնքան բազմամարդ դարձավ գաղթօջախը, որ հայերն ունեցան իրենց դպրոցները, եկեղեցիները, կուլտուր-լուսավորական հիմնարկների լայն ցանց և նույնիսկ թեմական առաջնորդարան: Եվ հենց հնդկահայ թեմի առաջնորդ Կեսարացին 1640 թվականին, առանց Գուտենբերգի գյուտին ծանոթ լինելու, ստեղծեց փայտյա տպագրական մեքենա և տպագրեց 1000 էջից բաղկացած «Հարանց վարք» կամ «Մեծերի վարք» գիրքը՝ նվիրված մեր մեծ նախնիներին:

Մեծ զարգացում ապրեց մտավոր կյանքը և 1772–73 թթ. Շահամիրյաններն ու Բաղրամյանը ապագա անկախ Հայաստան ունենալու ցանկությամբ իրենց սեփական տպարանում հրատարակեցին «Նոր տետրակ որ կոչի հորդորակ» և «Որոգայթ փառաց» գրքերը: Առաջինը հորդոր էր հայ երիտասարդությանը միավորվելու և պայքարելու ազատ Հայաստանի համար, ահա ինչու նախաբանում մեծ տեղ էր հատկացվել մեր մեծ նախնիների սխրագործություններին՝ ապացուցելու համար, որ հայերը միայն ենթարկվողներ ու շահագործվողներ չեն, որ նրանք էլ են ունեցել հզոր հայրենիք և հերոսական անցյալ: Ուրեմն պետք է թոթափել թույլի, տկարի կարծրատիպը և ստեղծել ազատ ու անկախ Հայաստան: Եվ այնքան էին առաջադիմել հնդկահայ մտա-

վորականները, որ երկրորդ գիրքը նվիրել էին ապագա Հայաստանի սահմանադրությանն այնպիսի դրույթներով, որ այժմ էլ դրանք արդիական են ու ուսանելի:

1789-ին երկու որդիների մահը ողբալուց և յոթ տարի անապատում ճգնելուց հետո Հարություն քահանա Շնավոնյանը Սադրասում հիմնադրում է իր տպարանը և հինգ տարիների ընթացքում հրատարակում հինգ գրքեր: Ամենակարևորն այն էր, որ գրքերից երկուսը աշխարհիկ էին՝ «Տաղարանն» ու Առաքել Դավրիժեցու «Փիլիսոփայությունը»: Սա չափազանց ռիսկային նախաձեռնություն էր, որովհետև այդ օրերի կաթողիկոս Սիմեոնը, անխնա հարձակում էր գործում աշխարհիկ այնպիսի գործիչների դեմ, ինչպիսիք էին Շահամիրյանները, Բաղրամյանը, Հովսեփ Եմինը, այլք:

1794–96 թթ. նույն տպարանում Շնավոնյանը հրատարակեց հայկական առաջին պարբերականը՝ «Ազդարար» ամսագիրը, որն ուներ ընդհամենը 28 բաժանորդ, բայց տարածվում էր և Հնդկաստանում և նրա սահմաններից հեռու: Եվ եթե հայ մամուլի պատմաբաններ, մխիթարյաններ Ջարբհանայանը, Գալենքյարյանը ճշմարտացիորեն չէին գնահատում Շնավոնյանի գործը, որովհետև նրանց համար առավել արժեքավոր էին մխիթարյանների հրատարակած հանդեսները, ապա զարմանալի է խորհրդահայ մամուլի պատմաբան, ակադեմիկոս Արտ. Կարինյանի կարծիքը «Ազդարարի» մասին, թե այն ընդունելի չէր, քանի որ հրատարակվել էր միայն գրաբարով, այնինչ Շնավոնյանը ամսագիրը հրատարակել էր ոչ միայն գրաբարով, այլ նաև ջուղայահայ բարբառով, նաև կիսաաշխարհաբարով: Ապացույցներ չունի ակադեմիկոսի մեկ այլ հայտարարությունը ևս, թե ամսագրի թղթակիցներ Հայոդդի հայը և Ազգակիցը Շնավոնյանի կեղծանուններն են: Լինելով ժամանակի լուսավորյալ մտավորականներից մեկը, Շնավոնյանը տիրապետում էր անգլերենին և նպատակադրվել էր հրատարակել անգլիական պարբերականների նմանակը, որը նրան քիչ թե շատ հաջողվել էր: Եվ եթե հրատարակության առաջին շրջանում Շնավոնյանը, վախեցած Սիմեոն կաթողիկոսի դա-

Ժանությունից, ներկայանում էր որպես նրա կողմնակից, երկրորդ շրջանում հակադրվեց կաթողիկոսին՝ ամսագրում տպագրելով Յովսեփ Արղությանի նամակը Եկատերինա II ցարուհուն, այսինքն Չայաստանի անկախացումը կապելով ոչ թե Անգլիայի հետ, ինչպես Սիմեոնն էր ցանկանում, այլ օգնություն սպասելով միմիայն Ռուսաստանից:

«Ազդարարը» տպագրել է ժամանակակից ստեղծագործողների գործերից, ընթերցողներին ներկայացրել հայ և օտարերկրյա նկարիչների գործեր, իսկ ամենակարևորը, ամսագրի բոլոր համարներում տպագրվել են առևտրական լուրեր՝ կողմնորոշելու համար հայ առևտրականներին աշխարհում կատարվող ապրանքների գների տատանումներին: Եվ որովհետև հայ առաքելական եկեղեցու պաշտպան էր, բոլոր 18 համարների վերջում տպագրում էր եկեղեցական լուրեր, տարաբնույթ նյութեր սրբերի, ծիսակատարությունների մասին:

Չայ մամուլի պատմության նշանավոր գործիչներից էր Մարտիրոս Մկրտչյանը, որ 1822-ին Կալկաթայում, իր սեփական տպարանում հրատարակեց «Շտեմարան» հանդեսը: Այն առաջին դեմոկրատական հանդեսն է հայ իրականության մեջ, որը քննադատում էր տգետ հոգևորականությանը՝ պարբերականի շուրջ համախմբելով ժամանակի առաջադեմ երիտասարդությանը: Հանդեսը թղթակիցներ ուներ Յնդկաստանի տարբեր քաղաքներում, սակայն աշխատակիցներ չուներ ֆինանսական սղության պատճառով, ահա ինչու բոլոր գործերը կատարում էր Մկրտչյանը, որն էլ կամա թե ակամա պատճառ էր դառնում, որ հանդեսը տառասխալներով, թերություններով լույս տեսներ: Եվ երբ ընթերցողները բողոքում էին այս առիթով, խմբագիրն արդարանում էր, թե միայնակ հրատարակության բոլոր գործերը կատարելն անհնարին է, ավելին, թղթակիցների մեծամասնությունը կիսագրագետ էր:

Մկրտչյանը միասնականության կոչ էր անում հայությանը, քննադատում չարական ու նախանձ մարդկանց: Նա խնդրում էր չար մարդու հետ սեղան չնստել և իրար վիրավորելու փոխարեն

մեկը մյուսին ծաղիկներ նվիրել: Այդպիսի բովանդակություն ունեին հանդեսում տպագրված ժամանակակից ստեղծագործողների Բաղեր Օղլու և Ղուլ Արզուի բանաստեղծությունները:

Նա գրում էր. «Նամարդի հետ չնստես մեջլիս և սոհբաթ, քան զքեզ մեծին խոնարհ պահիր»:

Լինելով ծաղկող ու անվախ մի լրագրող, նա առաջինն էր հայ իրականության մեջ, որ խոսեց գրչի մեծ գործության մասին, գրելով. «Գրիչն շատ զուլում զադ ա: Թեպետ մի չնչին անշունչ թեփուռ ա, սարեր շուռ կտա, մարդու սիրտն ինչ ա»: Ասել է, թե լրագրողը պետք է իմանա իր օգտագործած բառերի արժեքը...

Տիրապետելով օտար լեզուների, Մկրտչյանը օտարալեզու պարբերականներից տեղեկացավ պատերազմի մասին, որ սկսվել էր Թուրքիայի և Յունաստանի միջև: Նա ոգևորությամբ արձանագրում է, թե Ռուսաստանը որոշել է օգնել իր եղբայր քրիստոնյա հույներին, ասել է, թե անհրաժեշտության դեպքում ռուսները ձեռք կմեկնեն նաև քրիստոնյա հայությանը: Եվ որովհետև դեմոկրատ խմբագրի դեմ ինտրիգներ էին լարում, նա ստիպված էր 1822-ի դարավերջին դադարեցնել հանդեսի հրատարակությունը: «Շտեմարանի» միակ հավաքածուն պահվում է Չայաստանի ազգային գրադարանում:

Չնդկահայ տպագրության և մամուլի նշանավոր գործիչ էր Մեսրոպ Թաղիադյանը: Նա երևանցի էր, ավարտել էր Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, բայց հնարավորություն չունենալով լուսավորության գործը Չայաստանում ծավալել, իր հրապարակախոսական կարողությունները դրսևորում է Չնդկաստանում և հայրենիքից հեռու նպաստում հայ լուսավորական շարժմանը՝ նախապատրաստելով հայ նոր գրականությունը և զարգացման հեռանկարներ բացելով մամուլի համար: Թաղիադյանը բավական միջոցներ ուներ մասնակցելու Արարատյան ընկերության գործին և 1845-ին հրատարակեց «Ազգասեր» պարբերականը, որը հարատևեց միջև 1848-ը: Սկզբում նա իր պարբերականին տալիս է կրոնա-բարոյախոսական ուղղություն: Իբրև ստեղծագործող և եվրոպական գրականությանը քաջածանոթ անհատ, նա սկզբում

իր հայացքներն արտահայտում է մարդու և քաղաքացու իրավունքը պաշտպանելու, գոյություն ունեցող հասարակական հարաբերությունները չխախտելու սկզբունքով, սակայն որոնք չէին ներդաշնակում Թաղիադյանի հումանիստական գաղափարներին: Նրա հրատարակած պարբերականները մի բնաբան ունեին՝ «Մաքուր խղճմտանքը մարդուն դարձնում է երջանիկ»: Բոլոր առաջնորդողները նրա գրչին էին պատկանում: Մարդկային փոխհարաբերության հիմքը նա համարում էր բանականությունը, որի ուժին հենվում էր մարդու երջանկությունը: Ըստ նրա՝ խելացի, կոթված մարդը պետք է հասկանա շրջապատին, կարեկցի խելճին ու թշվառին: Սրա հետ մեկտեղ Թաղիադյանը պաշտպանում էր գոյություն ունեցող մարդկային հարաբերությունները, թե մշակը պիտի հերկի, իսկ հարուստը՝ կառավարի: Սակայն այս դրույթը նա լրացնում էր բացատրությամբ: Նա պահանջում էր հարուստներից մարդկային վերաբերմունք դեպի աշխատավորը, հորդորում ազգասիրական նպատակներով ստացված եկամուտից նրանց բաժին հանել: Սակայն շատ շուտով նա համոզվում է, որ մեծատունի ազգասիրությունը միայն իր քսակի շուրջն է պտտվում: «Ազգասեր Արարատյանում» արդեն նա դեմ է մեծահարուստներին, սակայն նաև շարունակում է իր այն սկզբունքի կիրառումը, թե աշխատանքն է որոշում անհատի ու ազգի ճակատագիրը և դա նա սիմվոլացրել էր թերթի ճակատին պատկերելով Մասիսներն ու Նոյան տապանը: Առաջինը հայության ոգին էր, իսկ երկրորդը՝ մարդու աշխատանքի արդյունքը: Թաղիադյանի թերթերն աչքի են ընկնում գրական գործերի առատությամբ, եվրոպական ռոմանտիկ գրողների ստեղծագործություններից, ժամանակի հայ գրողների գործերի նմուշների, ինչպես նաև իր «Վեպ Վարդգեսի և Վարսենկա», «Սոս և Սոնդիպի», «Ճանապարհորդություն ի Հայս», ինչպես նաև Անգլիային ու Հնդկաստանին նվիրված իր ուսումնասիրությունների տպագրությամբ:

Որպեսզի հնդկահայերի մեջ նախանձախնդրություն սերմանի արևմտահայ, մասնավորապես Մխիթարյան միաբանության լուսավորության, դպրոցաշինության ասպարեզում ունեցած հա-

ջողությունների նկատմամբ, նա տպագրում է Ղևոնդ Ալիշանի «Պլպուլն Ավարայրի» պոեմը, գովաբանում Ջնյուռնիայի «Արշալույս Արարատյան» թերթի ղեկավար Ղուկաս Պալդազարյանին, գովաբանում նաև Ռուսաստանին, որի տիրապետության տակ անցնելուց հետո Արևելահայաստանն առաջադիմում է:

Թաղիադյանը մեծ տեղ է հատկացրել նաև հայոց լեզվին՝ հայտարարելով, թե միայն մայրենի լեզվին հմտորեն տիրապետելուց հետո հայ մանուկները կարող են նաև օտար լեզուներ սովորել:

1852-ին նա փակեց «Ազգասեր Արարատյան» թերթը Չայաստան մեկնելու պատճառաբանությամբ և այլևս լուրեր նրա գործունեության մասին չկան: Միայն հայտնի է, որ նա մահացել է 1857-ին 54 տարեկան հասակում:

Գր. Գալստանյանի «Ուսումնասերը» լույս է տեսել Սինգապուրում, որն այդ շրջանում Չնդկաստանի կազմում էր, 1849–53 թվականներին՝ խմբագրի տպարանում: Նա դատափետում էր այլասերվող հնդկահայերին, կոչ անում մտածել ազգային առաջադիմության մասին, այլ ոչ թե ցոփ ու շվայտ կյանք վարել: Պարբերականը թղթակիցներ ուներ Ջնյուռնիայում, Բոմբեյում, Կալկաթայում, Մադրասում, որոնք տարածում էին թե՛ ստացված համարները և թե՛ թղթակցում: Մեծ տեղ են զրավում առևտրական լուրերը: Լուսավորություն, ազգ, ազգասիրություն, հայրենասիրություն հասկացողությունների տակ նա որոշակիորեն պաշտպանում էր հայ հետադեմ կղերականների հայացքներն ու իրավունքները: Նա սուր քննադատության էր ենթարկում Թաղիադյանին, չնայած «Արշալույս Արարատյան» թերթի խմբագիր Ղուկաս Պալդազարյանը, որը մեծ համարում ուներ հայկական բոլոր գաղթօջախներում, խնդրում էր նրան չվարկաբեկել Թաղիադյանի նման հնուտ գործչին, սակայն նա սուտ լուրեր էր տարածում, թե Թաղիադյանը թերթի տպագրության համար ընթերցողների հանգանակած գումարն իբր թե օգտագործել էր զեխ ու շվայտ կյանք վարելու համար: Իհարկե, ընթերցողները չէի հավատում նրան, սակայն նախանձից դրդված, թե օտար ավերից եկած մե-

կը մեծ համբավ է վայելում հնդկահայերի շրջանում, այնինչ ինքը գրկված է հարգանքից, շարունակում էր.

Ով դու Յեթում (Թաղիադյանի կեղծանունն էր – Լ. Ա.) մոլեկան,  
Քինախնդիր դավաճան:

Ուր ես առել գքո ուսումն

Ի Անդաման, թե Ջափան,

Ով դու Յեթում ավանակ,

Դու արարիր գքեզ ծանակ:

Իհարկե, Թաղիադյանը պատասխանում էր շատ լակոնիկ և քաղաքավարի...

Յետաքրքիր է աշխարհական մտավորականության և Գալստանյանի բանավեճը, երբ հնդկահայ թեմի առաջնորդը հետ էր կանչում Նոր Ջուղայի քահանա Սկրտչին, այսինքն կարգազանց էր անում, և ապա, նրան շնորհակալական թուղթ տալով նորից ուղարկում էր իր թեմում աշխատելու: Թուղթն ստորագրել էին հայ գաղութի ականավոր ներկայացուցիչներ Յովսեփ Էմինը և Մ. Բաղրամյանը: Գալստանյանին ուրիշ անելիք չէր մնում, քան փրփուրը բերանին պաշտպանել առաջնորդին: Բայց որովհետև ո՛չ առաջնորդը, ո՛չ էլ նրա համախոհները չէին պաշտպանում թերթին, նա գովաբանում է Ավստրալիայի ոսկերեր հանքերը և հայությանը կոչ անում գնալ հարստանալու: Ինքն էլ փակում է վիճադարանը և մեկնում այնտեղ:

Եղիազար Տեր-Յարությունյանի «Եղբայրասեր» տասնօրյա թերթը տպագրվել է 1862–63 թվականներին: Այն պահպանում էր լուսավորական եկեղեցու պատգամները և պայքարում ծուլման դեմ: Սա պարզունակ ու խայտաբղետ միութերի ժողովածու էր: Խնքագրի ցանկությունն էր հավաքել ներհակ ուժերը և համախմբել դրանց: Նա պաշտպանում է հայ մտավորականների և բժիշկների դատը Յնդկաստանում՝ գտնելով, որ տասնամյակներ շարունակ նրանք հավասարազոր էին անգլիացիներին, իսկ այդ օրերին սահմանափակում առաջ էին կանգնել, չէ՞ որ հայերն էլ եվրոպական ազգ են և հավասար իրավունքներից պիտի օգտվեն:

Թերթը լույս էր տեսնում խմբագրի սեփական տպարանում՝ տպագրելով դպրոցական հարցերի վերաբերյալ նյութեր, խառն լուրեր, ինչպես նաև արտատպություններ Ջնյուռնիայի «Արշա-լույս Արարատյան» թերթից: Տպագրել է նաև Բայրոնի մի բանաստեղծության թարգմանությունը: Նա անդրադառնում է Վանի և Ջեյթունի դեպքերին՝ մեծամասամբ լուրեր քաղելով անգլիական թերթերից և պաշտպանում հայերի իրավունքը: Նա տպագրել է նաև Սուլքիաս պարոնի մի բանաստեղծությունը, որը հորդոր էր ողջ հայությանը՝ կազմակերպվել և կռվի ելնել ազգի բոլոր թշնամիների դեմ: Նա հանգանակություն կազմակերպեց Յնդկաստանում՝ Ջեյթունի ապստամբներին օգնելու նպատակով: Նա դեմ էր Ռուսաստանի արտաքին քաղաքականությանը, ահա ինչու, երբ լուր ստացվեց, որ ձերբակալվել է Միքայել Նալբանդյանը, որին նա քաջն Վարդանի արժանավոր հետնորդն էր համարում, հայտարարում է, թե ցարը փոքր ժողովուրդների ուժերն օգտագործում է իր երկիրը ծաղկեցնելու համար, ապա ձերբակալում կամ գնդակահարում նրանց: Նա տպագրել է Նալբանդյանի «Երկու տողից» հատվածներ, «Ազատություն» և «Մանկության օրեր» բանաստեղծությունները: Նա չի մոռանում նշել աղքատ հայի վիճակը Յնդկաստանում և մեջբերում է Հովհաննես Դուլի, Նաղաշ Հովնաթանի հայրենասիրական ու խրատական ստեղծագործությունները.

«Ինչ երջանկություն, թե ունես փող,  
Մինչ հոգիդ կրե սարսափ ու դող,  
Էյ, Ադամ օղի՛ աշխարհս է անցնող,  
Դու էլ հող էիր ու պիտի դառնաս հող...», կամ՝  
«Թող չիման տեղ նստենք, ջուր լինի, խոտ,  
Խմենք կարմիր գինին մեկս զմեկի մոտ,  
Միմյանց ծաղիկ տվեք, վարդ անուշահոտ»:

Եղիազար Տեր-Հարությունյանի գործունեությունն անգլիացի գաղութարարների կողմից որակվեց հակապետական և 1863-ին թերթը փակվեց:

## ԱՐԵՎՏՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆԸ

Գերմանացի Յոհան Գուտենբերգի XV դարի կեսին կատարած մեծ հայտնագործությունը՝ տպագրության գյուտը, որի շնորհիվ տպված առաջին Աստվածաշունչը հայտարարվեց ամենակատարյալ հրաշագործությունը, երկու և կես տասնամյակ անց (1440–1465 թթ.) արդեն իր հաստատուն տեղը գտավ Իտալիայում: Վենետիկը դարձավ եվրոպական տպագրության ամենախոշոր կենտրոնը, որտեղ այդ ընթացքում գործում էր 250 տպարան: Եվրոպական երկրների հետ առևտուր անող հայ վաճառականները Վենետիկը դարձրել էին իրենց հարազատ վայրը: Պատահական չէր, որ այնտեղ գոյություն ուներ «Հայոց տուն», որն օթևան և ապաստարան էր տալիս հայ ուխտավորներին և պանդուխտներին: Պատահական չէր նաև, որ այլազգի տպարանների հետ միասին այդտեղ իր գործունեությունն սկսեց հայ տպագրությունը:

Տպագրության գյուտից դեռ մի դար չանցած՝ Վենետիկում հիմնադրվեց հայկական տպարան, որտեղ 1512 թ. տպագրվեց հինգ գիրք՝ «Ուրբաթագիրք», «Պատարագատետր» (արևմտահայ աղբյուրներում նշվում է «Պատարագամատոյց»), «Աղթարք», «Պարզատունար», «Տաղարան»: Առաջին հայ տպագրիչն էր Հակոբ անունով մի անձնավորություն, որ 1513 թ. տպված «Պատարագատետրի» վրա նշում է իր անունը՝ Հակոբ, հրատարակության թիվը և տեղը (1513 թ. Վենեժ՝ Վենետիկ) և հայցում ընթերցողներից՝ Աստծուց թողություն խնդրել իր մեղքերի համար, իրեն անվանում է Մեղապարտ: Քանի որ «Պատարագատետրը» այդ հինգ գրքերից վերջինն էր տպվել և վրան նշված էր 1513 թ., կարող ենք եզրակացնել, որ «Ուրբաթագիրքը» տպվել է 1512 թ. (նման ենթադրություն անում է Ռ. Իշխանյանը, իսկ Մ. Օրմանյանը նշում է ուղղակի՝ 1512 թ.):

Մեղապարտի հրատարակած գրքերն ըստ բովանդակության կարելի է բաժանել երեք տեսակի՝ հոգևոր-եկեղեցական, կիսաբժշկական և մշակութային: Ամենայն հավանականությամբ Մեղապարտի տպարանն աշխատել է երկուսից երեք տարի: Դրանից հիսուն տարի անց Աբգար Թոքատեցու (Եվդոկացու) պատվիրակությունը լինում է Դոռմի պապի մոտ, ապա անցնում է Վենետիկ և այնտեղ ձեռնամուխ լինում տպագրական գործին: Հայկական տառեր պատրաստելու թույլտվություն ստանալով, 1565 թ. հենց այնտեղ նա տպում է «Խառնայ փնթոր տոմար» խորագրով մի տոմարացույց, ապա՝ Սաղմոսարան: Զինված տպագրական պարագաներով՝ նա մեկնում է Կ.Պոլիս, որտեղ 1567 թ. հիմնում է հայկական տպարան: Ժամանակներ անց (1638 թ.) հայկական տպարան է գործում Նոր Ջուղայում, 1668 թ.՝ Լիվոռնոյում, 5 տարի անց՝ 1673 թ.՝ Մարսելում, իսկ հարյուր տարի անց՝ 1771 թ., սկսում է գործել Էջմիածնի տպարանը (առաջինը Հայաստանում), տասը տարի անց՝ 1781 թ. Պետերբուրգում հիմնադրվում և գործունեություն է ծավալում Գրիգոր Խալդարյանի տպարանը: Տպագրական ակտիվ գործունեություն է ծավալում հնդկահայ գաղութը. Մադրասում բացվում է տպարան, որտեղ տպվում է հայ մամուլի առաջնեկը՝ «Ազդարարը»:

Վայրերի թվարկումից երևում է, որ Արևմտյան Հայաստանը զուրկ էր տպարաններից (ի բաց առյալ նրա ամենաստվար գաղթօջախները՝ Կ.Պոլիսն ու Ջնյուռնիան), զերծ էին տպագիր գրքի, դրա հետ միասին տպագիր մամուլի հետ հաղորդակցվելուց: Տպագրությունը զարկ տվեց հայ մամուլի զարգացմանը: Սակայն, չնայած Էջմիածնի տպարանի գործունեությանը, արևմտահայ և արևելահայ մամուլի օրգանները լույս էին տեսնում Հայաստանի տարածքից դուրս՝ հայկական գաղթօջախներում: Անհրաժեշտ էր բուն Հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում հիմնադրել տպարաններ, արևմտահայ («գավառահայ») հորջորջվող ժողովրդին հաղորդակից դարձնել ժամանակի իրադարձություններին, զարկ տալ ազգային ինքնագիտակցությանը, արթնացնել

հայրենասիրական, ազգասիրական գաղափարներ, թույլ չտալ նրա մեջ մարի «իբրև մարդ» ապրելու ձգտումը:

Այդ ծանր ու պատասխանատու գործը ձեռնարկեց վանեցի Ակրտիչ Խրիմյանը, որը ծնողների, կնոջ ու դստեր մահվանից հետո՝ 1854 թ., կուսակրոնություն ընդունեց և Աղթամարում ձեռնադրվեց վարդապետ: Նորընծա վարդապետը ցանկանում էր սուրբ Ղազարի օրինակով Աղթամարը դարձնել հայ գրչության մշակութային կենտրոններից մեկը: Տեղի հոգևորականությունը փշերով դիմավորեց նրան: Խրիմյանն ստիպված վերադարձավ Կ.Պոլիս, որտեղ նա արդեն հռչակվել էր իր հայրենասիրական քարոզներով: Օսմանյան կայսրության մայրաքաղաքի ստվարաթիվ հայության շրջանում սկսվել էր սահմանադրական շարժումը: Շարժման ղեկավարներն էին Նիկողայոս Պալյանը, Նահապետ Ռուսիմյանը, Գրիգոր Օտյանը՝ «երեք ճշմարիտ հայրենասերները», որոնք գրկաբաց ընդունեցին նորընծա վարդապետին: Խրիմյանը քարոզիչ կարգվեց Ուսկյուտարի ս.Աստվածածին եկեղեցում: Իր քարոզների բնաբանը դարձնելով «հուր էկի արկանել», նա կրակոտ խոսքերով բորբոքում էր քարոզը լսող ժողովրդի հոգին: Սակայն Խրիմյանը քարոզով չէր բավարարվում: Նա քարոզը համեմատում էր առավոտյան ցողի հետ, որ արևի առաջին ճառագայթից կարող է գոլորշիանալ:

Ժողովրդի գիտակցության արթնացման համար անհրաժեշտ էին ներգործող միջոցներ՝ տպարանը, տպագիր խոսքը, պարբերական մամուլը: Մայրաքաղաքի ազդեցիկ գերդաստանների օժանդակությամբ Արապյան երեք եղբայրների տպարանում 1855 թ. հունիս ամսից սկսում է լույս տեսնել «Արծուի Վասպուրական» ամսագիրը, որի տիտղոսաթերթին գրված էր. «Արծուի Վասպուրական թռուցեալ հայրենասեր թեւօք յԱրծուրունի մենաստանէն Վարագայ ի Վան Տոսպ, թիւ 1, յունիս»: Այդ տպարանում 4 թիվ հրատարակելուց հետո վարդապետ Խրիմյանին հաջողվում է գնել տպագրական մեքենա և սեփական տպարան բացել Ուսկյուտարի Ս. Խաչ եկեղեցում: Մի ամբողջ տարի՝ 1855 թ. հունիսից մինչև 1856 թ. հունիսը, Կ.Պոլսում կանոնավոր հրատարակվում է

«Արծուի Վասպուրականին»: Սակայն դա խմբագրի վերջնական նպատակը չէր. ամսագրի ավանումն անգամ ցույց էր տալիս, որ այն պետք է իր թռիչքը կատարեր հայրենի Վասպուրականում: Նա տենդագին նախապատրաստվում էր՝ հողվածներով, գործունեությամբ, «բանի և գրչաւ» վերադառնալ հայրենի Վասպուրական: 1856 թ. մայիսի թվում (N 12) լույս է տեսնում «Դարձ Արծույն պանդխտելու ի Բյուզանդիոննն յաշխարհն իւր հայրենի Վասպուրական», որտեղ հեղինակը ի լուր ընթերցողների ցնծությամբ ավետում է, որ Արծիվն իր թռիչքը շարունակելու է հայրենի երկրում և կոչ է անում «տարաշխարհիկ հայկազուններին», հայ պանդուխտներին՝ վերադառնալ հայրենիք՝ «ամեն տեսակ թշուառութիւնները հայրենակից եղբարց հետ կիսելու»: Նա հայտնում է նաև, որ տպարանը փոխադրում են հայրենի եզերք՝ Վան, Վասպուրական և այնտեղ կշարունակեն կիսատ թողած գործը:

4. Պոլսի ազդեցիկ Օտյան և Այվատյան գերդաստանների աջակցությամբ, ժամանակի Հակոբոս պատրիարքի կոնդակով և Բ.Դռան ֆերմանով 1857 թ. հունվարից Խրիմյանը դառնում է Վանի մերձակայքում գտնվող Վարազա վանքի վանահայրը: Վանքը հանվում է Վասպուրականի հոգևոր առաջնորդի իրավասությունից: Վանքի միաբանությունը Խրիմյանին ընդունում է դժգոհությամբ և զայրույթով. պատճառը տնտեսական էր: Նրանք զրկվելու էին իրենց հասույթներից, որովհետև նոր վանահայրը վանքի հասույթներն օգտագործելու էր ազգօգուտ նպատակներով. դպրոց ու տպարան - այս է ամենակարևորը: Այն ժամանակվա պայմաններում տպարան հիմնել Արևմտյան Հայաստանում հանդգնություն էր, խիզախություն և հերոսություն: Տպարանի աշխատանքները, տպագրական գործը սկսելու և կարգավորելու համար մասնագետներ էին պետք, բանիմաց երիտասարդներ, իսկ նրանք կարող էին լինել միայն դպրոցի, ուսումնարանի ծնունդ: 1857 թ. մարտ ամսին դրվում է Վարազա վանքի «ժառանգավորաց» վարժարանի հիմնաքարը, իսկ օգոստոսի 1-ից սկսվում են դասերը: Դա 25 աշակերտի համար նախատեսված գիշերօթիկ վարժարան էր, երկհարկ շինություն, որի վերնահարկը մաքուր

կահավորված ննջասենյակներն էին: Դասասենյակներն ունեին գրասեղաններ, նստարաններ, գրատախտակներ (այն ժամանակվա Արևմտյան Հայաստանի համար բացառիկ երևույթ): Դպրոցն ուներ բնագիտական դիդակտիկ նյութեր, քարտեզներ, թանգարան-գրադարան՝ 270 հատոր հին ու նոր ձեռագիր մատյաններով: «Ժառանգավորացը» հոգևոր դպրոց էր, սակայն դասավանդվող առարկաների մեջ տեղ ունեին նաև աշխարհիկ առարկաներն ու գիտելիքները: Վարժարանի ուսուցիչների և շնորհալի աշակերտների օգնությամբ տարի ու կես անց հնարավոր է դառնում գործարկել տպարանը և շարունակել «Արծուի Վասպուրական» ամսագրի հրատարակությունը: Դա Արևմտյան Հայաստանի տարածքի առաջին տպարանն էր, սակայն անբողջ Հայաստանի (Արևելյան և Արևմտյան) առաջին պարբերականը: Պատմական հանգամանքների բերումով հայ պարբերական մամուլը սկզբնավորվել էր հայրենիքից դուրս. Կ.Պոլիս, Ջնյուռնիա, Եվրոպական գաղթօջախներ (Մխիթարյան միաբանության հրատարակություններ), հնդկահայ գաղթօջախ, Պետերբուրգ և Մոսկվա, արևելահայ մշակութային կենտրոն Թիֆլիս՝ ահա այն վայրերը, ուր լույս էին տեսնում հայերեն թերթերն ու ամսագրերը: Ծիշտ է, Էջմիածնում գործում էր տպարան, բայց պարբերական մամուլ՝ ոչ (ավելի ուշ սկսվեց «Արարատ» կաթողիկոսական ամսագրի հրատարակությունը):

1858 թ. հունվար ամսից վերսկսվեց «Արծուի Վասպուրականի» հրատարակությունը: Լայն էր ամսագրի գործակալների շարքը: Արևմտյան Հայաստանի բազմաթիվ կենտրոններ գործակցում էին Վարագում լույս տեսնող այդ պարբերականին: Նրա գործակալն է դառնում նաև Սալմաստում գտնվող մի մտավորական՝ Հակոբ Մելիք-Հակոբյանը՝ ապագա հռչակավոր վիպասան Րաֆֆին, որի հարաբերությունները «Արծուի» խմբագրի հետ չեն սահմանափակվում դրանով: Րաֆֆին ոչ միայն նամակագրական կապ է պահպանում «Արծուի» խմբագրի հետ, այլև Արևմտյան Հայաստան շրջագայելու ժամանակ երեք ամիս վայելում է Խրիմյանի հյուրասիրությունը (1858 թ.) և նրա մասին հող-

ված լույս ընծայում «Հյուսիսսփայլում» 1860 թ.: Վարագյան շրջանի ամսագիրը շահեկանորեն տարբերվում էր պոլիսյան շրջանից: 1858 թ. N 1-ում «Նախաբան առ ընթերցողս» հոդվածում Խրիմյանը ներկայացնում է իր ծրագիրը, գործունեության նպատակները: Նյութերի դասակարգումը նա բաժանում է մի քանի մասերի.

ա) Հանդես աստվածապաշտութեան - հոդվածները նվիրվելու են հայոց հավատին և եկեղեցուն, հոգևորականությանը, հայ եկեղեցու նշանավոր գործիչներին:

բ) Հանդիսարան հայրենաշէն առաքինեացն հայոց - պետք է մեծարվեն հայ քաղաքական գործիչները՝ «նախնի քաջազունք մեր», որպեսզի նրանց հայրենասիրական գործերը դաս լինեն ժամանակակիցների համար:

գ) Տեսարանք հայրենի աշխարհաց - նկարագրելու են Հայաստանի գյուղերը, քաղաքները, եկեղեցիները, մեմաստանները. հայը պետք է ճանաչի իր հայրենիքը:

դ) Բուրաստան բարոյական առաքինութեանց – բարոյախոսական հոդվածներ, նոր սերնդի դաստիարակություն:

ե) Թանգարան հայկական դպրութեան - ինքնուրույն գեղարվեստական գործեր, թարգմանություններ, հին մատյաններում գետեղված հիշատակարաններ: Փաստորեն, օժանդակելու է գեղարվեստական գրականության զարգացմանը, մշակույթին, պատմությանը:

Հայրենիքում լույս տեսած ամսագրի առաջին համարներում խմբագիրը, տալով «Արծուի» հիմնադրման պատմությունը, ընթերցողներին հաղորդում է պարբերականի բարերարների, սատարողների, հրատարակությանը աջակցողների մասին, տալիս է «Արծուանուեր ընկերութեան պանծալի անունները»<sup>1</sup>: Ցուցակում գետեղված են 68 անձնավորության անուններ, որոնք նվիրել են 43850 դուրուշի պատկառելի գումար: Հայրենի Վասպուրականի աջակիցները 18 հոգի են, որոնք օգնել են ամսագրի հրատարա-

<sup>1</sup> Արծուի Վասպուրական, 1858 թ., N 1, էջ 13–15:

կությանը 7650 դուրուշով: 1858 և 1859 թվերին ամսագիրը կանոնավոր լույս է տեսնում՝ ամեն տարի 12 թիվ: 1859 թ. N 1-ում խմբագիրը շնորհակալություն է հայտնում ամսագրի բարերարներին, պատմում նպատակների և իր առաջ կանգնած ահռելի դժվարությունների մասին: Լուսավորության տարածումը, Արևելյան և Արևմտյան Հայաստանների հայության միասնությունը և համախմբումը խմբագիրը համարում է ամսագրի գլխավոր նպատակը: Խրիմյանն ընթերցողներին հաղորդում է խմբագրի առաջ կանգնած ահավոր տառապանքների և դժվարությունների մասին: Տպարանը աշխատում է այնպիսի վայրում, ուր նման գործի ավանդույթներ չկան. տպագրիչները, ծուլողները, գրաշարները անփորձ պատանիներ են, ժառանգավորացի սաները: Նրանք սակավաթիվ են և շատ ծանրաբեռնված: Տպագրության համար անհրաժեշտ նյութերը՝ «զկաղապար, գթուղթ, զմեւան» տեղում հնարավոր չէ ձեռք բերել, այլ միայն հեռավոր Կ.Պոլսից հայթայթել: Հաղորդակցության վատթար միջոցների պատճառով ոչ հեղինակների հոդվածներն են ժամանակին տեղ հասնում, ոչ էլ ամսագրի թվերն են բաժանորդներին հասնում: Տպագրական մեքենան շատ փոքր է, իսկ նրա հրատարակելիք գործերը՝ ծավալուն: Տպարանում հաճախ ընդհատվում էր ամսագրի հրատարակությունը, որովհետև գյուղական վարժարանի համար անհրաժեշտ էր տպել «քերական և հեգարան»: Երբեմն պետք էր լինում մեծ տպաքանակ՝ 2000 օրինակ: Այս ժամանակվա համար դա շատ մեծ թիվ էր և հասկանալի է, որ ամսագիրը երկար ժամանակ լույս չէր ընծայվում: Տպվում էին դպրոցական դասագրքեր և ծրի բաժանվում գյուղական վարժարանների աշակերտներին: Արևմտյան Հայաստանի առաջին տպարանի հիմնադիրն իր հոգու պարտքն էր կատարում հայրենի Վասպուրականի գավառական դպրոցների աշակերտների առաջ՝ արժանանալով նրանց շնորհակալությանն ու երախտագիտությանը, իսկ ամսագրի բաժանորդների դժգոհությանը՝ նրա հրատարակության ուշանալու պատճառով:

Հետաքրքիր է մի հանգամանք. հաջողվում էր արդյոք խմբագրին իրականացնել իր ծրագիրը. ամսագրի հոդվածների բովանդակությունը համապատասխանում էր բաժինների բնույթին: Հպանցիկ անդրադարձն անգամ ամսագրի հոդվածների բովանդակությանը ցույց է տալիս, որ խմբագիրն ամեն ինչ անում էր, գործադրում էր ահռելի ջանքեր նպատակին հասնելու համար:

**«Հանդես աստվածապաշտութեան եկեղեցաշէն հարգն»** բաժինը նվիրված էր քրիստոնեական կրոնին, հայ առաքելական եկեղեցու դավանանքին, հայ եկեղեցու սրբերի կարգն անցած մեր կաթողիկոսներին, եպիսկոպոսներին, նրանց հայրենասիրական առաքելության վերհանմանը և հայ շինականին նրանց հետ հաղորդակցվելուն: Ըստ հերթականության ընթերցողին է ներկայացվում Թադեոս Առաքյալի, Գրիգոր Լուսավորչի, նրա որդիների ու թոռների՝ Արիստակես, Վրթանես, Հուսիկ, Դանիել հոգևորականների կատարած գործերը, ընթերցողի աչքի առաջ հառնում են մեր փառավոր, երբեմն նաև ողբերգական հոգևոր գոծիչների՝ Ներսես Մեծի, Սահակ Պարթևի կատարած սխրանքները: Առանձին սիրով, հարգանքով և երկյուղածությամբ է լեցուն Մեսրոպ Մաշտոցին նվիրած հոդվածը<sup>2</sup>, ուր ընդգծվում է նրա կատարած մեծ գործը՝ հայ գրերի գյուտը, իր և հետագա ժամանակների համար հաղթանակ ապահովող մեր 36 մատյան գունդը, որի շնորհիվ հայությունը հարատևեց դարերի հոլովությամբ: Հոդվածներ են նվիրվում նաև մեր «սուրբ թարգմանիչներին»՝ Մաշտոցի աշակերտներին: Մեծարվում է «քերթողահայր» և հայ դպրության «ակնաղբիւր» Մովսես Խորենացին<sup>3</sup>, գնահատվում է «վսեմախօս պատմագիր» Եղիշեն<sup>4</sup>, ընտիր աստվածաբան Եզնիկ Կողբացին և հայ փիլիսոփա Դավիթ Անհաղթը<sup>5</sup>: Փաստորեն, «եկեղեցաշէն հայրեր» անվանումներով արժեվորվում և մեծարվում են հայ մշակույթի մեծերը, նրանք գնահատվում են իբրև սրբերի շարքն

<sup>2</sup> Երևան տեղում, 1858, N 7:

<sup>3</sup> Երևան տեղում, 1858, N 9:

<sup>4</sup> Երևան տեղում, 1859, N 10:

<sup>5</sup> Երևան տեղում, 1858, N 12:

անցած դեմքեր՝ ամենակարևոր չափանիշը համարելով հայության գոյատևման մեջ նրանց ունեցած դերը: Այդ բաժինը շարունակվում է Գյուտ կաթողիկոսին, Հովհաննես Մանդակունուն, միջնադարի գիտական մտքի ներկայացուցիչներ Անանիա Շիրակացուն, Թեոդորոս Քոթենավորին, Մովսես Քերթրոզին նվիրված հոդվածներով: Դրանք կրկին անգամ հավաստում են, ապացուցում, որ «սրբերի շարքը դասված մեր մեծերը»՝ Ժողովրդի ծոցից դուրս եկած մարդիկ, բարձր պահեցին հայության անունը և համընթաց քայլեցին ժամանակի գիտական մտքի հետ: Այդ բաժնի հոդվածների մեծ մասի հեղինակն ամսագրի խմբագիր Մ. Խրիմյանն է, սակայն կան նաև հոդվածներ, որոնց հեղինակները Մկրտիչ Ատոմյանը և Արտամեսոցյանն են՝ Վարազա ուխտի անդամները, Ժառանգավորացի ուսուցիչները, Խրիմյանի գաղափարակիցները: Բաժինը նպատակամղված էր ընդգծել եկեղեցու դերը հայապահպանության համար մղվող պայքարում, երբեմն քննադատել նրա ապաշնորհ ներկայացուցիչներին՝ սակայն մեղմ ու վախվորած:

«Հանդիսարան հայրենաշէն առաքինեաց» բաժնի հոդվածները քննարկում են Հայկ, Արամ, Արա Արամյան (Արա Գեղեցիկ) նահապետների, հայ առաջին թագավորների (Պարոյր, Տիգրան Երվանդյան, Վաղարշակ, Արշակ I և II, Արտաշես II, Վռամշապուհ Արշակունի, Բագրատունյաց տոհմի թագավորների՝ Աշոտ Ա., Սմբատ Ա., Աշոտ Երկաթ և Աշոտ Ողորմած, Գագիկ Բագրատունի, Կիլիկիայի հայ իշխանական տների ներկայացուցիչներ) կատարած գործերը: Այդ բաժնի հոդվածներն աչքի չեն ընկնում պատմական և գիտական ճշմարտացիությամբ, իրար են խառնված հայկական թագավորական մի քանի դինաստիաներ: Հեղինակների նպատակը պատմական փաստերի, դրվագների ճշտումը չէ: Այդ բաժնի հոդվածները յուրահատուկ պատմական դաս են, հայ պետական այրերի հայրենասիրական գործունեության գնահատական, հայկական պետականության գովերգում: Չնայած պատմական անճշտություններին, այսօրվա տեսանկյունից նրանց անընդունելի լինելուն (մանավանդ Արշակ II-ին և Պապին

տված գնահատականներին), այն ժամանակվա պայմաններում այդ հողվածներն ունեին դաստիարակչական մեծ նշանակություն, որովհետև գովերգվում էր հայրենասիրությունը, ազգային միաբանությունը: Օսմանյան լծի տակ հեծող արևմտահայության համար այդ հողվածները հայրենասիրության դասեր էին, դիմադրության կոչ, ազգային ոգու հարատևության պատգամ: Հեռու վանելով ողբն ու կականը՝ օսմանյան բռնակալության պայմաններում խմբագիր-հողվածագիրը ներշնչում և հայրենիքի վերանորոգման պատգամներ էր հղում ընթերցողներին: Հայկական պետականության բացակայության պայմաններում ընթերցողին մատուցել հերոս նախնիների կատարած սխրանքների մասին հողվածներ, նշանակում էր դաս տալ ժամանակակցին և նրան պատրաստել պայքարի:

**«Տեսարանք հայրենի աշխարհաց»** բաժինը նպատակ ուներ իր ընթերցողին ծանոթացնել պատմական Հայաստանի վայրերին, որ հայը ճանաչի իր հայրենիքը: Հայկական վանքերն ու եկեղեցի - մենաստանները, քաղաքները, գյուղերը, «լայնածավալ Հայաստանը իր սրտահույզ տեսարաններով, իր տխուր ու վեհապանծ փլատակներով, Մեսրոպների, Վարդանների դեռ խոսուն ստվերներով»<sup>6</sup>: Այդ բաժնի հողվածներից ընթերցողը սկզբում ծանոթանում է Վարագա ողջ համալիրին (դրան նվիրվում է 3 թվերում լույս տեսնող հողվածաշար). արտակարգ մեծ է «Վան կամ Շամիրամակերտ» խորագիրը կրող 3 թիվ հողվածաշարը, որտեղ հեղինակը ներկայացնում է և պարզաբանում քաղաքի պատմությունը, իր ժամանակը: Մյուս հողվածը Վան-Տոսպ նահանգի տարբեր գավառների, գյուղերի, գյուղաքաղաքների, վանքերի և այլ հայտնի վայրերի՝ Ակռփի, Արտամետ, Կռնկա վանք, Ձվստան, Բերդակ, Սուրբ Խաչի վանք, Կենդանյաց և Կուռուպաշ գյուղեր, Կարմրվոր Սուրբ Աստվածածնի վանք և Շուշանա գյուղ... այնպիսի հետաքրքիր նկարագրություններ են՝ դրանց զուգահեռ պատմական փաստերով, որ ընթերցողին

<sup>6</sup> Միքայել Վարանդյանն այդպես էր գնահատում Մ. Խրիմյանի կատարած գործը (Վարանդյան Մ., Հայկական շարժման նախապատմությունը, Ժնև, 1912, էջ 296):

թվում է քայլում է այդ վայրերով, զմայլվում է ճարտարապետական կոթողներով, միաժամանակ ցավ զգում, կսկծում այդօրյա կացությունից: Թվարկած շարքը կարելի է շարունակել և նույնիսկ այսօրվա ընթերցողին կթվա, թե քայլում է իր թանկ ու կորուսյալ հայրենիքի անմնամ վայրերով: Սակայն խմբագիրը և ամսագրի մյուս աշխատակիցները չեն բավարարվում Արևմտյան Հայաստանի նկարագրությամբ: Խմբագիրն իր կամքից անկախ առնչվում է նաև Արևելյան Հայաստանին: Մի քանի խոսք պատճառների մասին:

Տպարան աշխատեցնելն Արևմտյան Հայաստանում, այն էլ Վարազա վանքում, մեծ հանդգնություն էր. դիմակայող պատճառները բազմաթիվ էին, սակայն ամենամեծը նյութական միջոցների պակասն էր: Իր հակառակորդ վանականները հաճախ էին ընդզծում, որ խրիմյանը տարին մեկ «վազում է» Կ. Պոլիս՝ տեղի մեծահարուստներից օգնություն խնդրելու: Իր խմբագրական հողվածներում նա ընթերցողներից ներողություն էր խնդրում ամսագիրն անկանոն լույս ընծայելու, ժամկետները խախտելու համար: Ամսագրից բացի, նա ցանկանում էր տպարանում հրատարակել առօրյա կարիքները հոգացող գրքեր՝ Մաշտոց, ճաշոց, Ավետարան, Ընթերցարան, սակայն չէր կարողանում և ընթերցողներին հաղորդում էր, թե ինչքան մեծ գումար էր պետք «այդ խոշոր գրքերու տպագրութեան ծախուց» համար: Նա Պոլիս էր մեկնում նույնիսկ «քանի մը փաթեթ թուղթ իր ամսաթերթերուն համար» առնելու: Պոլիս գնալուց հոգնած խրիմյանը որոշեց նյութական միջոցներ հայթայթելու համար ձեռնարկել մի մեծ ճանապարհորդության՝ մեկնել Արևելյան Հայաստան: Այդ պատճառով 1860 թ. երկու թիվ հրատարակվելուց հետո դադարեցվեց ամսագրի հրատարակությունը, ավարտվեց «Արծուի Վասպուրականի» Վարագյան առաջին շրջանը: Իր մերձավոր աշխատակիցներով (Գ. Սրվանձտյանց, Հ. Սևիկյան, Ե. Տևկանց) խրիմյանն ուղևորվեց Արևելյան Հայաստան, նաև արևելահայ այլ կենտրոններ (Թիֆլիս)՝ տպագրական գործի համար հատուկ հանգանակություն կատարելու, նաև շփվելու տեղի մտավորականության և

հոգևորականների հետ: 1860 թ. նոյեմբերին սկսված ճանապարհորդությունն ավարտվում է 1861 թ. հուլիսին: Այդ ընթացքում նա հետաքրքիր գործունեություն է ծավալում նաև արևելահայ կենտրոններում, սակայն մեր խնդիրը չէ դրանց անդրադառնալ:

Ճանապարհորդությունն արտակարգ ազդեցություն ունեցավ ամսագրի համար: Ընդլայնվեց հոդվածների բովանդակությունը: Շատ կարևոր էին ամսագրում «Տեսարանք հայրենի աշխարհաց» բաժնի հոդվածներն ու վերլուծությունները: Ճանապարհորդությունից վերադարձած Խրիմյանը վերսկսեց ընդհատված ամսագրի հրատարակության գործը: Խմբագիրը հոդվածաշար տպեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Ամենայն հայոց կաթողիկոսի նշանակության և գործունեության մասին, կոչ անելով արևմտահայությանն ու արևելահայությանը՝ զործակցել, համախմբել իրենց ուժերը: Հոդվածաշար նվիրվեց Երևանին, նրա ազգային գործիչներին, Նախիջևանին, Վերին ու Ներքին Ազուլիսներին, Գանձակին, Ալեքսանդրապոլին, Սյունիքին, Ղարաբաղին, Շուշի քաղաքին: Դրանք սոսկ նկարագրություններ չէին, այլ քննարկումներ, վերլուծություններ, համեմատություններ և առաջարկությունների շարք: Հետաքրքիր հոդված նվիրվեց նաև արևելահայ մշակութային կենտրոն «Տփխիս քաղաքին» (Թիֆլիսին):

Ուշադրության արժանի են նաև «Բուրաստան բարոյական առաքինությունց» և «Թանգարան հայկական դպրութեան» բաժինները: Եթե մինչև Արևելյան Հայաստան կատարած ճանապարհորդությունը «Բուրաստան բարոյական առաքինությունց» բաժինը պարունակում էր բարոյախոսական հոդվածներ, նոր շրջանում արմատապես փոխվեց նրա բնույթը: Կրթական-դաստիարակչական հոդվածներում քննարկվում էին դպրոցական հարցեր: Ինչպիսիսն պիտի լինի դպրոցը. եկեղեցական, հոգևոր, թե աշխարհիկ՝ ժողովրդական դպրոց: Խմբագրի համար կարևոր հարց էր հոգևոր դասի տգիտությունը վերացնելու խնդիրը: Դրա համար անհրաժեշտ էր ստեղծել եկեղեցական դպրոցներ, որոնք պետք է հիմնվեն հայկական վանքերում և դառնան լուսավորության շիջած կանթեղները վերստին վառողները: Խմբագրի կարծի-

քով ամեն հոգևոր թեմ պետք է ունենա իր ժառանգավորաց վարժարանը, որպեսզի պատրաստի ազգին, եկեղեցուն և հայրենիքին նվիրված կրթված հոգևորականներ: Եվ առաջին օրինակ տվողը պետք է լինի Ամենայն Հայոց հայրապետը, որը Էջմիածնի «մեծահարուստ» վանքում դպրոց պետք է բանա գոնե 100 աշակերտի համար<sup>7</sup>: Սակայն Խրիմյանը բարձրացնում էր նաև **ժողովրդական դպրոցի** խնդիրը: Ըստ հեղինակի՝ ժողովրդական դպրոցներ պետք է բացել Արևելյան և Արևմտյան Հայաստանի բոլոր գավառներում, առավելապես՝ գյուղերում, որովհետև ժողովրդի մեծ մասը գյուղաբնակ է: Հայրենյաց լուսավորության խկական օջախը համարելով ժողովրդական դպրոցը, հողվածագիրը գտնում էր, որ դրա համար պետք է միավորվեն ազգի հոգևոր և քաղաքական ղեկավարները:

**«Թանգարան Հայկական դպրութեան»** բաժինը պարունակում էր հայկական կարևոր գրչագիր մատյաններից հայ ժողովրդի պատմության վերաբերյալ արժեքավոր հատվածներ և գեղարվեստական գրականության նմուշներ: Հատվածներ են տալվում Բերդակ գյուղի հին գրչագիր Հայսմավուրքից, Կենդանանց գյուղի գրչագիր Ավետարանից, Շուշանց գյուղի մեծ Ավետարանից և այլ հիշատակարաններից: Սակայն այդ հատվածների ընտրությունը կատարվում էր խիստ նպատակային. հրատարակվում էին այն հատվածները, որոնք վերաբերում էին հայ ժողովրդի պատմության որևէ նշանակալի դրվագի: Դրանք նպատակամղված էին հասարակ ժողովրդին հաղորդակից դարձնել իր բազմադարյան գոյապայքարին և հարատևության գաղտնիքին: Բաժնի երկրորդ տեսակի գրվածքները գեղարվեստական գրականության նմուշներ էին, մեծ մասամբ Վարագա ժառանգավորաց վարժարանի աշակերտների գրական թոթովանքները. Արսեն Թոխմախյան, Եղիշե Մեսրոպյան, Պաղտասար Գասպարյան,

<sup>7</sup> Այդ հողվածի հրատարակությունից միայն 13 տարի հետո՝ 1874 թ. Գևորգ Դ կաթողիկոսը Էջմիածնում բացեց Գևորգյան ճեմարանը, որը մեծ գործ կատարեց կրթության և լուսավորության բնագավառում, նաև կրթված հոգևորականներ պատրաստելու գործում:

Հրաչյա Մարգար և ամենից նշանավորը՝ Գարեգին Սրվանձույանցը, որի առաջին քայլերն անգամ վկայեցին նրա հետագա փայլուն գործունեության արդյունքները՝ «Արծուի» էջերում առնականացավ հայ բանահյուսության, բանագիտության, ժողովրդագրության, ազգագրության մեծ երախտավորը, հայ եկեղեցու արժանընտիր հոգևորականը, հայ ազգային ազատագրական շարժման իրական քարոզիչը, հույսը սեփական ժողովրդի ուժերին հառած մարգարեն: Չի կարելի մոռանալ Ջեյթունի 1862 թ. ապստամբության պարտությունից հետո հուսահատ ժողովրդին ոգեկոչող «Ակսենք մեր գործ, նորեն սկսենք», նաև հայ շինականի սոցիալական ժանր վիճակը նկարագրող «Շինական հայոց կյանք ի Հայաստան» Գ. Սրվանձույանցի սովորածավալ հոդվածները:

Երկար չտևեց «Արծուի Վասպուրականի» հրատարակությունը: 1862–1863 թթ. հրատարակվեց միացյալ 6 թիվ, 1864-թ. և՛ 6 թիվ: Դրա պատճառն այն էր, որ 1862 թ. օգոստոս ամսին հայր և ծագ «Արծիվը» (Մ. Խրիմյանն ու Գ. Սրվանձույանցը) Կ. Պոլսի Ազգային ժողովի հանձնարարությամբ, տարոնահայության խնդրանքով Խրիմյանին նշանակել էր Մշո Ս.Կարապետի վանահայր և Տարոնի հոգևոր առաջնորդ՝ նրա վրա թողնելով Վարագա վանքի վանահայրությունը: Նախապատրաստական մեծ աշխատանքից հետո, վերցնելով Վարագա փայտյա տպագրական մեքենան, 1862 թ. օգոստոսին նրանք հասան Մուշ և արդեն աշնանը Խրիմյանն անցավ իր պարտականությունների կատարմանը:

Նոր ուսումնական տարում Աբ. Կարապետի վանքում բացվեց նոր «Ժառանգավորաց» վարժարանը, որի տնօրենն ու գլխավոր ուսուցիչը Մ. Խրիմյանի հրահանգով դարձավ Վարագա «Ժառանգավորացի» ամենահայտնի սանը՝ Գարեգին Սրվանձույանցը: Մի քանի ամիս անց՝ 1863 թ. ապրիլին այդտեղ սկսեց հրատարակվել «Լրատար Արծուիկ Տարօնոյ» երկչաբաթաթերթը՝ Գարեգին Սրվանձույանցի խմբագրությամբ: Երկչաբաթաթերթի տիտղոսաթերթին նշված էր՝ «Թռուցեալ թևօք Վասպուրական Արծուոյն»՝ դրանով հայտնելով իր հավատարմությունը «Արծուի

Վասպուրականի» գաղափարներին: Դա երկրորդ տպարանն էր, որ հաստատվեց Արևմտյան Հայաստանում: Իսկ այդ տպարանի առաջին գավակը՝ «Արծուիկ Տարօնոն», որ լույս էր տեսնում աշխարհաբար (ոչ թե գրաբար, ինչպես «Արծուին») մեծ գործ կատարեց հայ շինականի աչքերը բացելու, պայքարելու «գայլերի ոհմակի դեմ», սեփական և այլազգի շահագործողների դեմ: Այդ երկշաբաթաթերթն էր, որ «Ողբախառն աղերս» անունով բողոք մատուցեց Կ.Պոլսի հայոց պատրիարքարանին: Դա ոչ թե աղերս էր, այլ բացահայտ բողոք՝ «ալ դանակը մեր ոսկորին հասած է» արտահայտությամբ: 1864 թ. քաղաքական մատնությամբ փակվում է երկշաբաթաթերթը: Մի քանի ամսից հետո վերսկսվում է թերթի հրատարակությունը:

Այլաբանական քարոզներին դիմող երկշաբաթաթերթը, որը կոչ էր անում «գայլերի դեմ մարտնչելու համար առիւծ դառնալ», երկար չի գոյատևում: Հայ խավարամիտների ամբաստանությունների հետևանքով 1865 թ. վերջնականապես դադարում է երկշաբաթաթերթի հրատարակությունը: Փակվում է տպարանը և դադարում գործելուց:

Իրենց գործունեության ողջ ընթացքում հայր «Արծիվը» և ծագ «Արծուիկը» անընդհատ ցանկանում էին և ջանքեր էին գործադրում նոր տպարան բացելու և հրատարակչական գործունեություն ծավալելու համար, բայց չէր հաջողվում: Սակայն Մ. Խրիմյանի և Գ. Սրվանձտյանցի այդ բնագավառի գործունեությանը ևս խոր հետք թողեց հայ գրատպության բնագավառում:

## ՇՈՒՇԻԻ ՏԵՂԸ ՀԱՅ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայ տպագրական գործի պատմության մեջ Շուշին յուրահատուկ տեղ ունի թե՛ հոգևոր-գաղափարական և թե՛ հրատարակչական ժառանգության առումով: Անհրաժեշտ է նշել, որ Հայոց Արևելից կողմերում հոգևոր-լուսավորչական կյանքի աշխուժացումը և այնուհետև բուռն զարգացումը պայմանավորված էր XIX դարի առաջին տասնամյակներին աշխարհաքաղաքական փոփոխությունների ազդեցությամբ տարածաշրջանում տեղի ունեցած մի շարք արտաքին և ներքին հանգամանքներով, որոնք կարևոր նշանակություն ունեցան Արցախի համար:

1813 թ. Գյուլիստանի պայմանագրից հետո՝ մինչև 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով հաստատված իրավիճակը, Արցախը շարունակում էր պահպանել իր առաջապահ դիրքերն արևելքից և հարավից եկող հարձակումների դեմ: Դրա վկայություններից է 1826 թ. վերսկսված ռուս-պարսկական պատերազմի սկզբնափուլում Շուշիի բերդի հերոսական պաշտպանությունը՝ ռուսական կայազորի և հայկական աշխարհազորի միացյալ ուժերով:

Այդ ժամանակաշրջանում Ռուսական կայսրության կառավարության եկեղեցական քաղաքականության արտահայտություններից էր 1815 թ. Գանձասարի կաթողիկոսության վերածումը միտրոպոլիտության և 1820-ական թվականներին բողոքական միսիոներներին Շուշիում գործունեություն ծավալման արտոնություն տալը: Ինչպես նշել է Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը, ռուսական կառավարությունը, նպատակադրվելով մահմեդական և այլ ոչ քրիստոնյա հպատակների մեջ քրիստոնեական հավատը տարածել, 1823 թ. «արտօնած էր Հելլուետիոյ

Բասիլիա աւետարանական յարանուանութեանց անդամներէն երկուքը Շուշի հաստատուիլ եւ այդ նպատակին աշխատիլ»<sup>1</sup>: Խոսքը Շվեյցարիայի Բազել քաղաքից եկած բազելցի միսիոներներ Ավգուստոս Դիորիխի և Ֆելիցիտա Ջարեմբայի մասին է: Դիորիխը Մոսկվայում Սալլանթյան Միքայել վարդապետի մոտ գրաբար էր սովորել, իսկ Ֆելիցիտա Ջարեմբան ծագունով լեհ էր և, ուսանելով Դորպատի համալսարանում, փիլիսոփայության դոկտորի աստիճան էր ստացել:

Շուշիում նրանք զբաղվեցին 1827 թ. նոր բացված ուսումնարանն աշակերտներով համալրելով, որոնց թիվը կարճ ժամանակում հասավ 130-ի: Հրատարակչական գործը սկսելու նպատակով նրանք տպարան հիմնեցին, որի համար տառեր էին բերվել Մոսկվայի Լազարյան ծեմարանից<sup>2</sup>: 1828 թ. լույս տեսավ «Պատմութիւն Սուրբ գրոց»-ը, որը ռուսերենից թարգմանել էր Հարություն Ջուղայեցի-Դավթյանը: 1829 թ. տպագրվում են քրիստոնեական երկու ձեռնարկներ և Պողոս Ներսիսյանի «Համառօտութիւն հայկական քերականութեան»-ը, իսկ 1830 թ. վարդապետ Հովսեփ Արցախեցու բառարանը՝ գրաբարից աշխարհաբար<sup>3</sup> («Համառօտ բառագիրք ի գրաբարէ աշխարհաբար ի հայրապետութեան Տեառն Եփրեմի սրբազնասուրբ Կաթողիկոսի Ամենայն Հայոց (1809–1830)»): Հետքերի է, որ նույն կազմի վրա առկա է «ի պէտս համբակաց» դարձվածքը<sup>4</sup>: Հաջորդ երկու-երեք տարիների ընթացքում լույս տեսած գրքերը կրոնա-բարոյախոսական բնույթի թարգմանություններ էին՝ «Տասն և վեց կարճառոտ քարոզներ», «Շատ հարկաւոր հարցմունքներ», «Աւետարանի ճշմարտութեան և զօրութեան համար», «Սիրտ մարդու, որ է տաճար Աստուծոյ կամ գործարան սատանայի», «Քարօզ աւագ ուրբաթ օրին համար մեր փրկիչ Հիսուս Քրիստոսի չարչարանաց

<sup>1</sup> Օրմանեան Մ., Ազգապատում, էջմիածին, 2001, հ. 9., էջ 4296:

<sup>2</sup> Իշխանյան Ռ. Ա., Հայ գիրքը, Երևան, 1981, էջ 111–112:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 112:

<sup>4</sup> Ավագյան Ս., Դարաբարդի մամուլի պատմություն (1828–1920), Երևան, 1989, էջ 26:

և մահուան վրայ» և այլն: Կրոնա-քարոյախոսական գրքերի հրատարակությունները բազելցի միսիոներներն իրականացնում էին աշխարհաբարով: Որոշ գրքեր, օրինակ՝ «Ժամանակի վերջին» և «Կարճառօտ աղոթքներ շաբաթի ամեն մեկ օրին համար» թարգմանությունները լույս տեսան «ի հայրապետութեան Տեառն Յովհաննու Կարբեցոյ սրբազան սուրբ կաթողիկոսի Ամենայն Յայոց (1831–1842) և հրամանաւ իշխանազնի Ջալալեան սրբազան արք. և միտրապոլտի Յայոց, ի Շուշի ամի տեսառն 1822»: Այսպիսի նշումը բանասիրության մեջ վեճերի առիթ է տվել: Գուրգեն Սևակը, հետևելով Գրիգոր Վանցյանին<sup>5</sup>, գտնում էր, որ այդ գիրքը լույս է տեսել 1822 թ.<sup>6</sup>: Սակայն մատենագետ Յայկ Դավթյանը և նրան հետևող Սմբատ Ավագյանը<sup>7</sup> նշել են, որ դա վրիպակ է, քանզի Յովհան Կարբեցին կաթողիկոս էր 1831-ից, իսկ Բաղդասար Յասան-Ջալալյանը միտրոպոլիտ՝ 1830-ից: Բացի այդ՝ գրքի վերջում բերված է Շուշիում 1829–1832 թթ. լույս տեսած գրքերի ցուցակը: Ուստի, նրանք եզրակացրել են, որ 1822-ի փոխարեն պետք է լինի 1832 թ.: 1833 թ. լույս տեսավ «Քերականութիւն Յայկազեան լեզուի. Յօրինեալ ի Յայր Սիքայէլ վարդապետ Չամչեանց»: Այն վերահրատարակվել էր Վենետիկի 1801 թ. հրատարակության հիման վրա: Տիտղոսաթերթի վրա գրված է. «ի հայրապետութեան Տ. Յովհաննու Կարբեցոյ սրբազան սուրբ կաթողիկոսի Ամենայն Յայոց և հրամանաւ իշխանազնի Ջալալեան սրբազան արք. և միտրապոլտի Յայոց, ի Շուշի»:

Յայաստանում Ս. Էջմիածնից հետո երկրորդը Շուշիի տպարանն էր, որտեղ լույս տեսան 11.679 օրինակ հայերեն, 728 օրինակ պարսկերեն, ինչպես նաև այլ լեզուներով գրքեր<sup>8</sup>: Բազելյան

---

<sup>5</sup> Վանցյան Գ., Պատմական քերականություն արևելահայ լեզվի, 1906, էջ 112:

<sup>6</sup> Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955:

<sup>7</sup> Ավագյան Ա., նշվ. աշխ., էջ 20, 22:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 25:

միսիոներների կրթական-հրատարակչական գործունեությունը տևեց ութ տարի<sup>9</sup>:

Բազելյան միսիոներների կրթական-դավանափոխական գործունեությանն ընդհանացան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և Բաղդասար միտրոպոլիտը: Այդ պայմանավորված էր նրանով, որ իբրև թե մահմեդականներին չկարողանալով դարձի բերել (ինչը գործնականում անհնար էր, քանի որ նրանք հայտնի են իրենց կրոնական մոլեռանդությամբ), բազելյան միսիոներները քարոզչական գործունեություն էին ծավալել հայերի միջավայրում (հայ հասարակության տարբեր խավերը ոգեշնչվել էին նրանց մշակութային գործունեությամբ): Ինչպես նշել է Մ. Օրմանյանը, «Երբոր գործը հետզհետե կ'ընդարձակուէր, Ազգային Եկեղեցւոյ հաւատացելոց եւ պաշտօնէից մէջ դժգոհութիւններն ալ շատցան, Էջմիածին ալ զգացուեցաւ, եւ 1831-ին Եփրէմ կաթողիկոս իր վերջին օրերը կառավարութեան դիմեց, եւ Կարբեցիին ալ կրկնելու հարկ եղաւ»<sup>10</sup>:

Բազելցի միսիոներների գործունեությունը Շուշիում ավարտվում է 1830-ական թթ. կեսերին<sup>11</sup>: 1837 թվականից տպարանը օրինական հիմքերի վրա գնում է Բաղդասար միտրոպոլիտը և Շուշիի այդ տպարանը կոչվում է «Հայոց հոգևոր տեսչութեան տպարան», կամ «Տպարան վիճակաւոր առաջնորդին Ղարաբաղու բարձր սրբազան միտրոպոլիտի Բաղդասարի»<sup>12</sup>:

---

<sup>9</sup> Կարապետեան Բ., Շուշի բերդաքաղաքը (պատմութիւնը մինչեւ 1920 թ.), Երեւան, 2000, էջ 166–167:

<sup>10</sup> Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 4296:

<sup>11</sup> Ինչպես նշել է Գարեգին Լևոնյանը, «1836 թ. կենտրոնական կառավարության կարգադրությամբ բազելցիներին արգելվում է ամեն տեսակի միսիոներական գործունեություն, այլ թույլ է տրվում պարապել հոգազործությամբ, արդյունաբերությամբ և արհեստներով: Հավատի որսի եկած քարոզիչները այսպիսի գործերով պարապելն իրենց կոչման արժանի չգտնելով, վաճառքի են հանում թե՛ տպարանի և թե՛ դպրոցի գույքերը, որոնց համար, իրենց ասելով, ծախսել էին 20 հազար ռուբլի, ու հեռանում Շուշուց» (Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1946, էջ 230–231):

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 232:

Շուշիի տպարանում տպագրվեցին Բայրոնի «Շիլիոնյան կալանավորը»՝ Մովսես Ջոհրայանի թարգմանությամբ (1837 թ.), Գանձասարի կաթողիկոս Եսայի Չասան Ջալալյանի (1702–1728) «Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից՝ դիպելոց աշխարհին Աղուանից» (1839 թ.), Միքայել Սալլանթյանցի «Կրօնագիտութիւն կամ Հոգեւարժութիւն քրիստոնեական» (Մոսկվա, 1827, Շուշի, 1840 թ.), «Ծիսարան, որ կոչի Մաշտոց», «Տետր այբբենական» և այլն<sup>13</sup>։

1838 թ. Բաղդասար արքեպիսկոպոսի ջանքերով Շուշիում բացվեց Արցախի Հայոց թեմական հոգևոր դպրոցը, որը կարևոր խթան եղավ գրատպության զարգացման համար<sup>14</sup>։ Նրա մահվանից (1854 թ.) հետո էլ տպարանը մինչև 1870-ական թթ. պատկանում էր Հայոց հոգևոր տեսչությանը կամ դպրոցին։ 1864 թ. տպագրվում է Կարապետ Եգյանի՝ «Ներքին կյանք Հին Հայաստանի» գիրքը՝ ռուսերենից կատարված Պ. Պռոշյանի թարգմանությամբ<sup>15</sup>։ 1866 թ. լույս տեսած «Համառոտ պատմություն Հայոց» գիրքը կարևոր ձեռնարկ էր հայրենի պատմությունն աշակերտներին ուսուցանելու համար։

1870-ական թթ. սկզբներին տպագրվում են Սարգիս արքեպիսկոպոսի առաջնորդության ժամանակաշրջանի մասին պատմող գիրքը, ինչպես նաև *Ավետարան* և այլ գրքեր<sup>16</sup>։ Հայոց հոգևոր տեսչությանը պատկանող, սակայն նյութական ծանր պայմանների հետևանքով փակման եզրին հայտնված տպարանի հրատարակություններից է հասարակական գործիչ, խմբագիր-հրատարակիչ Խորեն Ստեփանեի «Հայկական աշխարհ» գրական, մանկավարժական և կրոնական ամսագրի՝ 1874–1875 թթ. մի քանի

<sup>13</sup> Ավագյան Ա., նշվ. աշխ., էջ 33:

<sup>14</sup> Լեօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի. 1838–1913, Թիֆլիս, 1914, էջ 99–100:

<sup>15</sup> Լևոնյան Գ., նշվ. աշխ., էջ 232:

<sup>16</sup> Ավագյան Ա., նշվ. աշխ., էջ 38:

համարների տպագրությունը<sup>17</sup>, կարևոր երևույթ էր հայ իրականության մեջ<sup>18</sup>: 1880-ական թթ. Շուշիում բացվեց Տեր-Սահակյանի տպարանը, իսկ 1881 թ. իր հրատարակչական գործը սկսեց Միրզաջան Մահտեսի-Հակոբյանի հիմնած արագատիպը<sup>19</sup>: Այս տպարանում իր հրատարակչական գործունեությունը սկսեց Տիգրան Նազարյանը, իսկ Աբել Ապրեսյանը կատարեց Րաֆֆու «խենթի» առաջին տպագրությունը, ինչպես նաև Լեոյի և Ա. Բահաթյանի արժեքավոր երկերի հրատարակությունը: «Միրզաջան Մահտեսի Հակոբյանի տպարանը» իր գոյության 25 տարիների ընթացքում հրատարակել է գեղարվեստական ու պատմագիտական գրականություն, դպրոցական ձեռնարկներ ու դասագրքեր, թերթեր ու ամսագրեր: 1885 թ. Թեմական դպրոցի օգնությամբ և հասարակական հանգանակությունների միջոցով վերաբացված Հոգևոր տեսչության տպարանը շարունակեց իր ազգանվեր գործունեությունը<sup>20</sup>:

Բագրատ Տեր-Սահակյանի տպարանի հետ մեկտեղ 1905–1920 թթ. Շուշիում գործել է նաև Սելբոն Բաբաջանյանի տպարանը: Այսպիսով, 1828–1920 թթ. Շուշիում գործած հինգ տպարաններում հրատարակվել է ավելի քան 170 անուն գիրք, իսկ 1874 թ. սկսած մինչև 1920 թ. մարտը՝ լույս են տեսել 28 անուն թերթ և հանդես, որոնցից 25-ը՝ հայերեն, իսկ 3-ը՝ ռուսերեն:

Բազմազան էին արցախյան պարբերական հրատարակությունները՝ «Ընար խոսնակ» (1881 թ.), «Գործ» (1882–1884), «Կոկոն» (1895–1896), «Ազգագրական հանդես» (Շուշի-Թիֆլիս, 1896–

---

<sup>17</sup> Նույն տեղում: «Հայկական աշխարհ» հանդեսի նպատակն էր տպագիր խոսքի միջոցով նպաստել մատաղ սերնդի կրթությանն ու հայրենասիրական ոգով դաստիարակությանը:

<sup>18</sup> 1874 թ. Շուշիում լույս տեսնող «Հայկական աշխարհ» ամսագիրը Արցախի պարբերական մամուլի առաջնեկն էր: Ամսագրի էջերում տպագրվում են Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» և այլ պատմիչների երկերից՝ հայ ժողովրդի հերոսական պատմության դրվագները նկարագրող հատվածներ:

<sup>19</sup> Լևոնյան Գ., նշվ. աշխ., էջ 232:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 237:

1916), «Աշակերտական թերթ» (1896–1897), «Կռունկ» (1898–1900), «Ղարաբաղ» (1911–1912), «Սիրաժ» (1913–1917), «Աշակերտ» (1913 թ.), «Սիւսիւն» (1913 թ.), «Պայքար» (1914–1917), «Փայլակ» (1915–1917), «Ծիածան» (1916 թ.), «Ծիծաղ» (1916 թ.), «Աշխատանք» (1917 թ.), «Ապառաժ» (1917 թ.), «Ասպարեզ» (1917 թ.), «Եռանդ» (1917 թ.), «Նեցուկ» (1917 թ.), «Սրինգ» (1917 թ.), «Ղարաբաղի սուրհանդակ» (1918 թ.), «Արցախ» (1919 թ.), «Նոր կյանք» (1919 թ.) և այլն: Շուշիում լույս տեսած ռուսերեն երեք թերթերը՝ "Шушинский листок" (1911 թ.), "Шушинская жизнь" (1913–1914) և "Голос народа" (1919 թ.), սպազրվում էին հայ մտավորականների ուժերով:

Խորը պատմական արմատներ ունեցող հայ մշակույթի վերելքը Շուշիում ընդհատվեց 1920 թ. մարտին տեղի ունեցած թուրք-թաթարական հրոսակների ցեղասպան գործողությունների հետևանքով: Հայոց հինավուրց քաղաքը հրի մատնելով և ոչնչացնելով հոգևոր-մշակութային կրթողներն ու արժեքները, վայրենի թուրք-թաթարական հրոսակներն, ավելի քան 30 հազար հայ կոտորեցին և բռնազաղթեցրեցին<sup>21</sup>:

1992 թ. մայիսի 8/9-ին Շուշիի ազատագրումով և հաղթանակով պսակված Արցախյան ազատամարտով նշանավորվեց հայ մշակութային և գիտակրթական կյանքի վերածնունդը Արցախի Հանրապետությունում:

---

<sup>21</sup> 2011 թ. մարտի 23-ին ԼՂՀ Ազգային ժողովը դատապարտեց Շուշիի հայ բնակչության՝ 1920 թ. մարտին թուրք-թաթարական հրոսակների իրականացրած կոտորածները, <http://armenpress.am/arm/news/645666/lxh-azgayin-zhoxovy-data-partum-e-shushii-hay-bnakchutyay.html>

## ՇԱՄԱԽԻ ԵՎ ԲԱՔՈՒ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Արևելյան Այսրկովկասի՝ Կուրից մինչև Ապշերոնյան թերակղզի ընկած տարածքում հայերը բնակվել են վաղ ժամանակներից: Երկրամասի զգալի մասը պատմականորեն կազմել է Բուն Աղվանք (հունահռոմեական աղբյուրներում՝ Ալբանիա) երկրի արևելյան շրջանները և որոշ հարակից տարածքներ<sup>1</sup>: Պատմական հավաստի հիշատակությունները վկայում են, որ երկրամասի տարեթիվ տարածքում աղվաններից բացի, վաղ ժամանակներից բնակվել է նաև հայկական որոշակի էթնիկ տարր, որն ուրույն դերակատարություն է ունեցել երկրամասի էթնոշակութային և էթնոքաղաքական զարգացումներում<sup>2</sup>:

XIX դարի կեսերին ստվարաթիվ հայ բնակչություն կար Կուրի ծախսափնյայի նախալեռնային և բարձր լեռնային շրջանների ավելի քան 100 բնակավայրերում<sup>3</sup>: Այդ բնակավայրերից շատերը գոյատևել են մինչև XX դարի վերջերը և նշանակալի հետք թողել երկրամասի պատմության մեջ: Ակնառու էր հայերի դերը առևտրի, արդյունաբերության, մասնավորապես՝ նավթարդյունաբերության սկզբնավորման և զարգացման բնագավառում: Երկրամասում հայ

<sup>1</sup> Բուն Աղվանքի աշխարհագրական սահմանների և աղբյուր կարևորագույն հարցերի մանրամասն քննությունը տես Акопян А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках. Ереван, 1987, Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն (ինագույն շրջանից-VIII դարը ներառյալ), Երևան, 2006:

<sup>2</sup> Պալստյան Հ., Հակոբյան Ա., էթնալեզվական գործընթացները Բուն Աղվանքում (Պալստյան Հ., Հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ, Երևան, 2003, էջ 91-92):

<sup>3</sup> Карапетян С., Памятники средневековой архитектуры в гаварах Шаки и Капалак собственно Албани, «Кавказ и Византия», вып. 6, Ереван, 1988, с. 224.

բնակչության աճին զուգընթաց՝ աստիճանաբար հայաշատ խոշոր կենտրոններ էին դառնում Լուխի (Շաքի), Շամախի և հատկապես Բաքու քաղաքները:

**ՇԱՄԱԽԻ ՔԱՂԱՔ:** Շամախին վաղ ժամանակներից ունեցել է ստվարաթիվ հայ բնակչություն, որը ժամանակի ընթացքում ստեղծել է ահռելի հարստություն և մշակույթի անկրկնելի կոթողներ<sup>4</sup>: Անգլիացի ճանապարհորդ ու վաճառական Անթոնի Ջենքինսոնը 1563 թ. ապրիլի 10-ին Շամախիում եղած ժամանակ թողել է հետևյալ ուշագրավ գրառումը. «... այս քաղաքը (Շամախին – Գ. Ս.)... բնակեցված է գլխավորապես հայերով...»<sup>5</sup>: Ըստ XIX դարի վերջի վկայությունների՝ Շամախին համարվում էր հայկական մշակույթի կենտրոն, հայերի՝ քաղաքաշինության ժամանակակից պահանջներին համապատասխան կառուցված երկհարկ-եռահարկ տներով: Այստեղ գործում էին եկեղեցիներ, հայոց ու ռուսաց արական ուսումնարաններ, հայոց օրիորդաց երկդասյա Սբ. Սանդիստյան դպրոց, գրադարան-ընթերցարան, թատրոն և այլն: Սարգիս արքեպ. Ջալալյանցի հաղորդած տվյալների համաձայն՝ Շամախիում 1850 թ. կար 4000 տուն, որից հայապատկան էր 600-ը<sup>6</sup>:

Մատենագրական աղբյուրները փաստում են, որ միջնադարում Շամախին եղել է երկրամասի հարուստ գրչօջախներից մեկը<sup>7</sup>: Մշակութային այդ գործունեությունն իր շարունակությունն ունեցավ նաև հետագա ժամանակներում: Ձեռնամուխ լինելով

---

<sup>4</sup> Շամախի քաղաքի հայության պատմության մանրամասն քննությունը տես Ստեփանյան Գ., Շամախին և շամախահայերը (հնագույն ժամանակներից մինչև XX դարի վերջերը), «Կեն», Երեւան, 2009, հոկտեմբեր-դեկտեմբեր, N 3, էջ 74–95, նույնի՝ Շամախի քաղաքի հայերի պատմությունից (դասախոսության տեքստ), Երևան, 2013:

<sup>5</sup> Դակոբյան Դովհ., Ուղեգրություններ, Աղբյուրներ Հայաստանի եւ Անդրկովկասի պատմության, հ. Ա, ԺԳ-ԺԶ դդ., Երևան, 1932, էջ 372:

<sup>6</sup> Ջալալեանց Ս., Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփիսիս, 1858, էջ 400:

<sup>7</sup> Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, կազմեցին Եզանյան Օ., Ձեյթունյան Ա., Անթաբյան Փ., խմբ.՝ Խաչիկյան Լ., Մնացականյան Ա., հ. Բ, Երևան, 1970, էջ 728, 765:

գրատպության գործին՝ 1849 թ. բանաստեղծ Մովսես Ջոհրապ-յանց՝ Արցախեցին<sup>8</sup>, Մարգար Ղուլիյանցը և Մինաս Տարղիլիջյան-ցը Շամախիում հիմնադրում են տպարան, ուր նույն թվականին տպագրվում է շուրջ 265 էջանոց «Գիրք Սաղմոսաց Դաթի» աշ-խատանքը, որի հիշատակարանում ասված է. «Ի հայրապետու-թեան տեառն Ներսէսի Ե. կաթողիկոսի Ամենայն հայոց և զանա-զան նշանաց ասպետի. Հրամանաւ վիճակային Հայոց Կոնսիտո-րիային Շիրվանու. Շամախի, ի տպարանի երից ընկերացն՝ Մով-սիսի Ջոհրապեանց, Մարգարի Ղուլիեանց և Մինասի Տարղիլի-ջեանց»<sup>9</sup>: Ջարգացնելով տպագրական աշխատանքը՝ շամախեցի Աթա Գրիգորյանը Մոսկվայից բերած հայկական տառերով 1856 թ. հիմնում է մի նոր տպարան, ուր տպագրվում է Մովսես Ջոհրապ-յանի «Պարապոյ ժամք» վերնագրով ժողովածուն: Այդ ժողովա-ծուում զետեղված էր նաև Ջ. Բայրոնի «Շիլիոնի կալանավորը» ստեղծագործությունը<sup>10</sup>:

Շամախիում 1859 թ. տեղի ունեցած աղետալի երկրաշարժի պատճառով, երբ նահանգային կենտրոնական վարչությունը հաստատվում է Բաքվում, շամախահայերից շատերը տեղա-փոխվեցին Բաքու և այլ վայրեր<sup>11</sup>: Այս պայմաններում արագորեն ընկնում է արհեստների ու առևտրի դերը, աստիճանաբար անկում է ապրում նաև հայության կրթամշակութային կյանքը:

<sup>8</sup> Մ. Ջոհրապյանցն ավարտել էր Շուշիի գավառական դպրոցը և վարչական աշխատանք էր կատարում Այսրկովկասի զանազան քաղաքներում: Թղթակ-ցել է «Կովկաս» շաբաթաթերթին, ուր տպագրվել են մեծ մասամբ զրաբարով գրված նրա խոհական, հայրենասիրական և քնարական բանաստեղծություն-ները: Նրա թարգմանությամբ տպագրվել են նաև Վ. Կապնիստի, Շատրովի, Ն. Կարամզինի, Ի. Բոգդանովիչի բանաստեղծությունները (տես նաև Հայ պարբերա-կան մամուլի պատմություն. XVIII-XIX դդ., հ. Ա, Գահիրե, 2006, էջ 427-428):

<sup>9</sup> Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, Ե-ժԸ դդ., հ. Բ, Երևան, 1976, էջ 427-428:

<sup>10</sup> Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը (պատմական տեսություն սկզբից մինչև XX դարը), Երևան, 1958, էջ 229:

<sup>11</sup> Акты, собранные Кавказскою археографическою комиссией, под ред. Ад. Берге, т. XII, Тифлис, 1904, с. 398. Շամախու աղետը (ժողովածու), Բազու, 1902, էջ 12:

**ԲԱՔՈՒ ՔԱՂԱՔ:** Կասալից ծովի արևմտյան ափին՝ հրվանդանածև, շուրջ 60 կմ երկարությամբ ծովի մեջ խորացած Ապշերոնյան թերակղզին հայերի կողմից բնակեցվել է առնվազն վաղ միջնադարից, որոնք ունեցել են իրենց պաշտամունքային օջախները<sup>12</sup>:

Լահանգային կենտրոնը Բաքու տեղափոխելը մեծ նշանակություն ունեցավ քաղաքի զարգացման համար: Բաքվի հայության հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը չափազանց աշխույժ էր XIX դ. վերջին տասնամյակներին և XX դ. սկզբին: Բաքվի հայ հասարակական կյանքում յուրահատուկ դեր ունեին ազգային կյանքը կազմակերպող կրթասիրական և լուսավորական օջախները:

Բաքվի նահանգի բժշկապետ Դավիթ Ռոստոմյանցի նախածեռնությամբ 1864 թ. հիմնվում է «Աբ. Գրիգոր Լուսավորչի անվան Բաքվի Հայոց մարդասիրական ընկերությունը», որը լայնամասշտաբ գործունեություն է ծավալում կրթալուսավորական բնագավառում: Բաքվի հայերին է պատկանում Այսրկովկասում առաջին հասարակական գրադարան հիմնելու պատիվը, որը բացվեց 1870 թ. «Մարդասիրական ընկերության» նախագահ Մովսես Ջոհրայանցի նախածեռնությամբ և նահանգային վարչության թույլտվությամբ: Գրադարան-ընթերցարանին (վարիչ՝ Ալ. Շիրվանզադե) կից հիմնվում է նաև գրատուն-թանգարան, որի նպատակն էր հավաքել ու կորստից փրկել ձեռագիր ու տպագիր հազվագյուտ գրքերը<sup>13</sup>: 1913 թ. հունվարի 1-ի դրությամբ գրադարանն արդեն ուներ 18.227 կտոր գիրք: «Մարդասիրական ընկերության» ջանքերով 1917 թ. մայիսի 2-ին առանձին գրադարան-ընթերցարան է բացվում նաև Հայկավանում: Եշված գրադարաններից բացի,

<sup>12</sup> Березин И., Путешествие по Дагестану и Закавказью, Издание 2-е пополненное, Казань, 1850, ч. III, гл. V (Отъ Баку до Сальяна), с. 64, Տեր-Յովհաննիսեանց Երևան, Ս. Եղիայի վանքը Բուզովուն, «Արարատ», 1902 թ-ին, Ե-Ձ, էջ 481-487:

<sup>13</sup> Краткий исторический очерк состояния и деятельности Бакинскогo чeлoвeкoлoубнoгo oбщeствa вo имя св. Гpигopия Пpocвeтитeлeя Aрмeнии cъ 1854 пo 1896 гг., coст. члeн coвeтa oбщeствa cекpeтapь A. Кaлyстeянц, Бaкy, 1896, с. 9, տե՛ս նաև՝ Ավետիսյան Ս., Բաքվի հայոց Մարդասիրական ընկերության գործունեության պատմությունից, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1986, N 2, էջ 130:

մանկական գրադարաններ են գործել նաև Աբ. Մեսրոպյան երկդասյան արական և Աբ. Հռիփսիմյան օրիորդաց միջնակարգ դպրոցներում (վարիչ՝ Հայրապետ Ղուկասյան):

Մշակույթի բնագավառում Բաքվի հայերի ձեռք բերած նվաճումներից մեկը տպագրության կազմակերպումն էր: «Մարդասիրական ընկերության» նախաձեռնությամբ 1870 թ. հիմնվում է քաղաքի առաջին տպարանը (կառավարիչ՝ Նիկողայոս Հարությունի Արտեմով), որի հայկական տառերը բերվում են Թիֆլիսից՝ «Հ. Էնֆիաճյանց և ընկ.» ձուլարանից: Այդտեղ լույս են տեսել «Սոխակ Հայաստանի» երգարանի չորս պրակները (1874 թ.), «Մխիթար Գոշ», «Օղիմպիանոսի և Եզովպոսի առակները» (1878 թ.), Խորեն վրդ. Ստեփանեի (Ստեփանոս Ստեփանյան) «Հայկական աշխարհ» ամսագիրը (1877–1878 թթ.) և արժեքավոր այլ հրատարակություններ<sup>14</sup>: XIX դարի վերջին գործում էր «Մալաֆյանց և ընկ.» (1874 թ.), «Ա. Ղասաբյանց» (1876 թ.), «Մարդասիրական ընկերության» տպարանի գրաշարներ Ս. Տեր-Հովհաննիսյանի ու Ա. Ղասաբյանցի տպարանը (1876 թ.): 1890-ական թվականներին Ս. Շահբազյանի կողմից հիմնվում է նաև «Արոր» տպարանը, որտեղ տպագրությունը կատարվում էր Ս. Պետերբուրգից բերված «արամյան» տառատեսակներով<sup>15</sup>: XX դարի սկզբին Բաքվում գործում էին շուրջ 18 հայապատկան տպարաններ. Գյուլբուղաղյանցի, Եղբ. Ղազարյանների, Ն. Երևանցյանի, Կ. Խատիսյանի, Ս. Տեր-Հովհաննիսյանի, «Արծվաբերդ», «Արամազդ», «Բաքվի հայոց կուլտուրական միության», «Թառայանի և Միրզոյանի», «Ս. Տ. Շահբազյանի», «Լ. Դ. Միրզոյանի», «Տրուդ», «Տրուժենիկ», «Կարապետյան եղբայրներ», «Կովկասի հայ աշակերտական միության», «Бакы» լրագրի, «Սոցիալ-դեմոկրատական կազմակերպության», «Հրատարակչական ընկերության», «Մամուլ» և այլ տպա-

<sup>14</sup> Պատմական համառոտ տեսութիւն Բագուայ Հայոց Մարդասիրական ընկերութեան 25-ամեայ գործունեութեան, աշխատասիրեց՝ ատենադպիր ընկերութեան. 1864–1869, Ա. Գալստեանց, Բագու, 1891, էջ 63, 30–31, տես նաև՝ Լևոնյան Գ., նշվ. աշխ., էջ 229:

<sup>15</sup> Լևոնյան Գ., նշվ. աշխ., էջ 230, Առաքելյան Ա., Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն (XIV–XIX դդ. առաջին կեսը), հ. 2, Երևան, 1964, էջ 332:

գրատները<sup>16</sup>: Բաքվում գործող մի շարք այլ տպարաններում ևս տպագրվել են հայերեն գրքեր ու պարբերականներ: Այդպիսիներից էին՝ Ս. Վուչկինի տպարանը XIX դարի վերջին և ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի ընդհատակյա «Նինա» տպարանը XX դարի սկզբին:

Մեծ էր Բաքվում գործող հայապատկան տպարանների նշանակությունը: Այդ տպարաններում տպագրվել են ոչ միայն պարբերականներ, այլև հայ և օտարազգի հասարակական-քաղաքական գործիչների և գրողների տասնյակ գրքեր, տեղեկատու գրականություն, քարտեզներ և այլն: Մեծ չափերի է հասնում պատմագիտական, բանասիրական, տեղագրական, գեղարվեստական գործերի, զանազան դասագրքերի և բառարանների հրատարակությունը, ընդլայնվում է նաև թարգմանական գրականության տպագրությունը: Գրատպությանը զուգընթաց Բաքվում կազմակերպվում է նաև գրավաճառության գործը: Սեփական գրատներ ունեին Ս. Տեր-Յովհաննիսյանը, Ս. Չարությունյանը, Ս. Միրզաբեկյանցը, Գ. Սահարյանցը, Ա. Ղասաբյանցը, «Արոր» տպարանն ուներ համանուն գրատունը, գործում էր նաև «Բաֆֆի» գրատունը և այլն<sup>17</sup>: Քաղաքում լայն ճանաչում ուներ հատկապես Մարիա Սունդուկյանցին պատկանող «Սոտրուղնիկ» գրատունը և համանուն գրքային գործակալությունը<sup>18</sup>: Նշված գրատներում վաճառվել են Բաքվում, Թիֆլիսում, ինչպես նաև Ռուսաստանի և Այսրկովկասի մյուս քաղաքներում լույս տեսած հայատառ և ռուսատառ գիտահանրամատչելի գրականություն:

<sup>16</sup> Бакинский справочный календарь на 1898 г., под редакцией А. Юзвашва, Баку, 1897 (Адрес-календарь города Баку и Бакинской губернии), с. 53, п»°л ԶՆ՝ Ежегодник Баку и его районъ 1909. Адресная и справочная книга. Издание М. Шаповнича, С.Петербургъ, 1909, отл. IV, с. 166–167, Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794–1967): Համահավաք ցանկ, կազմեց՝ Ա. Կիրակոսյան, Երևան, 1970, էջ 613:

<sup>17</sup> Бакинский справочный календарь на 1898 г. (Адрес-календарь города Баку и Бакинской губернии), с. 14–15, տե՛ս նաև՝ Бакинский настольный календарь на 1904 г. Справочная книга с планами гор. Баку и окрестных промыслов, издание землемера К. Г. Качана, ч. II, Баку, 1903, с. 74.

<sup>18</sup> «Մշակ», Թիֆլիս, 1908, մարտի 4, N 49, Бакинский настольный календарь на 1904 г., с. 74, նաև՝ Ежегодник Баку и его район 1909, отл. IV, с. 181.

Բաքվի հայ հասարակական-մշակութային կյանքում նշանակալի դեր է կատարել հայ պարբերական մամուլը, որի ձևավորման համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին XIX դարի 70-ական թթ. սկզբներից, ինչը կապվում է ազգային ինքնագիտակցության, մշակույթի և հասարակական մտքի զարգացման հետ: Բաքվում պարբերականների հրատարակման հիմնական ձևը սկզբնական շրջանում եղել է ամսագիրը: Ժամանակագրական կարգով առաջին պարբերականը հայտնի մանկավարժ Խորեն վրդ. Ստեփանեի խմբագրմամբ 1877–1879 թթ. լույս տեսնող «Հայկական աշխարհ» գրական-մանկավարժական ամսագիրն էր, որը խմբագրի աշխատավայրի տեղափոխության կապակցությամբ Շուշիից հետո շարունակվեց հրատարակվել Բաքվում<sup>19</sup>: «Հայկական աշխարհ»-ն ուշադրության կենտրոնում էր պահում հասարակական-մանկավարժական մտքի զարգացման և ազգային դպրոցների պահպանման ու մատաղ սերնդի դաստիարակության հարցերը: Դրանից զատ, «Հայկական աշխարհ»-ը ժամանակի հայ պարբերականների օրինակով իր էջերում մեծ ուշադրություն էր նվիրում հայագիտության զարգացման հարցերին, մանկավարժական բնույթի նյութերից բացի պարբերականում զետեղվել են նաև փիլիսոփայական խորհրդածություններ, բարոյախրատական առածներ, կրոնական, ազգագրական, պատմական, աշխարհագրական, բանասիրական նյութեր և այլն:

Բաքվի հայ մշակույթի մեծագույն նվաճումներից մեկը բազմաբովանդակ մամուլի և հրապարակախոսության առաջացումն էր: XX դարի սկզբներին հրատարակվում են հայկական բազմաթիվ պարբերականներ: Մինչև 1980 թ. Բաքվում հրատարակվել է ավելի քան 81 անուն հայկական պարբերական (25-ը լույս են տեսել 1920 թ. հետո ընկած ժամանակահատվածում): «Հայկական աշխարհ»-ից բացի, հրատարակվել են նաև «Սոցիալիստ» (1904 թ.), «Արշալույս» (1904 թ.), «Գրոհ» (1906–1907 թթ.), «Բարի լուր» (1906–1917 թթ.), «Մոծակ» (1907 թ.), «Թռուցիկ» (1906 թ.),

---

<sup>19</sup> Մխիթարյան Մ., Խորեն Ստեփանեի «Հայկական աշխարհ» ամսագիրը, Երևան, 2002, էջ 63:

«Կիրակնօրեայ թերթ» (1906 թ.), «Բարի լուր» (1906–1917 թթ.), «Օրեր» (1907 թ.), «Ամիս» (1908 թ.), «Շեփոր» (1908 թ.), «Նոր օրեր» (1908–1909 թթ.), «Պատանեկան գրադարան» (1908), «Առաւոտ» (1909 թ.), «Ուղի» (1909 թ.), «Զնդան» (1909 թ.), «Փարոս» (1910 թ.), «Նոր խօսք» (1911–1912 թթ.), «Մեր ուղին» (1912 թ.), «Բագուի ձայն» (1913–1914), «Գործ» (1914 թ.), «Շաւիղ» (1914 թ.), «Արեւ» (1914–1919 թթ.), «Նաւակ» (1914–1915 թթ.), «Աշխատանքի ձայն» (1918 թ.), «Աշխատանքի դրօշակ» (1917 թ.), «Առողջ կեանք» (1917 թ.), «Կեանք» (1917 թ.), «Յառաջ» (1917 թ.), «Մեր գործը» (1917 թ.), «Գործ» (1917–1918 թթ.), «Բանւոր» (1917–1918 թթ.), «Վերածնունդ» (1917–1918 թթ.), «Երկիր» (1919 թ.), «Եռանդ» (1912 թ.), «Առողջ կեանք» (1917 թ.), «Բանւոր, զինւոր և նաւաստի պատգամաւորների խորհրդի տեղեկատու» (1918 թ.), «Վիշկա» (1925 թ.), և այլն<sup>20</sup>։

Հայերը նաև ռուսալեզու լրագրերի խմբագիր-հրատարակիչներ են եղել։ Ստ. Ղուլիշամբարյանի (Գուլիշամբարով) խմբագրությամբ 1875 թ. լույս էր տեսնում «Бакинская известія» լրագիրը (հետագայում թերթի խմբագիր-հրատարակիչն էր Գ. Ենգիբարյանը)։ «Нефтяное дело»-ի խմբագիրն էր Ար. Պարոնյանը։ Պ. Կարա-Սուրզայի, այնուհետև Քր. Վերմիշյանի և Գ. Ենգիբարյանի խմբագրությամբ լույս է տեսել «Баку» լրագիրը, 1908 թ. հոկտեմբերից Ռ. Օհանջանյանի խմբագրությամբ լույս է տեսել «Листокъ объявлений» գովազդային թերթը, 1908 թ. մարտից Ս. Շահբազյանը հրատարակել է «Бакинский вечер» երեկոյան օրաթերթը, Դ. Թուրյանը՝ «Бакинские новости» պարբերականը և այլն։ Իրենց ուղղվածությամբ այդ պարբերականները տարաբնույթ էին՝ տնտեսական, քաղաքական, բանասիրական, մանկավարժական, գիտական և այլն։ Եվ չնայած սահմանափակումներին՝ Բաքվի հայ հրապարակախոսությունը սոցիալ-տնտեսական, քաղաքա-

<sup>20</sup> Մամուլի վերաբերյալ թվական հաշվարկները կատարված են ըստ Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա, հ. Ա (1794–1900), առաջաբանով և ծանոթագրություններով, կազմեց՝ Հովհ. Պետրոսյան, Երևան, 1956, հ. Բ (1900–1956), Երևան, 1957, Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794–1967), Երևան, 19 գրքերի տեղեկությունների։

կան և մշակութային կյանքին վերաբերող բովանդակալից հող-վաճմերով հսկայական դեր կատարեց ազգային-մտավոր և հասարակական-քաղաքական մտքի զարգացման գործում:

1903 թ. հունիսին Բաքվում տեղի է ունենում Կովկասի հայ աշակերտական առաջին համագումարը, որը ստեղծում է Կովկասի հայ աշակերտական բյուրո (անդամներ՝ Ստեփան Նազարյան, Արմենուհի Երևանցյան): Միությունն ուներ «Հույս» անվամբ պաշտոնաթերթ (լույս է տեսել 1904 թ. ՀՀԴ գաղտնի տպարանում)<sup>21</sup>: 1917 թ. Բաքվում գործել է նաև «Կեանք» անվամբ աշակերտական միությունը, որը համանուն շաբաթաթերթ էր հրատարակում<sup>22</sup>:

Բաքվի հայերի գիտահրատարակչական գործունեությունն առավել ընդգրկուն դարձավ, երբ ազգային գործիչ Կոստանդին Խատիսյանի ջանքերով 1906 թ. հիմնվեց «Կուլտուրական միությունը»: 1908 թ. հոկտեմբերի 12-ից հրատարակվում է միության «Ձանգ» պաշտոնաթերթը (խմբագիր-հրատարակիչ՝ Կ. Խատիսյան)<sup>23</sup>:

Հայտնի է, որ Բաքվում են ձևավորվել և իրենց գրական առաջին քայլերը կատարել տասնյակ հայ գրողներ՝ բանաստեղծներ ու արձակագիրներ: Քաղաքի գրական կյանքի աշխուժացմանը նպաստել է 1880-ական թվականների վերջերին հիմնված «Հույս» միությունը՝ իր համանուն ձեռագիր հանդեսով: Բաքվում գրական հասարակական զարգացմանը նպաստեց 1890-ական թթ. գրող-մանկավարժներ Ս. Հովվյանի, Ա. Նազարեթյանի և Սեդրակ (Արսեն) Բալայանի ջանքերով կազմակերպված «Օջախ» գրական-գեղարվեստական ակումբը<sup>24</sup>: Սկիզբ առած գրական աշխուժացումն իր արտահայտությունը գտավ նաև երիտասարդական գրական հանդեսների հրատարակության մեջ: Առաջին և նշանակալի

<sup>21</sup> Աստուածատրեան Ա., Վահան Սինախորեան, «Հայրենիք», Պոսթըն, 1945, լուսինս-օգոստոս, N 4, էջ 90:

<sup>22</sup> Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ (1794–1980), կազմեց՝ Բարսեղյան Մ., Երևան, 1986, էջ 110:

<sup>23</sup> Ежегодник Баку и его районъ 1909, отд. II, с. 115.

<sup>24</sup> «Հորիզոն», Թիֆլիս, 1914, հունվարի 30, N 22:

հրատարակությունը «Ծիլ» (1914–1916 թթ.) գրական-գեղարվեստական ավանախն էր<sup>25</sup>, որը նպատակ ուներ խրախուսել և զարգացնել գրականության մեջ առաջին քայլերն անող երիտասարդներին<sup>26</sup>:

Հայ քաղաքական կուսակցությունների կազմավորումը Բաքվում հանգեցրեց կուսակցական մամուլի առաջացմանը: Բաքվի հայ հասարակական-քաղաքական կյանքում մեծ դերակատարություն ուներ Բաքվում կազմավորված ՀՅ Դաշնակցություն կուսակցության օրգան «Արեւ» (1914–1919 թթ.) գրական, հասարակական և քաղաքական օրաթերթը (խմբագիրներ՝ Ս. Թաղիանոսյան, Ս. Մնացականյան, Ս. Հակոբյան, ապա՝ Տիգ. Հովհաննիսյան): Հրատարակվել է «Անթառամ» ընկերությունում: 1903 թ. հոկտեմբերին իր գործունեությունը սկսեց նաև «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը» («Սպեցիֆիկներ»): 1904 թ. սկզբներից հրատարակվել է կուսակցության օրգանը՝ «Բանւոր» թերթը: 1904 թ. մայիսից «Բանւոր»-ի փոխարեն լույս է տեսել «Սոցիալիստ» երկշաբաթաթերթը, որը մի քանի համարի հրատարակումից հետո ցարական իշխանությունների հետապնդումների պատճառով տեղափոխվում է ժնև:

Բաքվի հայ կրթամշակութային, այդ քվում նաև գրատպության գործի առաջընթացը կասեցվեց 1918 թ., երբ թուրքական զորքերը արշավեցին Այսրկովկաս և հասան մինչև Բաքու: Բաքվի հայերի չորսամսյա հերոսական ինքնապաշտպանական մարտերից հետո մեծաթիվ թուրքական զորամասերը սեպտեմբերի 15-ին գրավեցին քաղաքը: Թուրքական բանակը մուսավաթական կառավարության աջակցությամբ կովկասյան թաթար հրոսակախմբերի հետ միասին 3 օր շարունակ (սեպտեմբերի 15-17-ը) գազանաբար կոտորեցին ավելի քան 30.000 հայերի<sup>27</sup>: Ավերվեցին, կողոպտվեցին և ոչնչացվեցին քաղաքի կրթալուսավորական օջախները, այդ

<sup>25</sup> Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ (1794–1980), էջ 101:

<sup>26</sup> «Գործ», Բազու, 1914, մարտի 21, N 21:

<sup>27</sup> ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, ք. 96–99, Геноцид армян в Османской империи. Сборник документов, под редакцией М. Г. Нерсисяна, Ереван, 1982, с. 524.

թվում նաև տպագրատները, այսինքն՝ հայ բնակչության նկատմամբ իրականացվեց նաև մշակութային ցեղասպանություն: Ֆիզիկական բնաջնջման և բռնի տեղահանման հանցավոր քաղաքականությունը շարունակվեց մուսավաթական Ադրբեջանի գոյության շրջանում (1918–1920 թթ.): Ադրբեջանի խորհրդայնացումից հետո պետականացվեցին և կողոպտվեցին հայապատկան ձեռնարկություններն ու հասարակական շինությունները: Կողոպուտի ենթարկվեց «Մարդասիրական ընկերության» գրադարանը, որի հարուստ գրաֆոնդը ցիրուցան արվեց Ադրբեջանի զանազան քաղաքներում և գյուղերում: «Գրաւած է Հայոց Մարդաս [իրական] ընկերութեան գրադարանը, որ 50 տարւայ գոյութիւն ուներ և որ ամենահարուստն էր ամբողջ Բագու քաղաքում. նա բաժան-բաժան է արւած՝ ցուելու համար Ադրբեջանի զանազան քաղաքներն ու գիւղերը»<sup>28</sup>, - գրում էր այդ օրերին «Յառաջը»: Հայոց լեզուն, գրականությունը և պատմությունն արգելված էին դպրոցներում, ընդհուպ՝ Բաքվի համալսարանում: Խնդրի առնչությամբ իր վրդովմունքն է հայտնում Բաքվում լույս տեսնող հայերեն «Կոմունիստ» օրաթերթի թղթակից Արամ Գնունին: «Հայկական կուլտուրան Ադրբեջանում» վերտառությամբ հոդվածում նա գրում է. «Համալսարանի լեզւաբանական մասում անցնում են շատ լեզուներ, պատմական մասում՝ շատ մանր ու մեծ ազգութիւնների պատմութիւններ, բայց այստեղ տեղ չեն գտնում ոչ հայերէն լեզուն ու գրականութիւնը և ոչ էլ հայոց կուլտուրայի պատմութիւնը: Մեր պատմական անցեալն իր կուլտուրայով այնքան էլ փոքր ու աննշան չէ, որ չարժենա նրա հետ ծանօթացնել մեր հայ ուսանողներին յունարէնի կամ սերբիական ու բուլղարական պատմութեան կողքին: Սինչդեռ մեր կուլտուրան մեզ համար շատ թանկ արժէ, մանաւանդ, որ հայերէն լեզւի, գրականութեան և պատմութեան աւանդումը համալսարանում հնարավորութիւն կտա համալսարան աւարտող հայ ուսանողներին հայ լինել ոչ միայն անունով, այլ

<sup>28</sup> Տե՛ս «Յառաջ», Երեւան, 1920, հուլիսի 9, N 143:

հայ աշխատաւորութեան մէջ գործելու կուլտուրական հնարաւորութեամբ»<sup>29</sup>:

1925 թ. մարտի վերջերին Բաքվում հիմնադրվում է «Հայարտուն» (Հայ արվեստի տուն) գրական-մշակութային կազմակերպությունը՝ գրական, նկարչական, երաժշտական և թատերական մասնաճյուղերով<sup>30</sup>: Հրատարակվում է նաև «Հայարտուն» լրագիրը, որը կարճ ժամանակում կարողանում է իր շուրջ համախմբել հայ մտավորականությանը՝ գրականության և մշակութային գործիչներին: «Հայարտան» գրական կյանքում են աճել բանաստեղծներ Թ. Հուրյանը (Նսաչատրյան) Ա. Գրաշին (Գրիգորյան), Հ. Սահյանը, Ս. Այվազյանը, Ս. Գրիգորյանը, Ա. Սենալը, Վ. Աբրահամյանը, արձակագիրներ Գ. Բեսը (Սարինյան), Գ. Սևունցը (Գրիգորյան), Մ. Դավթյանը, դրամատուրգներ Ա. Դարբնին (Մնացականյան), Ա. Բարսեղյանը, Լ. Աղյանը և ուրիշներ: Նրանց ստեղծագործությունները լույս էին տեսնում «Գրական Աղբրեջան» գրական-գեղարվեստական երկամսյա հանդեսում (խմբագիրներ՝ Ս. Գրիգորյան, Վ. Աբրահամյան), որն իր գոյության ընթացքում (1957–1989 թթ.), չնայած Աղբրեջանի կուսակցական վերադաս մարմինների աջալուրջ հսկողությանը և գրաքննությանը, կարողացել է հայ գրողների գրական երկերը հասցնել ընթերցողներին:

Խորհրդային Աղբրեջանում հայ և ընդհանրապես տեղաբնակ մյուս ժողովուրդների (լեզգիներ, թաթեր, թալիշներ և այլն) նկատմամբ պետական մակարդակով իրականացվող ազգային արժանապատվությունը ոտնահարող և էթնիկական գտման քաղաքականության պայմաններում, առավել սաստկացվեց գրաքննությունը, որն ակնառու էր հատկապես «Կոմունիստ» (1920–1989 թթ., խմբագիրներ՝ Ս. Խանոյան, Ս. Վարդանյան, Ի. Դովլաթյան, Ս. Մանուցյան, Ա. Վարդանյան, Գ. Անտելեայան, Հ. Բաբլումյան, Ե. Գրիգորյան, Հ. Ամիրխանյան, Տ. Գրիգորյան, Ե. Բաբայան, Է. Գրիգորյան) հայալեզու օրաթերթի ու «Գրական Աղբրեջան» երկամսյա

<sup>29</sup> Տե՛ս Գնունի Ա. [Ռուբեն Տեր-Գասպարյան], Հայկական կուլտուրան Աղբրեջանում, «Կոմունիստ», Բազու, 1921, հոկտեմբերի 2, N 243:

<sup>30</sup> Տե՛ս Սուրեն Ե., Հայարտուն, «Կոմունիստ», Բազու, 1925, փետրվարի 27, N 46, մարտի 26, N 66:

ամսագրի նկատմամբ: Եթե առաջին տարիներին «Կոմունիստ»-ը ներկայացնում էր հանրապետության առօրյան, տպագրում էր հայ գրողների գործերը, ապա 1960-ական թվականներից սկսած՝ Ադրբեջանի վերադաս կուսակցական մարմինների ճնշման տակ անկարող էր անդրադառնալ Բաքվում, հատկապես Ադրբեջանին բռնակցված բուն հայկական Արցախի և Նախիջևանի շրջաններում, ինչպես նաև հանրապետության հայաբնակ այլ վայրերում հայ բնակչության նկատմամբ իրականացվող հալածանքներին ու անսքող կամայականություններին:

Բաքվի հայ բնակչությանն իրավազրկելու, ճնշելու և հալածելու քաղաքականությանը հաջորդեցին հայերի դեմ 1990 թ. հունվարի 13-19-ը կազմակերպված ջարդերը<sup>31</sup>: Բաքվում կոտորածի ենթարկված հայերի թիվը ոչ լրիվ տվյալներով անցնում է 400-ից<sup>32</sup>: Հայերի ցեղասպանությանը հաջորդեց Բաքվից հայերի վերջին հատվածի բռնագաղթը, որով և ավարտվեց Բաքվի հայերի գրատպության և առհասարակ կրթամշակութային կյանքը:

---

<sup>31</sup> Սոսեստվա Ի., Հովնանյան Ա., Բաքվի ջարդերը (պաշտոնական փաստաթղթեր, ականատեսների վկայություններ և այլ նյութեր 1990 թ. հունվարի 13–19-ի ուղբերգական իրադարձությունների վերաբերյալ՝ անհրաժեշտ մեկնաբանություններով), Երևան, 1992:

<sup>32</sup> Տես Մարութեան Յ., Ցեղասպանութիւնների շարքեր: Պատմական յիշողութիւնը եւ ինքնութիւնը տարեթուերում ու տեղանուններում (ըստ Ղարաբաղեան շարժման նիւթերի), «Հայկազեան Հայագիտական Հանդէս», հ. ԻԷ, Պէյրուք, 2007, էջ 312, տես նաև՝ Նույնի՝ Հայ ինքնության պատկերագրությունը: Ցեղասպանության հիշողությունը և ղարաբաղյան շարժումը, հ. Ա, Երևան, 2009, էջ 163:

**ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿՋԲՆԱՎՈՐՈՒՄ  
ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ  
ՀԱՅԱԲՆԱԿ ԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ  
(XIX դարի վերջ – XX դարի սկիզբ)**

Հայկական տպագրությունը Վրաստան մուտք է գործել XIX դարի առաջին քառորդում՝ հայերեն առաջին գրքի տպագրությունից շուրջ 300 տարի անց: Սակայն, մինչ այդ, թիֆլիսում հայկական տպարան ստեղծելու մի քանի փորձեր կատարվել էին, որոնք անցել էին ապարդյուն: Միաժամանակ պետք է նշել, որ հայերը լուրջ օգնություն են ցույց տվել թիֆլիսում վրացական տպագրության սկզբնավորման ու զարգացման գործին: Դեռևս XVIII դարի կեսերին վրաց արքա Յերակլ II-ը Պոլսից թիֆլիս է հրավիրել տպագրական գործի նշանավոր մասնագետ Պոզոս Յովհաննիսյանին (Արապյան, 1742–1835), որպեսզի նա օտար նվաճողների կողմից ավերված թիֆլիսի տպարանը վերականգնի ու գործարկի, ուր դեռևս 1709 թ. տպագրվել էր «Ավետարան», 1711-ին՝ «Սաղմոսներ», իսկ 1712-ին՝ Շոթա Ռուսթավելու «Վեփիսիստղատսանի» («Ընծենավորը») պոեմը: Սրանք են վրաց հողի վրա տպագրված առաջին գրքերը:

XVIII դարում թիֆլիսի այդ միակ վրացական տպարանը մի քանի անգամ ավերվել է և Պոզոս Յովհաննիսյանի պատրաստած տպագրիչ վարպետների կողմից կրկին վերականգնվել: Իսկ 1801 թ., երբ Վրաստանը և Արևելյան Հայաստանի մի մասը միացվել են Ռուսաստանին, հիշյալ տպարանն անցել է Ռուսաց կայսրության տեղական կառավարչության իրավասության տակ: Նորաստեղծ վրացական նահանգի ղեկավարությունը 1804 թ. այդ տպարանը վերանորոգել ու վերազինել է ժամանակի պահանջներին համապատասխան՝ այն հարստացնելով ռուսական,

վրացական, հայկական և ֆարսի տառատեսակներով: Վերագործարկված այդ տպարանի նպատակն էր Ցարական Ռուսաստանի հիմնական օրենքներն ու տեղական իշխանության որոշումները տպագրելը և Վրաստանի ազգաբնակչության շրջանում իրենց մայրենի լեզուներով տարածելը:

Իսկ զուտ հայկական տպարան թիֆլիսում հիմնադրվել է 1819 թ., որը հետագայում՝ 1824 թ., նվիրաբերվել է նորաստեղծ Ներսիսյան դպրոցին: Թիֆլիսում այդ հայկական առաջին տպարանը գործել է մինչև 1860-ական թթ. կեսերը, որից հետո այստեղ հիմնադրվել ու գործել են չորս տասնյակից ավելի հայկական այլ տպարաններ, որոնք լույս են ընծայել հազարավոր արժեքավոր գրքեր ու 200-ից ավելի պարբերականներ:

Թիֆլիսի վերոհիշյալ տպարաններից բացի, XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին հայկական տպարաններ են ստեղծվել նաև Վրաստանի ու նրա հարակից շրջանների հայաբնակ գավառներում: Դրանցից կարևորներն են Ախալցխայի, Ախալքալաքի, Սղնախի, Բաթումի և Սուխումի տպարանները: Մամուլի և գրատպության այդ օջախները մեծ դեր են կատարել հայ գիրն ու գրականությունը (և ոչ միայն) և տպագիր խոսքը Վրաստանի հայաշատ վայրերում տարածելու գործում:

Վրաստանում հայկական առաջին գավառական տպարանը հիմնադրվել է Ախալցխայում 1880-ական թթ. սկզբներին<sup>1</sup>, երբ նույնիսկ վրացական գավառներում դեռևս տպարաններ չէին

---

<sup>1</sup> Գ. Լևոնյանն իր «Յայ գիրքը և տպագրության արվեստը» (Երևան, 1946, 1958) հանրահայտ աշխատության հավելվածում, ժամանակագրական կարգով ներկայացնելով հայկական տպագրությունները մինչև XIX դարի վերջը, Ախալցխայի տպարանի հիմնադրման տարեթիվ է նշում 1888 թ. (տես էջ 246), որը չի համապատասխանում իրականությանը: Ախալցխայի տպարանը ստեղծվել է մինչև 1885 թ., երբ սկսել է իրականացնել իր առաջին հրատարակությունները: Անդրանիկ գիրքն այստեղ տպագրվել է 1885 թ., որն է՝ «Մի կողով ելակ» մանկական պիեսը: Գ. Լևոնյանի կազմած այդ աղյուսակում կան նաև այլ անճշտություններ: Օրինակ, որոշ տպարանների հիմնադրման տարեթվերը չեն համապատասխանում ներկայումս ընդունված թվականների հետ: Բացակայում են նաև մի շարք կարևոր քաղաքների անուններ, հատկապես հայկական, որոնցում դեռևս XIX դարի կեսերից գործել են հայտնի տպարաններ և դրանցում լույս են ընծայվել մի շարք գրքեր ու պարբերականներ:

գործում: Այդ շրջանում միայն նահանգական կենտրոն Քուբայիսում է գոյություն ունեցել վրացական տպարան, որտեղ 1881–1883 թթ. լույս է տեսել «Շրոմա» («Աշխատանք») վրացերեն առաջին տեղական թերթը, իսկ 1883–1910 թթ.՝ «Մծղեմսի» («Հովիվ») եկեղեցական հանդեսը: Քուբայիսում հետագայում հիմնադրվել են մի քանի վրացական տպարաններ, որոնցում մինչև 1920 թ. տպագրվել են բազմաթիվ գրքեր ու մի շարք պարբերականներ<sup>2</sup>: Մյուս վրացական գավառական կենտրոններում տպարաններ հիմնադրվել են միայն XX դարի սկզբներին՝ Ախալցխայի տպարանի հիմնադրումից շուրջ քառորդ դար անց:

Ախալցխայի այդ անդրանիկ տպարանի հիմնադիրը եղել է Մկրտիչ Ղալամքարյանը, որի մասին, ցավոք, շատ սուղ կենսագրական տեղեկություններ ունենք: Նույնիսկ անհայտ են նրա ծննդյան և մահվան տարեթվերը: Հայտնի է միայն, որ նա ծնվել և ապրել է Ախալցխայում, իսկ թե տպագրական գործին որտե՞ղ է ծանոթացել, այդ մասին տեղեկություններ չունենք:

Նրա հիմնադրած տպարանում 1885 թ. լույս է տեսել Խ. Ստեփանեի խմբագրած «Մանկավարժանոց» հանդեսը: Հայտնի է, որ Խորեն ծայրագույն վարդապետ Ստեփանեն 1884 թ., երբ հիմնադրում էր «Մանկավարժանոց» ամսագիրը, պաշտոնավարում էր Էջմիածնում: Նա իր հանդեսն այնտեղ խմբագրում և ուղարկում էր Թիֆլիս՝ տպագրության, որը լույս էր տեսնում Հովի. Մարտիրոսյանցի տպարանում: Նույն տարվա վերջերին Խ. Ստեփանեն նշանակվում է Հայոց եկեղեցու Վրաստանի թեմի Ախալցխայի և Ախալքալաքի վիճակի առաջնորդական փոխանորդ ու հայկական դպրոցների տեսուչ, և իր ամսագիրն էլ՝ սկսած 1885 թ. սկզբից, տպագրում է Ախալցխայում: Սիա այդ առթիվ ինչ է գրում նա իր հանդեսի 1885 թ. անդրանիկ համարի «խմբագրության հիշատակարան»-ում. «Այս անգամ «Մանկավարժանոցը» ուշացավ փոքր ինչ. պատճառն ամսագիրն Ախալցխայում տպագրելն էր: Պարոն Մկրտիչ Ղալամքարյանն ուներ փոքրիկ տպարան (մի մամուլ և մի քանի գրվանքա տառ, № 12) տոմսակներ,

<sup>2</sup> Абрамишвили А. З., Грузинская периодика (1819–1917 гг.), Тбилиси, 1968, с. 45–46.

այցելատոմսեր և այլն տպելու համար: Ամսագիրը տպելու համար հարկավորվեցավ քանի մի փութ տառ իւր պարագաներով բերել տալ: Ուստի, «Մանկավարժանոցն» օգտավետ համարեց փոքր-ինչ ուշանալ հրատարակութեամբ, մինևույն ժամանակ սկզբնապատճառ դառնալ Ախալցխայի փոքրիկ տպարանը ընդարձակելու, գիրք կամ ամսագիր տպել կարողանալու չափով: Խմբագրությունն կհուսա, որ հայկական տպարանի ընդարձակվելու օգուտը ի նկատի ունենալով, ընթերցողները ներողամիտ կլինեն «Մանկավարժանոցիս» ուշանալու համար»<sup>3</sup>: Ինչպես տեսնում ենք, Խ. Ստեփաննի Ախալցխա տեղափոխվելուց առաջ Մ. Ղալամքարյանի տպարանը գոյություն է ունեցել: Սակայն ե՞րբ է հիմնադրվել այն, գուցե 1880 թ. կամ ավելի վաղ, այսօր դժվար է ճշգրիտ պատասխան տալ այս հարցին: Բայց մի բան պարզ է, որ 1884-ին այն գործել է և այնտեղ տպագրվել են, ինչպես վկայում է Խ. Ստեփաննեն, «տոմսակներ, այցելատոմսեր և այլ» փաստաթղթերի ձևեր (բլանկներ): Ուրեմն այստեղից կարելի է եզրակացնել, որ Ախալցխայում Մ. Ղալամքարյանն իր տպարանը հիմնադրել էր 1884 թ. առաջ: Սկրտիչ Ղալամքարյանի տպարանում, «Սանկավարժանոց»-ից բացի, տպագրվել են զանազան գրքեր: Այստեղ տպագրված առաջին գիրքը, ինչպես նշեցինք, եղել է վերոհիշյալ «Մի կողով ելակ» մանկական դրաման: Իսկ երկրորդ գիրքը Հարություն Մարադյանի հեղինակած «Քանդած օջախ. Անցեալից մի յիշողութիւն» հուշապատումն է, որը 1889 թ. հրատարակվել է Հովհ. Գրիգորյանի նախածնունդությամբ<sup>4</sup>: Երրորդ գրքույկը «Կ.Տ.Ս.» հեղինակային ծածկանունով և «Որբուկի օրը» վերնագրով ռուսերենից կատարված մի թարգմանությունն է, որը տպագրվել է 1891 թ.: Իսկ 1898 թ. նույն տպարանում տպագրվել

<sup>3</sup> «Մանկավարժանոց», Ախալցխա, հունվար-փետրվար 1885 թ., N 1, էջ 58-59:

<sup>4</sup> Գ. Լևոնյանն այս գրքի հեղինակ է համարել Գաբրիել Սունդուկյանին, որն, ինչպես տեսնում ենք, ճիշտ չէ: Երևի նրան շփոթեցրել է ստեղծագործության վերնագիրը (տես նշվ. աշխ., էջ 231): Այս գրքի մասին մատենագիտական ճշգրիտ տվյալները տես «Հայ գրքի մատենագիտություն», հ. Գ, Երևան, 1999, էջ 411, № 5295:

է նաև «Հաշիւ Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան Ախալցխայի ճիւղին» հաշվետվությունը:

Ախալցխայում Մկրտիչ Ղալամքարյանի տպարանին զուգընթաց XIX դարի վերջերին տպարան է հիմնադրել նաև Խորեն Ասմարյանցը, որը Տիգրան Վարդանյանցի կողմից լեհերենից կատարված թարգմանությամբ 1896 թ. լույս է ընծայել Հենրիկ Սենկևիչի «Գնանք նորա յետեւից» պատմվածքը, ապա նույն տպարանից լույս են տեսել նաև երաժշտագետ Շահան Սիմոնի չորս գրքույկները. առաջինը՝ «Պատարագի երգեցողութիւն յարմարեցրած նորուսների համար (դպրոցների բաժին, պրակ Ա)» (1900 թ.): Նույնը վերահրատարակվել է 1906 թ., որը կրում է «Սուրբ պատարագի երգեցողութիւն յաւելուածով՝ յարմարեցրած նորուսների համար» վերտառությունը, ապա՝ «Հեզական մանկանց Առաջին կանոն սաղմոսաց Դաւթի» (1907 թ.), «Հաշիւ Արմաւիրի հայոց եկեղեցական քառածայն խմբի (1909–1910 թթ.)» (1912 թ.): Հիշյալ տպարանում 1907 թ. տպագրվել էր նաև Նիկողայոս Հովհաննիսյանի «Լիզա» երեք գործողությամբ կատակերգությունը, որը հեղինակը մի քանի անգամ բեմադրել է Ախալցխայի հայկական թատրոնում:

Ախալցխայում լույս են տեսել նաև պարբերական մամուլին փոխարինող՝ նրա հատկանիշներով օժտված, լրատվական բնույթի գրքույկներ, որոնք ընթերցող լայն հասարակությանը ծանոթացրել են զավառում տեղի ունեցած կարևոր իրադարձություններին: Դրանց լույս ընծայումը պայմանավորված է եղել ծագած իրավիճակների հրատապ թելադրանքով: Այդպիսիք են, օրինակ, անցյալ դարասկզբին Մ. Թ. Շուլարտյանցի նորաբաց տպարանում 1908 թ. տպագրված «Ախալցխայի հայոց երկսեռ դպրոցների հոգաբարձութեան 1906–1908 թթ. գործունեութեան տեղեկագիր»-ը և եռալեզու (հայերեն, ռուսերեն, վրացերեն) «Աթոռակալաց ընտրութեան եւ անոնց իրաւանաց եւ պարտականութեանց նկատմամբ տուեալ ի Տիրասպոլու հռովմեական կոնսիստօրեայէ ի 29 նոյեմբերի 1907 թ. կանոնք»-ը, ինչպես և Հռոմի Լևոնյան հայոց դպրոցի նախկին սան Հակոբ վարդապետ

Բագրատյանի 1909 թ. մայիսի 16-ին արտասանած ճառ-դամբանականը «Ի սգալի մահ վաղամեռիկ Անտոնի կիսասարկաւազի Փիլոսեան Արդուինցոյ՝ յաշակերտին քահանայապետական Լեւոնեան հայ դպրոցի որ ի Դռովմ»։ Սույն դամբանականը հրատարակվել է Սարգիս վրդ. Տեր-Աբրահամյանի կարգադրությամբ՝ 1909 թ.։ Իսկ մինչ այդ՝ 1907 թ., նույն տպարանից լույս էր տեսել Պողոս Քաջօրյանցի «Սգոյ գիշեր» գիրքը։

Ախալցխայի մյուս հանրահայտ տպարանը պատկանել է Մարտիրոս և Գայկ Մարտիրոսյանց եղբայրներին, որ նրանք հիմնադրել էին XX դարի սկզբներին։ Այդ տպարանից 1905 թ. լույս է տեսել երկու գիրք՝ Ս. Կլայեկչյանի «Բարի ընկերս» վեպը և Սարգիս Խոջայեանց-Խաչատրյանի «Նոր վեպիկ»-ը, որը նվիրված է Սիմոն Գրիգորյան-Գովհաննիսյանի կյանքին ու դառը ճակատագրին։ Նույն տարում է տպագրվել նաև «Արեան վրէժ» գրքույկը՝ իսկ 1906 թ. լույս ընծայված գրքերի շարքում, հատկապես, աչքի է ընկնում «Ազգային քնար» խորագիրը կրող երգարանը, որը պարունակում է ժամանակի գրեթե բոլոր հայրենասիրական ու ֆիդայական երգերը։ Այստեղ են տպագրվել նաև Պերճ Գայֆեճյանի «Դովիկ» արծակ բանաստեղծությունների ժողովածուի երկու պրակները։ Նույն բանաստեղծի մեկ այլ ժողովածու, որ կրում է «Կեանքի գնով» վերնագիրը՝, տպագրվել է 1909 թ.։ 1907 թվին այստեղ տպագրվել էր նաև «Մարդկային կրքերի դաստիարակութեան կանոններ» թարգմանական գիրքը, ինչպես նաև Սիոն վարդապետ Տեր-Մամվեյանի «Եզդիի կուրմանժ» ուսումնասիրությունը, որը լույս է տեսել 1910 թ. և արժեքավոր տեղեկություններ է պարունակում եզդիների կուրմանժ ցեղի առաջացման, դեգերումների, ազգագրության, կենցաղի, լեզվի ու սովորույթների մասին՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև XIX դարի վերջերը։

---

\* Այս և սրանից հետո տեքստում վկայակոչված այն գրքերը, որոնք տպագրվել են Ախալցխայի տպարաններում և նշված են սրտածև նշանով (\*), ընդգրկված չեն «Դայ գրքի մատենագիտության» ցուցակներում, որոնց ընդհանուր թիվը, մեր հաշվումներով, անցնում է հինգից։

Այս տպարանում է տպագրվել նաև Ջավախք-Մեսիսեթյան գավառների ՀՅԴ կուսակցության տեղական կազմակերպության օրգան «Շարժում» թերթը (1917–1918 թթ.), որն ունեցել է հավելվածներ: Դրանցից նշենք, օրինակ, Ս. Ջարաֆյանի հեղինակած «Ինչպես հիմնենք սպառողական ընկերություններ գյուղում» և Վ. Գայֆեճյանի «Սահմանադիր ժողով» (1917 թ.) գրքույկները\*:

Ախալցխայում, վերոնշյալ չորս տպարանից բացի, գործել է նաև հինգերորդը՝ Հեպիայան եղբայրների տպարանը, որի հիմնադրման թվականը մեզ չի հաջողվել պարզել: Ժամանակակիցների վկայությամբ այն գործել է 1910-ական թթ. վերջերին և հայերեն, վրացերեն ու թուրքերեն լեզուներով լույս է ընծայել զանազան հայտարարություններ, մահազոներ ու զովազոներ և տեղեկատվական բնույթի այլ նյութեր: Սակայն գրքի տպագրություն այստեղ կատարվե՞լ է, թե՞ ոչ, չենք կարող ասել, քանի որ այնտեղ տպագրված որևէ գիրք առայժմ չի հայտնաբերվել:

Այսպիսով, XIX դարի վերջին քառորդում և XX դարի առաջին երկու տասնամյակների ընթացքում Ախալցխայում գործել է հինգ հայկական տպարան, որոնք տպագրել են երկու պարբերական՝ իրենց հավելվածներով, և երեք տասնյակից ավելի անուն ինքնուրույն ու թարգմանական գրքեր, երաժշտական գրականություն, հաշվետվություններ, որոնց մի զգալի մասը ցարդ մնում է անհայտության մեջ:

Հիշյալ տպարաններից Ս. Ղալամքարյանի տպարանը, ըստ երևույթին, XIX դարի վերջերին կամ էլ XX դարասկզբին փակվել է, որովհետև դրանից հետո Ախալցխայում հրատարակված գրքերի վրա նրա անունն այլևս չի հիշատակվում: Նույնը կարելի է ասել նաև Խ. Ամարյանցի և Մ. Թ. Շուլարտյանցի տպարանների մասին, որոնք փակվել են 1918 թ., երբ Ախալցխան ընկել է թուրքերի ձեռքը: Իսկ մյուս երկու տպարանները գործել են մինչև Վրաստանում խորհրդային կարգերի հաստատումը: Դրանից հետո դադարեցվել է նաև Հեպիայան եղբայրների տպարանի գործունեությունը, որից հետո Ախալցխայում մնացել է միայն Մ. և Հ. Մարտիրոսյանց եղբայրների տպարանը, որը պետականացվել է

ու իր գործունեությունը շարունակել նաև 1920-ական թթ.: Իսկ հետագայում՝ 1930 թ., նրա հիմքի վրա ձևավորվել է Ախալցխայի շրջանային տպարանը՝ հայերեն, վրացերեն և թուրքերեն տառատեսակներով, ուր և հիշյալ լեզուներով տպագրվել են նորաստեղծ շրջանային թերթերը:

\*  
\* \* \*

Ջավախքի կենտրոն Ախալքալաքում առաջին և միակ տպարանը նույնպես հիմնադրվել է XIX դարի վերջերին՝ Միսաք և Ալեքսանդր Գրիգորյան եղբայրների կողմից, որոնք մշտական բնակության համար այստեղ էին տեղափոխվել իրենց ծննդավայր Ախալցխայից: Ամենայն հավանականությամբ այդ տպարանի սարքավորումները նրանք իրենց հետ բերել էին Ախալցխայում գործող տպարաններից, հետագայում՝ նոր դարասկզբին (1905–1906 թթ.), անգլիական տպագրական նոր սարքավորումներ ու մեքենաներ են ձեռք բերում Գերմանիայից ու վերազինում Ախալքալաքի տպարանը:

Այգբնական շրջանում այստեղ տպագրվել են զանազան ազդագրեր, հայտարարություններ ու փաստաթղթերի ընդունված տպածներ, կատարվել են քաղաքացիական ու զինվորական պատվերներ: Այդ տպարանում լույս տեսած առաջին գիրքը եղել է «Ախալքալաքայ Հայոց ս. Մեսրոբեան և ս. Սանդուխտեան ծխական երկսեռ երկդասեան ուսումնարանների 1905–06, 1906–07 եւ 1907–08 թւականների հաշիւը» (1908 թ.), ապա 1913 թ. լույս է տեսել Միքայել Մուրաֆյանի «Տանջանքի բովից» արծակ ստեղծագործությունների ժողովածուն, իսկ 1917թ. տպագրվել է Գ. Նովոտորոսկու «Ազգային հարց. Ավտոնոմիա եւ ֆեդերացիա» աշխատության հայերեն թարգմանությունը՝ կատարած «Գ. Խ.»-ի կողմից: Այն հրատարակվել է «Յառաջի» գրադարան» մատենաշարով (№ 71):

Այս տպարանում է տպագրվել նաև Վ. Շահպարոնյանի հիմնադրած «Ջավախք» շաբաթաթերթը (1913–1916 թթ.), որն ունեցել է ««Ջավախքի» գրադարան» մատենաշարով գրական-գե-

ղարվեստական հավելվածներ: Դրանք առանձին գրքույկներով տարեկան մեկ-երկու անգամ լույս են տեսել և անվճար բաժանվել թերթի բաժանորդներին: Դրանցից են Հովհ. Մալխասյանի «Ջավախքի երազը. գրական-գեղարվեստական պատկեր»-ը (1913 թ.) և Վ. Այ-Վազի (Վարդան Այվազյան – Վ. Մ.) «Երազը կատարուեց. պատկեր գիւղական կյանքից» (1913 թ.), «Լեւոնի դատը. մանկական պիես մեկ արարուածով» դրաման ու «Կեանքի ճամբին (մենութեան խոհեր)» (1914 թ.) գրքույկները:

Առաջին աշխարհամարտի շրջանում, երբ 1918 թ. եղեռնագործ թուրքերը գրավում են Ախալքալաքը և ազգաբնակչությանը կոտորում ու գաղթի մատնում, տպարանը քանդում և նրա սարքավորումները տեղափոխում են Արդահան: Պատերազմի ավարտից հետո Մ. և Ա. Գրիգորյան եղբայրները, գաղթից վերադառնալով, գնում և մեծ դժվարություններով իրենց տպարանի սարքավորումները Արդահանից տեղափոխում են Ախալքալաք և այն կրկին վերագործարկում:

Վրաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Ախալքալաքում գործող այդ միակ տպարանը պետականացվել է և այնուհետև՝ 1924–1925 թթ. այնտեղ տպագրվող գավառային թերթի անունով կոչվել «Կարմիր Ջավախք»: Այս տպարանում 1925–1926 թթ. տպագրվել է նաև «Ռանչպար» թերթը, իսկ 1931 թ. նրա հիմքի վրա ստեղծվել է Ախալքալաքի շրջանային տպարանը, ուր սկսել է տպագրվել «Սոցիալիստական անասնաբուծություն» շրջանային թերթը:



Հայկական տպարան գործել է նաև Կախեթի Սղնախ քաղաքում, ուր XIX դարի վերջերին ապրում էին մեծ թվով հայեր, որոնք ունեին իրենց հոգևոր-մշակութային աշխույժ կյանքը: Այստեղ կային հայկական դպրոցներ, եկեղեցիներ, հնուց եկող նյութական մշակույթի բազմաթիվ հուշարձաններ: Սակայն XX դարի սկզբներին Կախեթի հայությունն աստիճանաբար դարձել է վրացախոս՝ մոռանալով իր մայրենի լեզուն ու դպրությունը:

Սղնախի հայկական տպարանը հիմնադրվել է XIX դարի վերջերի<sup>5</sup>: Ի՞նչ է տպագրվել այդ տպարանում, այսօր դժվար է ասել, որովհետև նրա արտադրանքից առայժմ ոչինչ չի հայտնաբերվել: Սակայն մի բան պարզ է, որ եթե գոյություն է ունեցել տպարան, ապա այն պետք է ծառայեր իր նպատակին: Մեզ թվում է, որ Սղնախի տպարանը ևս, ինչպես ժամանակին գործած շատ տպարաններ, տպագրել է տեղեկատվական և գովազդային բնույթի նյութեր, կատարել է զանազան պատվերներ ու ծառայություններ:

Սակայն, դրան հակառակ, Սղնախում, իրոք, հայկական տպարան հիմնադրվել է XX դարի սկզբին, Ի. Տ. Տեր-Դավթյանի կողմից<sup>6</sup>: Գուցե հենց այս տպարանի մասին է խոսքը, որը Հայկական Սովետական և Հայ Սփյուռք հանրագիտարանների հողվածագիրները սխալմամբ վերագրում են 1880-ական թվականներին: Սղնախի մեզ հայտնի այս տպարանը կրել է «Սխիվի» («Ճառագայթ») անունը, որտեղ 1912–1917 թթ. տպագրվել է «Խմա Կախեթիսա» («Կախեթի ծայն») թերթը: Այս պարբերականը համարվում է Կախեթի առաջին լրագիրը, որը, վրացերեն լինելով հանդերձ, իր էջերում լայն տեղ է հատկացրել հայ ազգաբնակչության սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական ու գրական՝ մշակութային կյանքին: Իսկ հայերեն ի՞նչ է տպագրվել Ի. Տ. Տեր-Դավթյանի տպարանում՝ չգիտենք, քանի որ նրանում տպագրված հայերեն որևէ տեքստ առայժմ չի հայտնաբերվել:

\*  
\* \*

Սկսած XIX դարի վերջին քառորդից՝ հայ գրական – մշակութային կյանքն իր ծիլերն է արձակում նաև Սև ծովի կովկասյան ափերին, ուր արդուլիհամիդյան բռնությունների ու կոտորածների հետևանքով Արևմտյան Հայաստանի տարբեր վիլայեթներից հազարավոր հայեր էին ապաստան գտել՝ գլխավորապես բնակություն հաստատելով Աջարիայի ու Աբխազիայի կենտրոններ Բա-

<sup>5</sup> Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 10, Երևան, 1984, էջ 449-450:

<sup>6</sup> Абрамишвили А. З., նշվ. աշխ., էջ 45-46:

թումում ու Սուխումում: Սևծովյան ավազանի այդ քաղաքներում շուտով հիմնադրվում են հայկական կրթական ու հոգևոր հաստատություններ, գործում են շրջիկ թատերախմբեր ու երգչախմբեր, որոնք արմատավորվելով, աստիճանաբար դառնում են մշտական (մստակյաց): Այդ քաղաքներում ևս հիմնադրվում են հայկական տպարաններ, որոնցում տպագրվում են գրքեր, թերթեր ու տեղեկատվական բնույթի այլ նյութեր:

Բաթումում նախախորհրդային շրջանում գործել է մի քանի տպարան, որոնցից առաջինը հիմնադրվել է երկու դարերի սահմանագծում Ն. Պ. Գուրոկյանի (Գուրսկի) կողմից<sup>7</sup>: Այս տպարանի անդրանիկ թողարկումը եղել է «Հաշիւ Բաթումի ս. Փրկիչ եկեղեցւոյ երեցվոխ Ս. Յարութիւնեանի 1898 թից 1901 թիւը» ֆինանսական հաշվետվությունը, որին հաջորդել է «Ընթերցողների ուշադրութեանը մատուցանում է Մեսրոպ Մելեանը» գրքուկը: Մրանք տպագրվել են 1901թ.: Այնուհետև 1904 թ. նույն տպարանում լույս են տեսել Գրիգոր Բալասանյանի «Պատիկ Սիեր» դուցազներգական-պատմական պոեմը, «Սասնա ծռերի յուշիկներից» ընդհանուր վերտառության տակ, ապա «Որբիկների արցունքները» բանաստեղծությունների ժողովածուն: Այս երկու գրքերի հրատարակիչն է Լևոն Սարիբեգյանը: Ն. Պ. Գուրոկյանի տպարանում լույս են տեսել նաև այլ գրքեր, որոնցից են Վսեվոլոդ Գարշինի «Ազդանշան» պատմվածքը՝ Ս. Հարությունյանի թարգմանությամբ, ինչպես և Ի. Սիգովի «Ի՞նչ է ազատութիւնը» աշխատանքը՝ դարձյալ Ս. Հարությունյանի թարգմանությամբ: Այս երկու գրքերը լույս են տեսել 1906 թ. և կրում են «Յօգուտ Բաթումի անգործ հայ բանւկորների» խորագիրը և ունեն «1» ու «2» թվահամարները:

Ն. Պ. Գուրոկյանի տպարանում լույս է տեսել նաև Ս. Հարությունյանի «Գաղափարի մարդը» արձակ երկը (հրատարակութ-

<sup>7</sup> Այս տպարանի պատկանելությունը Բաթումում լույս տեսած հայերեն գրքերի վրա նշված է տարբեր ձևերով՝ «Ն.Պ. Գուրսկի», «Ն.Պ. Գուրսկու», իսկ Թեոդիկն իր «Տիպ ու տառ» աշխատության մեջ (տես էջ 185) նշում է «Ն. Գուրոկյան» հայկական ձևով:

յուն՝ «Ս.Կ.Վ.»-ի, 1906 թ.), որն ունի ««Պայքարի» ժողովրդական գրադարան» ընդհանուր վերտառությունը: Այդ նույն մատենաշարով են տպագրվել նաև այլ գրքեր, որոնց ընդհանուր թիվն անցնում է հինգից:

Բաթումի երկրորդ տպարանը հիմնադրվել է 1900-ականների սկզբին, որը պատկանել է Խ. Ս. Շմասևկուն (ազգությունը՝ չպարզված): Այս տպարանում ևս լույս են տեսել հայերեն գրքեր: ««Պայքարի» ժողովրդական գրադարան» մատենաշարով 1906 թ. տպագրվել է Ա. Աննենսկայայի «Ի՞նչ է հասարակապետութիւնը» աշխատությունը՝ Ս. Հարությունյանի թարգմանությամբ: Այն կրում է հիշյալ մատենաշարի 4-րդ համարանիշը, իսկ 5-րդը՝ Ն. Մաքսիմովի «Աշխատանքի տօնը» գրքույկն է՝ «Ա. Ս.»-ի թարգմանությամբ: Նույն տպարանում է լույս տեսել նաև «Կանոնադրութիւն բաբերդցիների հայրենակցական միութեան» իրավատեղեկատվական գրքույկը (1917 թ.):

Բաթումում գործած երրորդ տպարանը կրում է «Պրոսվեշչենիյե» անունը, որը նույնպես հիմնադրվել է անցյալ դարասկզբին: 1909 թ. այստեղ տպագրվել է Ե. Չիրիկովի «Կեանքի շեմին» ստեղծագործությունը՝ Հ. Խաչատրյանի թարգմանությամբ: Այս տպարանում հայերեն ուրիշ ի՞նչ գրքեր են տպագրվել և արդյոք այդ տպարանը հայկակա՞ն է եղել, թե՞ ոչ, այդ մասին ևս ոչինչ ասել չենք կարող:

Բաթումի չորրորդ տպարանը, որ եղել է զուտ հայկական, հիմնադրվել է 1917 թ. մի խումբ հայ բոլշևիկների կողմից: Այդ տպարանում Հ. Հակոբյանի, Ս. Խանոյանի, Ա. Սարուխանյանի, Ս. Ջուրաբյանի և Գ. Գրիգորյանի նախածնունությամբ 1917–1918 թթ. տպագրվել է «Բանուր և զինուր» հայերեն թերթը<sup>8</sup>: Հիշյալ տպարանը եղել է ընդհատակյա<sup>9</sup>: Բաթումում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո այս տպարանը պետականացվել է,

<sup>8</sup> «Очерки истории коммунистической партии Грузии», в 3-х частях (1883–1981 гг.), ч. 1, «В борьбе за победу социалистической революции (1883–1921 гг.)», Тбилиси, 1982, с. 283.

<sup>9</sup> Գեգեչիձե Զ. Տ., Վրաստանի բոլշևիկյան կազմակերպությունների անլեգալ տպարանները (1900–1920 թթ.), վրացերեն, Թբիլիսի, 1968, էջ 242:

որտեղ տպագրվել են «Կոմունիստ» (1921 թ.) և «Բաթումի բանվոր» (1922 թ.) խորհրդահայ առաջին թերթերը Աջարիայում:

\*  
\* \* \*

Աբխազիայի կենտրոն Սուխումում ևս XX դարի սկզբներին աշխուժություն է ապրում հայ հասարակական – մշակութային կյանքը: Այստեղ 1911 թ. ստեղծվում է հայ ազգային խորհուրդ, որը ղեկավարում էր ճանաչված մտավորական, ուսուցիչ Խաչատուր Ավդալբեկյանը: Այս ժամանակ նա Սուխումում բացում է գրախանութ և հիմնադրում հայկական տպարան, որը կրում է «Պրոմեթեյ» անվանումը: Այդ տպարանում 1912 թ. սկսում է լույս տեսնել աբխազահայ առաջին պարբերականը՝ «Լույս» գրական-ժողովրդական շաբաթաթերթը, որը, փաստորեն, եղել է վերոհիշյալ խորհրդի գործադիր մարմնի օրգանը: Նրա հրատարակությունը նույն տպարանում շարունակվել է նաև 1913թ.: Հետագայում այս տպարանում տպագրվել են «Նոր կեսանք» (1918 թ.) և «Փարոս» (1919 թ.) հասարակական-քաղաքական թերթերը, որոնք ունեցել են մենշևիկյան ուղղվածություն<sup>10</sup>: Սուխումում նույն տպարանում 1920 թ. լույս է տեսել նաև հայերեն «Կարմիր աստղ» բուլշևիկյան թերթը<sup>11</sup>:

Իսկ Սուխումում նախախորհրդային շրջանում հայերեն գրքեր տպագրվել են, թե՞ ոչ, առայժմ չգիտենք, քանի որ ցարդ չի հայտնաբերվել այդ տարիներին այնտեղ հրատարակված որևէ գիրք:

Ամփոփելով՝ նշենք, որ XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին մեզ հետաքրքրող գավառներում ու մարզերում ընդհանուր հաշվարկով գործել է 12 հայկական տպարան, որոնցում տպագրվել են շուրջ 60 անուն գիրք և 9 պարբերական: Իր թողարկած արտադրանքի ծավալով ու տպագրության որակով

---

<sup>10</sup> Տե՛ս Հայոց պարբերական մամուլը, լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794–1934), առաջաբանով, ներածությամբ, ծանոթագրություններով և աղյուսակներով, կազմեց՝ Գարեգին Լևոնյան, Երևան, 1934, էջ 72, № 600, էջ 94, № 815, էջ 104, № 923 և էջ 180:

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 108, № 960 և էջ 180:

առաջին տեղն զբաղեցնում է Ախալցխան (շուրջ 30 անուն գիրք ու երկու պարբերական), երկրորդը՝ Բաթումը (շուրջ 15 անուն գիրք ու մեկ պարբերական), երրորդ տեղում է Ախալքալաքը (շուրջ 10 անուն գիրք ու մեկ պարբերական), Սուխումում տպագրվել է չորս անուն պարբերական, իսկ Սղնախի տպարանում տպագրվել է «Խնա Կախեթիսա» վրացերեն թերթը, իսկ գրքերի մասին առայժմ ոչինչ ասել չենք կարող: Այդ տպարաններում հայերենի հետ մեկտեղ տպագրվել են նաև ռուսերեն ու վրացերեն տեքստեր, տեղեկատվական բնույթի նյութեր, հնարավոր է, որ այդ լեզուներով հրատարակված լինեն նաև գրքեր: Տպարանների թվով ևս Ախալցխան գրավում է առաջին տեղը, ուր գործել է հինգ տպարան, Բաթումում՝ չորս, իսկ Սղնախում, Ախալքալաքում ու Սուխումում՝ մեկական: Այդ տպարանների թողարկած գրքերը ժամանակի տպագրատեխնիկական սուղ պայմաններում անգամ եղել են որակով, ունեն պատշաճ տեսք, օգտագործված են արտահայտիչ ու հստակ տառատեսակներ, ծաղկազարդ գլխագրեր ու վերջնազարդեր, որոնք հաճախ այդ հրատարակությունները դարձրել են տպագրական արվեստի գեղեցիկ նմուշներ: Բայց, ցավոք, ոչ բոլոր հրատարակություններն են մեզ հասել: Հասածներն էլ կրում են ժամանակի ծանր հարվածների հետքերը՝ մեծ մասամբ քայքայված են, պատռվածքներով ու ցեցակեր, առանց կազմերի ու անվանաթերթերի: Ընկած են նաև առանձին էջեր ու տիտղոսաթերթեր: Մենք կարողացել ենք դրանցից միայն մի քանիսն ուսումնասիրել, որոնք հիմնականում փոքրադիր չափսերի (7x17 սմ) ու ծավալի (16–64 էջ) գրքույկներ են: Դրանց տպաքանակները նույնպես փոքր են՝ 200–300 օրինակ, որոնցից հատուկեմտ օրինակներ են պահպանվում Հայաստանի ազգային գրադարանում, Մատենադարանում, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում և այլուր: Շատ քիչ օրինակներ էլ գտնվում են աշխարհասփյուռ գրադարաններում ու թանգարաններում, Սփյուռքի մշակութային կենտրոններում՝ մեծ մասամբ անձեռնմխելի ֆոնդերում:

Հայկական տպարանների հիմնադրումը և հայ գրքի տպագրությունը Վրաստանի հայկական և հայաքնակ գավառներում ժամանակին ունեցել է խոշոր նշանակություն: Չէ՞ որ տպարաններն անցյալում եղել են նաև մշակութային կարևոր օջախներ, որոնք, տպագրելով տեղական մտավորականության գրական երախայրիքներն ու գիտական պրպտումների արդյունքները, նպաստել են նրանց ստեղծագործական ուժերի բացահայտմանը: Դրանով այդ տպարանները խթանել են տեղական գրական մշակութային ու գիտական կյանքի աշխուժացմանն ու առաջընթացին, ստեղծագործող կարող ուժերին ու մտավորականությանը թույլ չեն տվել հեռանալ իրենց ծննդավայրից: Դրանց դերը մեծ է եղել նաև մայրենի լեզվի, հայ գրի ու գրականության պահպանման ու տարածման գործում: Դրա լավագույն ապացույցներից մեկն էլ հենց Վրաստանի հիշյալ գավառների ու մարզերի օրինակն է, ուր ժամանակին ունեցել ենք բազմաթիվ աչքի ընկնող գրողներ, հրապարակախոսներ ու մշակութային գործիչներ, որոնք իրենց ողջ կյանքի ընթացքում ապրել ու ստեղծագործել են այդ վայրերում՝ նպաստելով հայ գրականության ու մշակույթի զարգացման ընդհանուր գործընթացին: Տպարաններն իրենց այդ ազգապահպան ու մշակութային կարևոր դերը, հատկապես արտերկրում ու Սփյուռքում, չեն կորցրել նաև մեր օրերում:

## ՀԱՅՊԵՏՐԱՏԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՈՒՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Բնակչության լայն զանգվածների շրջանում գաղափարա-քաղաքական ու մշակութային քարոզչություն իրականացնելու և պետության բոլոր ոլորտներում միակուսակցական համակարգ հաստատելու գործընթացում խորհրդային իշխանությունը կարևոր դերակատարություն էր հատկացնում լրատվության միջոցներին, հրատարակչական-քարոզչական աշխատանքներին: Օրինաչափ է, որ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից հետո փակվեցին նախկինում հրատարակվող պարբերականները, և սկսեցին հրատարակվել միայն կոմունիստական ուղղվածություն ունեցող թերթեր ու ամսագրեր: Արդեն 1920 թ. դեկտեմբերի 5-ին այն նույն տպարանում, ուր նախկինում տպագրվում էր դաշնակցական «Հառաջ»-ը, սկսեց հրատարակվել Հայաստանի կոմկուսի կենտկոմի պաշտոնաթերթ հայալեզու «Կոմունիստ»-ը:

Հայաստանի Սոցիալիստական խորհրդային Հանրապետությունում (ՀՍԽՅ) իրականացվող հրատարակչական-քարոզչական աշխատանքների բնագավառում առանցքային դերակատարում էր վերապահված լուսավորության ժողովրդական կոմիսարիատին: Խորհրդային Հայաստանի առաջին լուսժողկոմը (1920–1921 թթ.) անվանի պետական-կուսակցական գործիչ ու մտավորական Աշոտ Հովհաննիսյանն էր: 1921 թ. աշնանը նրան փոխարինեց Պողոս Մակինցյանը: Իսկ 1923–1929 թթ. ՀՍԽՅ լուսժողկոմն Ասքանազ Մռայլյանն էր:

Ռուսաստանում իշխանությունը գրավելուց օրեր անց՝ 1917 թ. հոկտեմբերի 27-ին, Վ. Լենինի ստորագրությամբ հրատարակվեց

«Մամուլի մասին» ղեկրետը, որի հիման վրա սկսեցին փակվել «անհնազանդ» թերթերը: Խորհրդային շրջանի գրաքննության պատմությամբ զբաղվող մասնագետների կարծիքով՝ խորհրդային գրաքննության ձևավորման գործընթացում 1919–1921 թթ. կարևոր դեր է ունեցել ՌՍՖՍՀ պետական հրատարակչությունը: Վերջինի մեջ էին միավորվել Համառուսաստանյան Կենտգործկոմի, Մոսկվայի և Պետրոգրադի խորհուրդների և այլ մարմինների հրատարակչական բաժինները, ինչը նպաստեց քաղաքական վերահսկողության արմատավորմանը: Մինչև 1922 թ. հունիսի 6-ին ՌՍՖՍՀ Գլավլիտի հիմնումը, ռուսական Պետհրատը փաստացի գրաքննական գործառույթներ էր իրականացնում:

Մի փոքր այլ էր ՀՍՄՀ Պետական հրատարակչության պարագան:

ՀՍՄՀ Ժողկոմխորհի 1921 թ. մայիսի 27-ի նիստում քննարկվեց պետական հրատարակչություն ստեղծելու հարցը և որոշվեց հանրապետության ամբողջ հրատարակչական գործը կենտրոնացնել այնտեղ<sup>1</sup>: Ժողկոմխորհի հունիսի 8-ի ղեկրետի համաձայն՝ հանրապետության սահմաններում մամուլին և հրատարակչությանն առնչվող բոլոր գործերը միավորելու և «նրանց գործունեությունը ուժեղացնելու» (իրականում՝ արդյունավետ վերահսկելու) նպատակով լուսժողկոմատին կից կազմակերպվեց Պետական հրատարակչություն (պետհրատ): Վերջինի մեջ մտան բոլոր ժողկոմատներին և մասնավոր անձանց պատկանող հրատարակչական մարմինները: Պետական հրատարակչությունը լիազորված էր վերահսկել հանրապետության ժողկոմատների, պետական մարմինների՝ հասարակական-քաղաքական, մշակութային հարցերին առնչվող հրատարակչական գործառնությունները, գրական, գիտական և այլ կազմակերպությունների հրատարակչական ամբողջ գործունեությունը: Պետհրատը ղեկավարում էր խմբագրական կոլեգիան, որի նախագահին ու ան-

<sup>1</sup> Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 113, ց. 3, գ. 15, թ. 28:

դամներին լուսժողկոմի առաջարկով նշանակում էր ՀՍԽՀ ժողկոմխորհը:

Զգալի լիազորություններ էին վերապահվում Պետհրատի խմբագրական կոլեգիային: Վերջինս մշակում և հաստատում էր բոլոր հրատարակչական ծրագրերը: Խմբկոլի նախագահը հրատարակչական գործերի վերաբերյալ պարբերաբար զեկուցելու էր լուսժողկոմատի կոլեգիային: Նա իրավունք ուներ նաև անմիջապես զեկուցում ներկայացնել հանրապետության ժողկոմխորհին: Խմբկոլի կողմից էր նշանակվում նաև Պետհրատի անձնակազմը<sup>2</sup>:

Զնայած «Խորհրդային Հայաստան» օրաթերթի 1921 թ. հունիսի 30-ի թիվ 114-ում տպագրված «Պետական հրատարակչության մասին» դեկրետը թվագրված է հունիսի 8-ով, այդուհանդերձ, փաստացի այն փոփոխություններով հաստատվել է ժողկոմխորհի հունիսի 15-ի նիստում<sup>3</sup>: Ժողկոմխորհի հունիսի 22-ի որոշմամբ Պետհրատի կոլեգիայի նախագահ նշանակվեց հին բուշևիկ Սարգիս Խանոյանը, անդամներ՝ Պողոս Մակինցյանը, Արտաշես Կարինյանը, Գարագաշը և պետհրատի պոլիգրաֆիական բաժնի վարիչ Տեր-Հարությունյանը (ի պաշտոնե)<sup>4</sup>:

Հիմնվելով «Պետական հրատարակչության մասին» դեկրետի վրա՝ «բոլոր տպարանների վարիչներին» ուղղված գրությամբ Պետական հրատարակչությունը տեղեկացրեց, որ առանց Պետհրատի թույլտվության որևէ գրություն տպագրելու պարագայում «հեղափոխական դատարանի ամենախիստ պատժի կենթարկվեն»<sup>5</sup>: Փաստորեն՝ սա հրատարակչական գործում քաղաքական վերահսկողության սկիզբն էր: Ինչ վերաբերում է Հայպետհրատի գրաքննական գործառույթներին, ապա արխիվային

---

<sup>2</sup> «ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 2 (1921 թ. ապրիլի 2 – 1921 թ. օգոստոսի 1), էջմիածին, 1921, էջ 58-60:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 15, թ. 40 և շրջ.:

<sup>4</sup> Նույն տեղում, թ. 45:

<sup>5</sup> Նույն տեղում, ֆ. 1, ց. 1, գ. 172, թ. 253:

վավերագրերի ուսումնասիրությունից երևում է, որ Հայպետհրատն այդպիսի գործառույթ չէր իրականացնում: Մինչև 1923 թ. հունիսին ՀՍԽՀ Գրականության, հրատարակչության և ռեպերտուարի վերահսկողության վարչության (Հայգլավլիտ) հիմնումը Խորհրդային Հայաստանում գրաքննության գործառույթները փաստացի իրականացնում էր լուսժողկոմատի կազմում գործող Քաղաքական լուսավորության գլխավոր վարչությունը: Ուստի՝ ամենևին պատահական չէ, որ ստեղծումից հետո Հայգլավլիտը կազմակերպվեց հենց այս վարչության կազմում:

Պետք է փաստել, որ հիմնադրմանը հաջորդած առաջին ամիսներին անհաջող էր գործում Պետհրատի կոլեգիան (Խանոյանը, Կարինյանն ու Մակինցյանը զբաղված էին, Գարագաշը հիվանդ էր), ուստի ողջ ծանրաբեռնվածությունն իր վրա էր վերցրել լուսժողկոմ Ա. Հովհաննիսյանը<sup>6</sup>: Նշենք, որ մինչև 1921 թ. նոյեմբերը (4 ամսում) Պետհրատը հրատարակել էր ընդամենը մեկ գիրք: 1921 թ. նոյեմբերի 1-ին Հայպետհրատի վարիչ նշանակվեց Միսակ Եփրիկյանը: Դրանից հետո սկսվեց Պետհրատի փաստացի գործունեությունը: Ուստի զարմանալի չէ, որ ՀՍԽՀ լուսավորության ժողկոմատի 1920–1922 թթ. գործունեության հաշվետվությունում «Պետհրատի կազմակերպման օր» է համարվում 1921 թ. նոյեմբերի 8-ը<sup>7</sup>: Գործունեության առաջին տարում Հայպետհրատը հրատարակեց 50 անուն գիրք՝ 167.100 օրինակով և 313 մամուլ ծավալով<sup>8</sup>:

Փաստենք մի կարևոր հանգամանք. 1920-ական թվականների սկզբին Խորհրդային Հայաստանում հրատարակչական բնագավառում համընդհանուր վերահսկողություն չկար: Այսպես՝ ժողկոմխորհի 1922 թ. փետրվարի 8-ի նիստում քննարկվեց Պետհրատին գրական արտադրությունների տպագրության

<sup>6</sup> Նույն տեղում, գ. 66, թ. 159 և շրջ.:

<sup>7</sup> ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարիատների 1920–1922 թթ. հաշվետվությունը, Երևան, 1923, էջ 131:

<sup>8</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 147, թ. 44:

թույլտվություն տալու համար բացառիկ իրավունք վերապահելու մասին լուսժողկոմատի առաջարկը, սակայն հարցը հանվեց օրակարգից: Իսկ արդեն մարտի 4-ին ժողկոմխորհը հաստատեց մասնավոր հրատարակչության մասին դեկրետի նախագիծը: Ըստ այդմ՝ մասնավոր անձանց, հաստատություններին, ընկերություններին թույլատրվում էր լուսժողկոմատի համաձայնությամբ տպարաններ բացել, որով նրանք կարող էին կատարել ինչպես մասնավոր, այնպես էլ պետական հիմնարկությունների պատվերները<sup>10</sup>: Կարծում ենք, սա ՆԷՊ-ի ընձեռած տնտեսական մասնակի ազատության հետևանք էր (մասնավոր հրատարակչություններ կային նաև ՌՍՖՍՀ-ում): Մասնավորապես 1927 թ. օգոստոսին ՉՍԽՀ-ում գործում էր 3 մասնավոր հրատարակչություն՝ Չերմես, Արվեստ և Ազատ եկեղեցի<sup>11</sup>:

1923 թ. վերջին անհրաժեշտ համարվեց փոփոխել պետական հրատարակչության կանոնադրությունը: Դեկտեմբերի 18-ին ՉՍԽՀ լուսժողկոմատը ժողկոմխորհին ուղարկեց պետհրատի կանոնադրության նոր նախագիծը՝ հաստատելու և հրատարակելու համար<sup>12</sup>: 1924 թ. հունվարի 2-ին ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաչևի ստորագրությամբ որոշ փոփոխություններով (հանվել էին նախագծում առկա 15-րդ և 16-րդ հոդվածները) հրապարակվեց Պետհրատի կանոնադրության նոր տարբերակը<sup>13</sup>:

Դասագրքերի և նոր գրականության նկատմամբ պահանջարկն անհրաժեշտություն էր դարձրել ավելացնելու տպագրությունների թիվը: Հիմնադրումից հետո Չայպետհրատը գրքեր էր հրատարակում Պոլիգրաֆ բաժնի և Էջմիածնի գիտական ինստիտուտի տպարաններում: 1922 թ. մայիսին Էջմիածնի գիտական ինստիտուտի տպարանը հանձնվեց Պետհրատին, իսկ 1923 թ.

<sup>9</sup> Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 69, թ. 4 և շրջ., գ. 68, թ. 16:

<sup>10</sup> ՉՍԽՀ դեկրետների և որոշումների հավաքածու, 1922, N 5, էջ 37:

<sup>11</sup> ՉԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 270, թ. 47:

<sup>12</sup> Նույն տեղում, ֆ. 122, ց. 1, գ. 121, թ. 107, 109-110:

<sup>13</sup> «ՉՍԽՀ դեկրետների և որոշումների հավաքածու», 1924, N 1, էջ 6-8:

Էջմիածնի տպարանի մեքենաներից մեկը տեղափոխվեց Երևան և դրա հիման վրա այստեղ հիմնվեց Պետհրատի երկրորդ տպարանը<sup>14</sup>:

1923–1924 թթ. ընթացքում Պետհրատը հրատարակել է 50 ամուն տպագրական արտադրանք՝ 456 մամուլ ծավալով և 256.200 օրինակով: Այս աշխատանքի 90 %-ը կատարվել էր Պետհրատի առաջին տպարանում, որը գտնվում էր Վաղարշապատում: Որոշ քանակի գրքեր տպագրվել էին Հայպետհրատի Մոսկվայի բաժանմունքում (հայկական գործերի նախկին կոմիսարիատի տպարանը, որը 1924 թ. անցել էր ՀՍԽՅ լուսժողկոմատի հրավասությանը՝ դառնալով Հայպետհրատի երրորդ տպարանը)<sup>15</sup>:

Մեկ տարվա ընթացքում՝ 1923 թ. հոկտեմբերից մինչև 1924 թ. հոկտեմբերը, Հայպետհրատը գրախանութներ էր բացել Երևանում, Լենինականում, Ղարաքիլիսայում, Վաղարշապատում, Նախիջևանում և Թիֆլիսում: 1924 թ. հոկտեմբերին Պետհրատի աշխատակիցների թիվը 132 էր, որից՝ կենտրոնական վարչությունում և գրախանութներում՝ 48, առաջին տպարանում՝ 54, երկրորդ տպարանում՝ 30 անձ<sup>16</sup>:

Հայրետհրատը դասագրքեր էր հրատարակում ոչ միայն հորհրդային Հայաստանի, այլև միութենական մյուս հանրապետությունների (Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան և այլն) հայկական դպրոցների համար<sup>17</sup>:

1924–1928 թթ. Հայպետհրատը տարեկան միջին թվով հրատարակում էր 1200-1300 մամուլ՝ 5000 տպաքանակով: Արտադրանքի մեջ քանակով ամենամեծը դասագրքերն էին, այնուհետև՝ քաղաքական գրականությունը և ապա միայն գեղարվեստական գրականությունը: Ի դեպ, «ծաղկում» էր «մարքսիզմի դասական-

<sup>14</sup> Խորհրդային Հայաստան. 1920–1925, Երևան, 1926, էջ 320:

<sup>15</sup> ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 130, թ. 15-16 շրջ.:

<sup>16</sup> Նույն տեղում:

<sup>17</sup> Խորհրդային Հայաստան. 1920–1925, էջ 322:

ների» երկերի և հատկապես Վ. Լենինի աշխատությունների հրատարակման գործը. 1928 թ. հունիսի դրությամբ հրատարակվել էր 21 ամուն գիրք՝ 245 մամուլ ծավալով, պատրաստի վիճակում էր և մինչև տարեվերջ նախատեսվում էր հրատարակել ևս 50 մամուլ: Պետության և իշխող կոմկուսի կողմից հատկապես կարևորվում էր քաղաքական գրականության և առանձնապես «դաշնակիզմին», «սպեցիֆիզմին», «սմենովեխականությանն» առնչվող գրքերի հրատարակությունը<sup>18</sup>:

1920-ական թվականների երկրորդ կեսին Հայաստհրատի տպագրած գրքերը տարածվում էին հետևյալ ճանապարհներով.

1. «Հայգրքի» բաժանմունքների ու ներկայացուցչությունների միջոցով: Այդ շրջանում Պետհրատը բաժանմունքներ ուներ Լենինականում, Վաղարշապատում, Ղարաքիլիսայում, Ստեփանավանում, Դիլիջանում, Նոր-Բայազետում, Գորիսում, Քելիջքենդում, Մեղրիում, Աշտարակում, Ղամարլուում, Թիֆլիսում, Բաքվում, Գանձակում, Սուխումում, Ախալքալակում և ներկայացուցչություն՝ Նախիջևանում:

2. Շրջիկ գրավաճառների միջոցով:

3. Խորճիթավարների միջոցով (միայն Նոր Բայազետի և Դիլիջանի գավառներում):

4. Ձանգվածային տարբեր միջոցառումների (համագումարներ, կոնֆերանսներ, ևն) ժամանակ գրքի վաճառքի կետեր բացելու միջոցով:

Պետհրատի ղեկավարությունը փորձեր կատարեց հրատարակած գրքերը տարածելու, բնակչության լայն շերտերին հասցնելու համար օգտագործել Հայկոպի բաժանմունքների հնարավորությունները, սակայն հաջողություն չունեցավ<sup>19</sup>:

Նշենք, որ ֆինանսական սուղ միջոցները և որակյալ տպագրական սարքավորումների պակասը 1920-ական թվականներին

<sup>18</sup> ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 598, թ. 218–219 շրջ.:

<sup>19</sup> Նույն տեղում:

Հայպետհրատին հնարավորություն չէր տալիս բարձրորակ և մատչելի գրքեր հրատարակել: Հրատարակված գրքերի թանկությունը պայմանավորված էր տպաքանակի փոքր լինելով և առաքման ծախսերով (այսպես՝ երկաթուղի չլինելու պատճառով քարավանների, սայլերի միջոցով էին գրքերը հեռավոր շրջաններ հասցնում): Այդուհանդերձ, Խորհրդային Ռուսաստանի հետ համեմատած՝ Հայաստանում գրքերն ավելի մատչելի էին: Այլ բան է, որ հանրապետության բնակչությունը վճարունակ չէր: Այդ ամենի հետևանքով Հայպետհրատը վնասով էր աշխատում և պետական հատկացումներ կլանում: Չնայած այս հանգամանքին՝ Խորհրդային իշխանությունները նպատակադրված շարունակում էին իրագործել գրահրատարակչական բնագավառում որդեգրած սկզբունքները:

Անփոփելով՝ փաստենք, որ, ի տարբերություն ռուսական Պետհրատի, Հայգլավլիտի հիմնադրմանը նախորդող շրջանում Հայպետհրատը գրաքննությամբ չի զբաղվել: 1920-ական թվականների սկզբին Խորհրդային Հայաստանում համընդհանուր վերահսկողություն չի եղել հրատարակչական բնագավառում: Ձուգահեռներ անցկացնելով մեր օրերի հետ, նշենք, որ անհրաժեշտություն է, որպեսզի պետությունը հստակ, նպատակային քաղաքականություն վարի գրահրատարակչական ոլորտում:

## ՀԱԿՈՒ ՄԵՂԱՊԱՐՏԻ «ՏԱՂԱՐԱՆԻ» ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱԴՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հակոբ Մեղապարտը հայկական տպագրության հիմնադիրն է, որի վաստակն, անշուշտ, վիթխարի եղավ մեր մշակույթի համար: Այս գործչի կենսագրության մասին ստույգ տվյալներ չկան, բացի իր հրատարակած գրքերի խաչաձև տպարանանիշի վրա գրված չորս լատիներեն տառերից, որոնք վերծանելու համար տարիներ էին հարկավոր՝ D (Dei servus - Աստծո ծառա), J (Jakobus - Հակոբ), Z (Zanni - Ծաննի /եան/, հայերեն՝ Յովհաննես /եան/), A (Armenius - հայ)<sup>1</sup>: Անհայտ են նրա ծննդյան և մահվան օվերը: Հայտնի է, միայն, որ իրեն Աստծու ծառա համարող տպագրիչը գործել է XV և XVI դարերի սահմանագծին, Վենետիկում:

XVI դարի սկզբին նա կրոնական և աշխարհիկ իշխանություններից հայերեն գրքեր տպագրելու թույլտվություն է ստանում և գրածուլող վարպետների օգնությամբ հիմնում է առաջին հայկական տպարանը: Ըստ Լեոյի՝ «Մարդկային ոչ մի գյուտ այնպես չի արհամարհում աշխարհագրական տարածությունը, անջրպետներն ու սահմանները, այնքան սերտ չի կապում ազգերը միմյանց հետ, ինչպես մտքի և հոգու այն սքանչելի գործիքը, որ տպարանն է»<sup>2</sup>:

Մ. Աբեղյանի բնորոշմամբ՝ XVI դարը վերածնության մի շրջան էր, իսկ տպագրությունն այն գյուտերից մեկը, որ սերտորեն կապված է վերածնության շարժման հետ. «Հնության վերած-

<sup>1</sup> Իշխանյան Ռ., Հայ գրքի պատմություն, Երևան, 1977, էջ 115:

<sup>2</sup> Լեո, Երկերի ժողովածու, հ. V, Երևան, 1986, էջ 129:

նության պատճառների թվում պետք չէ մոռանալ և տպագրությունը, որ զուգահեյ էր հին ձեռագիրների գյուտի և սփռման հետ»<sup>3</sup>:

Հայ առաջին տպագրիչի հրատարակած գրքերն են՝ «Ուրբաթագիրք», «Պատարագատետր», «Աղթարք», «Պարզատունար», «Տաղարան», որոնք հրատարակվել են 1512–1513 թթ.:

Տաղարանը՝ որպես վերջին հրատարակություն, աչքի է ընկնում ձևի և բովանդակության գեղեցիկ ներդաշնակությամբ: Յուրաքանչյուր տաղ ունի իր խորագիրը և կարմիր ու սև գույներով նախշված զարդերիզները: Տասը մամուլից բաղկացած գիրքն աշխարհիկ և հոգևոր երգերի յուրօրինակ ժողովածու է, որի մեջ ընդգրկված են Գրիգոր Նարեկացու, Ֆրիկի, Հովհաննես Թլկուրանցու, Սկրտիչ Նաղաշի լավագույն տաղերը, ինչպես նաև Ներսես Շնորհալու հանելուկները: Իհարկե, ընտրությունը պատահական չէ, քանի որ հրատարակիչը ոչ միայն հրաշալի գեղագետ է, այլև էությամբ համարձակ և գրական նուրբ ճաշակ ունեցող անձնավորություն: Ժողովրդին հասկանալի լեզվով գրված աշխարհիկ երգերի հրատարակության համար, անշուշտ, քաջություն և համարձակություն էր պետք՝ հակադրվելու այդ ժամանակաշրջանում կաթոլիկ եկեղեցու համատարած ճնշմանը, որի «հետապնդումները միայն չեն սահմանափակվել XVI–XVII դարերում տպագրված գործերի բովանդակությունը այդ եկեղեցու պահանջներին համապատասխանեցնելու ձգտումներով»<sup>4</sup>:

Եկեղեցին իր շահերին էր ծառայեցնում նաև գրաբարը: Մինչդեռ «Տաղարանում» զետեղված բանաստեղծությունների (բացի Նարեկացու տաղերից) լեզուն գրաբարախառն միջին գրական հայերենն է, որն այդպես էլ միասնական գրական լեզու չդարձավ: Ռ. Ղազարյանը գրում է. «Այդ լեզուն միջին դարերի հայ ժողովրդական լեզվի գրավոր արտահայտությունն էր, որը տարբեր ժանրերի մեջ և տարբեր հեղինակների գործերում ավելի կամ նվազ չափով մոտեցվում էր գրաբարին, բայց դրա հետ միասին չէր նույնացվում վերջինիս հետ: Միջին հայերենը ուներ իր գար-

<sup>3</sup> Աբեղյան Ա., Երկեր, հ. է, Երևան, 1975, էջ 190:

<sup>4</sup> Ղազարյան Ռ., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1981, էջ 306:

գացման ներքին օրինաչափությունները, որոնք, մի կողմից կապվում էին գրաբարի օրենքների հետ և, մյուս կողմից՝ հանդես էին գալիս իբրև ինքնուրույն, հայոց լեզվի զարգացման տվյալ շրջանին հատուկ օրենքներ»<sup>5</sup>: Իսկ այդ օրենքները կրողները չէին կարող զերծ մնալ ժամանակի քաղաքական և հոգելեզվաբանական գործոնների ազդեցություններից, քանի որ փոխվում էին ժամանակները, փոխվում էր կյանքը ու դրա հետ մեկտեղ հասարակության աշխարհընկալման չափորոշիչները: Առաջանում են նոր հասկացություններ, որոնց արտահայտման համար կատարվում են լեզվական փոխառություններ, բառապատճենումներ ու բառակերտումներ, քերականական նոր երևույթներ հնի զուգարությամբ, բառիմաստի ընդլայնում կամ նեղացում, գրաբարի հնչյունական համակարգի փոփոխության նոր պատկեր, ոճական հնարանքի ինքնատիպ ձևեր և այլն:

Մի հետաքրքիր հարց ևս: Ո՞րն է այս տաղերի ընտրության ելակետը: Ի՞նչ սկզբունքով է տպագրիչը կազմել այս տաղաշարքը, որտեղ հանդիպում ենք Նարեկացու և միջնադարյան քնարերգուների՝ մի կողմից հոգևոր կամ դավանաբանական, մյուս կողմից աշխարհիկ թեմաներով գրված բանաստեղծությունների, որտեղ մեկ գարնանային ուրախ ու զվարթ ծայրն է շոյում լսելիքդ, մեկ՝ տխուրն ու եղերականը, որոնք ավելի գերակշռող են, քան նախորդը: Նախ՝ այս ընտրությունը, ըստ էության, նա կատարել է տարբեր դարաշրջաններում հայ ժողովրդի տխուր վիճակը ներկայացնելու և իր զգացումները զեղելու պահանջով: Ողբասացության մոտիվը դարերի պատմությունն ունի: Ողբեր գրել են մեր պատմագիրները, բայց փոքր ծավալով և ցավի ընդհանրացման գաղափարով: Իսկ այս ողբերում օտարության մեջ մեռնող անհատի փրկություն հայցող աղաչանքն է, թափառական հայ պանդուխտի հուսակտուր աղերսը՝ ուղղված մարդկության անտարբերությանը. «... մեկ մի չկայր որ կաթ մի ջուր տայր դա-

---

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 204:

րիպին»։ Երկրորդ՝ ընտրությունը կատարվել է գրական աշխարհում ծնունդ առած վերածնության գաղափարի թելադրանքով։

«Տաղարանը» զարմանալիորեն ամփոփում է X–XI դարերից եկող հայ գրականության գլուխգործոցների գիտակցումը՝ սկսած Նարեկացիով և վերջացրած տպագրիչին ժամանակակից Սսի կաթողիկոս (1489–1525 թթ.) Յովհաննես Թլկուրանցիով։ Փաստորեն, գրքի հեղինակն ամրակայել է ժամանակի հայ գեղագիտական մտքի ընկալումներն ամենաարդիական իմաստով։ Այս ժողովածուն հանդես է գալիս նաև որպես նոր փուլ ժամանակի տեխնոլոգիական զարգացման տեսակետից։ Չմոռանանք, որ ձեռագրերի քաղաքակրթության պայմաններում այս գիրքը նոր հնարավորություններ է ստեղծում, որը պետք է, թերևս, երկու հարյուրամյակ առաջ անցներ ձեռագիր մատյանների հնամենի շարժընթացից։ Իրոք, ապագան պատկանում էր «Տաղարանին», որի աշխարհայացքային հենքի վրա էլ ստեղծվեցին հետագայի տպագիր հայկական բոլոր տաղարանները՝ անցյալի մշակութային հիշողություններից մինչև ժամանակակից մտավոր և հոգևոր արժեքները։

«Տաղարանի» բառապաշարի հիմնական մասը համագործածական բառեր են, որոնք հանդիպում են հայերենի զարգացման բոլոր շրջաններում։ Այդ բառերի մի մասը ենթարկվել է միջին հայերենին բնորոշ հնչյունական փոփոխությունների՝ դիժար/դժար ( դժուար, պեղծ ( պիղծ, ծար ( ծայր, դըռան ( դրան, իրեք ( երեք, թագուր ( թագաւոր, պըլպուլ ( բլբուլ, ձուն ( ձին, ճեղ ( ճիւղ, խաղլով ( խաղալով, թուլցաւ ( թուլացաւ...

Երկրորդ խումբը կազմում են փոխառյալ բառերը։ Աշխարհիկ երգերի ընտրանին փոխառություններով այնքան էլ հարուստ չէ, իսկ եղածներն էլ ծագումով մեծավ մասամբ արաբական են։ Թուրքերենից փոխառված բառերը ժողովածուում գրեթե տեղ չեն գտել։ Ասես տպագրիչը խուսափել է այդ լեզվի ազդեցությունից և փորձել է իր հրատարակության բառամթերքի շրջանակները հնարավորինս անաղարտ պահել։ Արաբական փոխառությունները գերազանցապես կենցաղային բնույթի, հոգեվիճակ արտա-

հայտող բառեր են, ավելի սակավ կրոնական և պետական հասկացություններ: Այսպես՝ *թափուր /թափաւր* - դատարկ, *թուրինջ* - պտուղ, *հալալ* - արդար, ազնիվ, *հարամ* - պիղծ, *հասրաթ* - կարոտ, *դարիպ* - պանդուխտ, *մալ* - հարստություն, ունեցվածք, *կապայ* - հոգևորականի, կամ կանացի երկար զգեստ, *խապար* - լուր, *դունրի* - տատրակ, *հալ* - վիճակ, դրություն, *սուլբան* - թագավոր, *խան* (պարսկ.) մեծավոր, *փոշիման* (պարսկ.) զղջացած և այլն:

Տաղ գարնան, Տաղ դարիպի, Տաղ Յովանիսի, Տաղ Նաղաշի, Ողբ մեռելի և հատընտիրում տեղ գտած այլ երգերին առանձնակի գրավչություն են հաղորդում ժողովրդախոսակցական լեզվին հատուկ մակդիրները, դարձվածքներն ու փոխաբերությունները, որոնք շրջանառվում են նաև մեր ժամանակներում, հատկապես բարբառների մեջ՝ Այսօր եհաս *դառըն հրաւէր*: Ջաչերն ելից *դառն արտասուաւք* ողորմական, ելաց: *Կանաչ արկըն* մանկութեան: *Ձկուրութիւն մտաց*: *Սրտի մտաւք* զականջող բաց: *Շունչս քաղեց*: *Գեղեցիկ գոյն երեսաց թառամեցաւ*: Այս *ճանապարհս* որ ես գնամ *դառն ու դիժար*: Աչաւք տեսայ *գդառն կսկիծ*: *Ձհոգիս կու տամ* հոգոյդ փոխան յաւժար սրտով: *Զմիակեցին խելքն տանիս*: Աւաղ ձայն աղվոր մանկտիքն, որ *դարձան ի հող ի փոշի*: *Որ սար ու ծոր և ծառ ու ծեղ ամէն կու լան*: Այսօր եհաս *մահու հրաւէր*: *Իմ դեղն դուք եք աշխարհիս աղաթական...*

Այս երգերը զերծ չեն նաև բաղաձայնույթի՝ *Ի գիւ գայր ի գիւ սայլիկն ի գիւ գայր...*, հոմանիշների կուտակումների՝ *Ես խիստ ողորմ և լայագին անաւզնական...*, համեմատությունների ոճական հնարանքից, որոնց գործառական արժեքը փոքր չէ ժողովածուում՝ *Նոքա ունին պայծառ հանդերձ գետ զարեզակն են բոլորած*: *Աղէկ մանուկ աղւոր պատկեր յարև նման*: *Արեւ նման շողջող կու տաս*: *Մի դատիր անասնոյ նման*: *Աղէկ մանուկ եւ աղվոր պատկեր յարև նրման, յունքըն կամար, աչքըն կանթեղ էր*: *Եհաս այսօր ինձ աւր մահուան, ցամաքեցայ խտտոյ նրման. խորշակահար գիս չորացոյց որպէս ծաղիկ ի յամարան*: *Նայեցարուք յիս խրդճական, որ եմ անկեալ փայտի նրման*:

Այս ամենից բացի, տաղերում ընդգծված է չափածո խոսքին բնորոշ վերջնահանգ կազմող տաղաչափական կանոնավոր ռիթմը: Ռիթմային ձևափոխությունները կատարվում են տողավերջում՝ հանգի կրկնությամբ: Ոճական այս հնարանքը զգացումներն ավելի ուժեղ արտահայտելու միջոց է հետևյալ օրինակներում. *Ինձ չէ ատեն ոչ ժամանակ մեռանելոյ, ոչ նեղ զնտան և գերեզման մըտանելոյ, կամք չունիմ ես իմ տանէն ելանելոյ, զի շատ հասարաք ունիմ ու շատ բան հոգալոյ: Դուք հայվեցէք ի սուրբ հոգոյն մաքրողական, պատարագաւ ինձ աւզնեցէք մաղթողական, նաև միևնույն բառի զուգակցումներով՝ **Լալով լացի և ողբաց: Լաց լալով ասաց:***

«Տաղարանի» մեջ խիստ գործածական է անորոշ դերբայի գործիական հոլովով ձևի պարագայի շարահյուսական կաղապարը, որը նոր շրջանում տարածում գտած ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ յուրօրինակ ոճ է՝ *Մըտանէր ամաչելով, թէ տան կըտոր մի հաց տըրտընճելով, դառնայր տրտում արտասուելով, երթայր: Վախվախելով, ի դուրըս հըրեն անարգելով:*

Բառակազմական տեսանկյունից «Տաղարանը» հագեցած է վերջածանցավոր, հարադրական և կցական բարդություններով, իսկ նախածանցավոր (բացի ժխտման), հատկապես գիտական ոճին բնորոշ հունաբան կազմություններ չկան: Վերջածանցավոր կազմություններում իրենց գործառական արժեքով, ըստ հաճախականության, առանձնանում են *-ական*, որն, ի դեպ, գրաբարի ազդեցության արգասիք է՝ *հոգոյն մաքրողական, պատարագաւ մաղթողական, տերն արարչական, աշխարհէս պատրողական, աշխարհէս փոփոխական, հրաւէր հրաժարական, երկիր թափարական, ճանապարհ անդարծական* և այլն, և անձնական վերաբերմունքի *-ակ, -իկ, -ուկ* փոքրացուցիչ-փաղաքշական ածանցներով կազմված բառերը՝ *հաւատուորիկ մի կայր փոքրիկ, ափիկն ունի տաճկի խնկիկ, կռիւ առնէ զէտ զարապիկ, կայր պատանեակ մի խարտիշուկ, փոքրիկ զէտ զթզուկ. որդիք ունէր երկու մանուկ, մինը յիմար, մինը խաբուկ. կամ՝ Կայր թագաւոր մի աղքատիկ, Լէր քահանայ խիստ սպըրկիկ, ծընաւդք չունէր ոչ մի*

*ոքիկ, լեռան նստեր մերկ եւ բոկիկ* և այլն: Փաղաքակաճան ատանցներով կազմությունների կիրառությունը գալիս է վաղնջահայերենից:

Ստորև բերում ենք նաև հարադիր, կրկնավոր, համադրական բարդությունների մի քանի կաղապարատիպեր՝

ա) հարադիր բայեր՝ *բարեխաւս առնել, ջանք արա, որ չայրիս, ուրախ առնել, վայ տալ, ի շուրջ գալ, շարապ լինել...*

բ) բաղիյունական բարդություններ՝ *սար ու ծոր, դառն ու լեղի, նուշ ու շաքար, հուր ու բոց, ծամ ու վարսեր, մէջք ու թիկունք, դառն ու դիժար, ողորմ ու լալի...*

գ) կցական բարդություններ՝ *պարոնորդի...*

դ) իսկական բարդություններ՝ *հաստաբազուկ, լայնաթիկունք, խարտիշագեղ, մեծատուն, յուսահատ, դիւահար, քաղցրաճաշակ, հողմաբեր, սքանչելագործ, գոտեմարտն, բարեպաշտ, մաշկեգոտի, գեղապանծ, աշխարհաշէն...*

ե) կրկնավոր՝ *մեծամեծ, դռներդուռ, կաղկաղ...*

Այս ամենից եզրակացնում ենք, որ ոճական արտահայտչամիջոցները՝ իբրև ոճական երանգավորում ունեցող լեզվական միավորներ, աշխարհիկ և հոգևոր այս տաղերում կիրառական տեսակետից բազմաշերտ են: Ոճավորում ունեցող յուրաքանչյուր կառույց իր բնական հորինվածքով, տաղաչափական արվեստով ու հաղորդած մեղեդայնությամբ ինքնատիպ է: Մակդիրների, դարձվածքների, փոխաբերությունների ու համեմատությունների, բազմիմաստ բառերի արդի գործածությունները «Տաղարանի» լեզուն դարձնում են կենդանի ու պատկերավոր, որն արտացոլում է աշխարհիկ մտքի թափանցումը հայ եկեղեցական գրականության մեջ: Այլ կերպ, հայ եկեղեցական գրականությունը, տպագրական փուլ թևակոխելով, ընդարձակում է իր արտահայտչամիջոցների դրսևորումները ևս, որով կարծեք թե ամրագրում է նախորդ ձեռագրական շրջանի հայ բանաստեղծության կենսական տրամադրությունները և մյուս կողմից՝ շարունակում նոր ժամանակների տաղերգության մոտիվները:

**ԹԱԴԵՎՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆԻ  
«ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԿՏԱՎԱՐԱՆԱՑ»  
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ**

Համաբարբառը լեզվաբանական բնույթի բառարան է, որը ներառում է որևէ հեղինակի ամբողջ ստեղծագործությունների կամ նրա մի գործի բառապաշարը, և ըստ այդմ համաբարբառը հաճախ անվանում են նաև հեղինակային բառարան:

Համաբարբառները լինում են երկու տեսակ՝ բառաքերականական, որտեղ տրվում է հեղինակի ստեղծագործությունների բառային կազմը քերականական նշումներով, և բնագրային, որտեղ յուրաքանչյուր գլխաբառի համար բերվում են նրա բնագրային բոլոր վկայությունները:

Հայ իրականության մեջ առաջին համաբարբառները վերաբերել են Աստվածաշնչին՝ ներառելով նրա որոշ գլուխների բառային կազմը՝ բառացանկերի տեսքով:

Առաջին համաբարբառը կազմվել է XIII դարում, լատիներեն Աստվածաշնչի հիման վրա, որի հեղինակն է Դոմինիկյան միաբանության անդամ Հուգոնը: Վերջինս կատարել է նաև Աստվածաշնչի գլխաբաժանումները՝ դրանով հեշտացնելով բնագրային օրինակների տեղի հարցը, և այդ աշխատանքը կատարելիս իրեն օգնական է վերցրել շուրջ 500 միաբանների:

Հայ իրականության մեջ Աստվածաշունչ մատյանի գլխակարգությունը կատարել են XVI դարում: «Յամի 1555 ներկա կատարելութեամբ իւրով ի լոյս ընծայեցաւ ձեռամբ համբաւաւոր հրատարակչի Ռոբերտայ Ստեփաննոսի, որ եղև հեղինակ բաժանման Ս. Գրոց ի գլուխս ի տունս. բաժանումն այս ընդունելի

եղև ամենեցուն գիտնոց ժամանակին և ընդհանրացաւ առ ամենայն եւրոպական ազգս», - գրում է համաբարբառի առաջաբանի հեղինակ Թորոս Իսահակյան - Ջուղայեցին (էջ Թ):

Սեզանում Աստվածաշնչի համաբարբառները երկու խմբի են բաժանվում՝ ձեռագիր համաբարբառներ, ինչպիսին են Ղազար Բաբերդացու և Ոսկան Երևանցու կազմած համաբարբառները (XVII դար), որոնց մեջ հանդիպում են ինքնուրույն համաբարբառները՝ այբբենական հստակ դասավորությամբ (Անանիա Արզրումեցի - Ալավերդյան), և տպագիր համաբարբառներ, որոնք ի հայտ են գալիս XVIII դարի կեսերից. այդպիսին է Բաղդասար Դպիրի կազմած համաբարբառը, որ ընդգրկում է թե՛ չորս Ավետարանները և թե՛ Նոր կտակարանը (իր 29 գրքերով):

Տպագիր համաբարբառներից աչքի է ընկնում Ձմյունիայի Նոր կտակարանի համաբարբառը (կազմողի անունը նշված չէ): Այս համաբարբառը համենմատաբար նոր սկզբունքներ է առաջ քաշում բառարանագրության ասպարեզում<sup>1</sup>:

Հայ իրականության մեջ Աստվածաշնչի համաբարբառի կատարյալ օրինակը տվել է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի միաբան Թադևոս վարդապետ Աստվածատրյանը, որը 1860–1867 թթ. ձեռնարկել և կազմել է Հին և Նոր կտակարանների ամբողջական համաբարբառը<sup>2</sup>:

Ահա թե ինչ է գրում Թ. Աստվածատրյանի և նրա գործի մասին աստվածաբանության մասնագետ Թորոս Իսահակյան – Ջուղայեցին համաբարբառի առաջաբանում. «Յետ ամաց ինչ այլ ոմն ի Միաբանութենէ՝ Արժ. Տ. Թադևոս Վ. Աստուածատուրեան Արապկերցի, յղացաւ զգաղափար հսկայ մատենիս այսորիկ, և ձեռն արկեալ, տքնաջան աշխատութեամբ, ոչինչ նուազ քան զիօրն Համաբարբառին զմեծին Հուլօջի Դոմինիկեան կրօնաւո-

<sup>1</sup> Թոսունյան Գ., Աստուածաշունչի հայկական համաբարբառները, «Սիօն» ամսագիր, 1997, Յունուար-Փետրուար-Մարտ, էջ 43–49:

<sup>2</sup> Համաբարբառ Հին և Նոր կտակարանաց, Աշխատասիրութիւն Թադևոս վարդապետի Աստուածատուրեան Արապկերցոյ, Երուսաղեմ, 1895:

րի...: Պատմեն ականատեսք Միաբանք, թէ զօրն ի բուն զվկայութիւնն հաւաքէր և իւրաքանչիւր բառ ի վերայ արծանագրէր և գուրուրէքն և զշարաբանութիւնն առընթեր նշանակէր և անձանծիր ընթերցմամբ զպակասն լրացուցանէր, ապա զթերթիկսն ուրոյն կարգադրեալ, զետեղեալ պահէր առանծիմն: Ի լրանալ հաւաքման բառից և վկայութեանց, վերստին ընդօրինակէր ըստ կարգի հայ ալփաբետաց, և հուսկ յետոյ զբովանդակն, որպէս տեսանի ի տպագրութեանս՝ ի տետրակս տետրակս ընդօրինակէր: Ասի, թէ յետ այսքան տառապանաց երկու անգամ եւս զբովանդակն վերստին քննեաց և անձանծիր ընթերցմամբ Ս. Գրոց բազում ինչ փոփոխեաց և յաւել որ ինչ յառաջնում նուագի վրիպեալ էր յուշադրութենէ իւրմէ» (էջ Ե-Զ):

Իր աշխատանքի վերաբերյալ ահա թէ ինչ է գրում հեղինակը. «Ասասցուք աստ սակաւութ զհանգամանաց և զորպիսութենէ տպագրութեան նոյնչափ տաժանաւոր, որչափ երկք և վաստակ, յոր ձեռն արկ անխոնջ եւ անյուսահատ, եւ ամս եօթն լիալիր պարապմամբ ի գլուխ եհան զգործն, որ ի 1867 ամէ անտի պատրաստ մնայր ի Մատենադարանի սրբոյ Աթոռոյս» (էջ ԺԱ):

Աշխատանքը շուրջ 30 տարի ձեռագիր վիճակում մնում է Երուսաղեմի Մատենադարանում, «...մինչեւ յարոյց Աստուած ի հեռաւոր արփանց Գանգէսի զոմն սիրատարփ Աստուածաշունչ մատենից, զբազմավաստակ Քահանայ Աստուծոյ, զխաչակիր Տ. Յովհաննէս Խաչիկեան, զալէւորեալն ի գործ պաշտաման Ազգի եւ սուրբ եկեղեցոյ ... որ Մեկենաս հանդիսացաւ տպագրութեան գործոյս» (էջ Զ):

Թ. Աստվածատրյանը, հիմք ընդունելով հիմնականում Յուզոնի համաբարբառի և հատկապէս Ջմյուռնիայի համաբարբառի բառարանագրական սկզբունքները, կազմել է իր տեսակի մեջ ամբողջական և համապարփակ մի աշխատություն, որը Մխիթար Սեբաստացու և «երից վարդապետաց» բառարանագրական հուշարձանների շարքում կարևոր տեղ է զբաղեցնում և ունի մնայուն արժեք: Ձեռքի տակ ունենալով բառարանագրական բնա-

զավառի զգալի նվաճումների փորձն ու մշակած սկզբունքները՝  
Թ. Աստվածատրյանն իր աշխատանքը ստեղծելիս առաջնորդվել  
է որոշակի սկզբունքներով:

Միևնույն համարի տակ եղած կրկնությունները բաց են թողն-  
ված, և դրանց փոխարեն դրված են կրկնության նշաններ՝ ,,.....,  
ինչպես՝

Եզեկ. ԺԸ, 8. զԱրծաթ իւր ի վարձու ոչ տացէ:

13. ,, ,, ,, ,, ետ:

Ելք. Դ. 6. Արկ զձեռն քո ի ծոց քո:

7. ,, ,, ,, ,, իւր:

1.Բնագրային օրինակներում կատարվել են կրճատումներ, և  
կրճատված բառերի փոխարեն դրված են կախման կետեր, ինչ-  
պես՝

Ղեւտ. Ը. 12. Արկ Մովսէս յիւղոյ ... ի գլուխն:

Ջաքա. Ժ. 3. Յարդարեսցէ ... իբրև գերիվար:

Յեսու. Է. 9. Լուեալ ... և ամէ. բնակչաց Երկրին:

2.Օգտագործված է համառոտագրությունը, որպես տնտես-  
ման միջոց: Բառարանագրության պրակտիկայում կան որոշակի  
նշումներ, որոնք ՆՂԲ-ի հեղինակները կիրառել են կրոնական  
բնագավառի հիմնական բառերն արտահայտելու համար, ինչ-  
պես՝ Ա՜ծ, Զ՛ս և այլն:

Սույն համաբարբառում համառոտագրության նշանը ,, -ն է:  
Ընդ որում՝ այս նշանը կիրառվում է տարբեր չափանիշներով.

ա) Եթե գլխաբառը միջին երկարության է, ապա այն համա-  
ռոտագրվում է սկզբնատառերով, ինչպես՝

Երկուորեակ. Անուանեալն Երկ" (Յովի. ԺԱ. 16):

Երազ. Ե" Ե" կործանեսցի տունն նորա (Սիրաք. ԻԷ. 4):

բ) Եթե գլխաբառն ունի քերականական մասնիկներ (հոդեր,  
հոլովական կամ խոնարհման վերջավորություններ), համառո-  
տագրված բառի վերջում (նրանից հետո) տրվում են այդ մաս-  
նիկները, ինչպես՝

Դաշխուրամ. Ետ կաթն դաշ"աւ զօրաւորաց (Դատ. Ե., 25):

Արժաթեղէն. Խնկարանս ոսկեղէնս և Ար՛ս (Ա. Մնաց. ԻԴ. 2):  
Երիտասարդ. Ժողովեցին զամենայն Ե՛ս (Յուդիթ., Զ. 12):

Ինչպէս երևում է, բնագրային վկայության մեջ համառոտագրված գլխաբառը տրվում է մեծատառով:

3. Աւ երկբարբառը տրված է պարզ օ ծայնավորով՝ Պաւղոս > Պօղոս, Աւնան > Օնան, Սաւղոս > Սողոս և այլն:

4. Էական, պակասավոր և միադիմի բայերն առանձին չեն տրվում, այլ դրանք մատուցվում են «կից ընդ անուանց՝ ընդ դերանուանց կամ ընդ բայից ընդ որս միահաղորդ վարեալք էին», ինչպէս՝

Կայր պատկերն նախանծու ի մուտս դրանն (Եզեկ. Ը. 5):

Էր լոյս և արել (Եսթեր. Ժ. 6): Կամ՝

եղիցի լոյս: Եւ եղել լոյս (Ծնն. Ա. 3):

5. Պարբերության սկզբում դրված Եւ շաղկապն անտեսվում է:

6. Գոյականները տրվում են միայն եզակի ուղղականի ձևով ինչպէս՝ հեղեղատ, հեծան, հրեշտակ, ճակատ, ճաշ, մահիճ, բոյս, գօրավար, բայց՝ Մանկտի և այլն:

7. Խոնարհված բայերի համար իբրև գլխաբառ տրվում է ա՛նորոշ դերբայը, ինչպէս՝ բորբոքել, բորբոքիլ, գործել, գրաւել, երանել, երգել, երդնուլ, խաղալ, կարդալ և այլն:

8. Համաբարբառն ընդգրկում է Հին և Նոր կտակարանների բոլոր գրքերը:

9. Համաբարբառը կազմված է այբբենական կարգով:

10. Հեղինակը համաբարբառից դուրս է թողել՝

ա) դերանունները,

բ) շաղկապները,

գ) նախդիր-նախադրությունները,

դ) մակբայների մի մասը,

ե) վերաբերականները,

զ) ծայնարկությունները:

Կարևոր է այն հանգամանքը, թե ինչպես է հեղինակը լուծել գլխաբառերի, մասնավորապես գոյականի և բայի մատուցման խնդիրները:

Գոյականները համաբարբառում տրված են հատուկ և հասարակ տեսակներով, հատուկ գոյականները՝ անձնանուններ և տեղանուններ ենթատեսակներով: Դրանք, անշուշտ, տրված են այբբենական դասավորությամբ. մեզ հետաքրքրում է այն հանգամանքը, թե ուսումնասիրողները ինչպես կարող են տեսնել գոյականի հոլովման օրինաչափություններն ու շեղումները Աստվածաշնչի տեքստերում:

Հմտ. Ի քաղաքէ Անդրեայ և Պետրոսի (Հովհ. Ա. 44) < Անդրեաս:

Խորտակեցից զնիզս Դամասկեայ (Ամովս. Ա. 5) < Դամասկոս:

Անի տրութեանն Տիբերեայ կայսեր (Ղուկ. Գ. 1) < Տիբերիոս:

Թշնամին ի ձեռս Անտիոքայ (Գ. Մակ. Ա. 3) < Անտիոքոս:

Յամին չորրորդի թագաւորութեանն... Կղեոպատրայ (Եսթեր. ժԱ. 1) < Կղեոպատրոս:

Բայց՝ Մատնեցից զքեզ ի ձեռս բարբարոսաց (Եզեկ. ԻԱ. 31) < Բարբարոս:

Ի լոյս հեթանոսաց (Եսայ. ԽԲ. 6):

Դա մասնավորապես վերաբերում է օտար անունների հոլովման համակարգին. հետևելով այդ բառերի բնագրային կիրառություններին՝ ակնհայտ է դառնում, որ հունական փոխառությունները (-ոս, -իոս, -ես, -եաս վերջավորություններով հատուկ անունները) հանդիպում են Ա վերջադրական հոլովմամբ:

Հոլովական զուգաձևություն ցուցաբերող գոյականները նույնպես կարելի է բացահայտել բնագրային կիրառություններում և դրանք առանձնացնել ըստ տարբեր հոլովիչների:

Հեղինակը ճիշտ է վարվել՝ համանունական զույգերը ներկայացնելով որպես առանձին գլխաբառեր և հետազոտողին օգնելու նպատակով զույգի երկրորդ բաղադրիչի իմաստը բացատրել է, ինչպես՝ Այր և Այր (մաղարա), Մայր և Մայր (մայր ծառ):

Քանի որ դերանուններն ընդգրկված չեն, ուստի այս դերանվան և այս (սատանայ) բառերը տարբերակելու համար երկրորդ բաղադրիչի իմաստը նշում է:

Այդպես կարելի է դուրս բերել անկանոն հոլովման գոյականների թեքման օրինաչափությունները, անշուշտ, ելնելով բնագրային օրինակներում գոյականի բառածևերի թեքական ցուցիչներից (այր, մայր, տէր, կին, քոյր, գիւղ, տիւ):

Կարծում ենք՝ առավել ամբողջական կերպով են տրված բայական բառույթները՝ իրենց հնարավոր բոլոր կիրառություններով, որտեղ կարելի է ցույց տալ նրանց հատուկ քերականական գրեթե բոլոր հատկանիշները:

Այսպես, մինևույն բայի ներգործածն և կրավորածն խոնարհումները կարելի է առանձնացնել՝ ելնելով նրանց բնագրային կիրառություններից: Այսպես, դողալ բայի ներգործածն կիրառությունները հանդիպում են դողաց ձևով, իսկ կրավորականը՝ դողան: Զմնտ. խոռվեցաւ և դողաց երկիր (Սաղ. ԶԶ, 19): Որ դողան ի բանից իմոց (Եսայ. 4Զ. 2): Դեղինակը հիմնականում ներգործածն և կրավորածն խոնարհումները տալիս է ըստ համապատասխան լծորդությունների, ինչպես՝ շարժել և շարժիլ, կարճել և կարճիլ, հոսել և հոսիլ, կանգնել և կանգնիլ, խոցոտել և խոցոտիլ: Որոշ դեպքերում, երբ բայը միայն կրավորածն խոնարհում ունի և պատկանում է Ի լծորդության, դրանք տրվում են առանձին լծորդության ներքո՝ հանդգնիլ, հանդիմանիլ, յայտնի լինիլ: Քանի որ Ա լծորդության ներգործածն և կրավորածն խոնարհումները անորոշ դերբայում չեն տարբերակվում, դրանք զանազանվում են բնագրային կիրառություններում, մանավանդ երկրորդ հիմքից կազմված ձևերով (ածանցավորները միայն ներգործածն են խոնարհվում), ինչպես՝ Եթե լինիցի հեղեղ, ոչ զգասցէ (Յովբ. Խ. 18): Զգացին բազումք (Ովսէ, Զ. 33):

Դեղինակը առանձին գլխաբառեր է դիտել բառային կամ հնչյունական տարբերակները, ինչպես՝ կիզանել և կիզել, դամբար և լամբար, գայլախագ և գայլախագեայ, դալար և դալարի:

Դարձվածքները տրված են հենակետային գլխաբառի տակ. անշուշտ սա որոշակի դժվարություն է ներկայացնում այդ միավորները առանձնացնելու հարցում, Արիւն գլխաբառի տակ տրված են հետևյալ դարձվածքները, հմնտ.

հեղուլ գարիւն. Ձեռք որ հեղուն գարիւն արդար (Առակ. 2. 17):

Արիւն քո ի գլուխ քո. Արիւն քո ի գլուխ քո եղիցի (Գ. Թագ. Բ. 37):

Արիւն հեղել. Արիւն բազում հեղեր ի վերայ երկրի (Ա. Մնա. Իբ. 8):

Արիւն ուտել. Բայց արիւն մի՛ ուտիցեր (Բ. Օրէնք, ԺԲ, 16):

գԱրիւն առնել. Առ Մովսէս յարեմէ անտի (Ղեւտ. Ը. 15):

Առանձին են մատուցվում պատճառական բայերը, ինչպես՝ բարկացուցանել, բարձուցանել:

Որպես համաբարբառ-բառարանների նախնական և առաջին փորձերից մեկը, աշխատանքում հանդիպում են բառարանագրական որոշ սկզբունքների անհետևողական կիրառության դեպքեր, որոնք մասնակի դժվարություն են հարուցում համաբարբառից օգտվելիս:

Այսպես, համաբարբառում հաճախ քերականական երևույթները միատեսակ սկզբունքով չեն ներկայացված. դա մասնավորապես վերաբերում է բայական հարադրությունների մատուցման ձևին:

1. Երբեմն բայական հարադրությունները տրվում են բայական գերադաս բաղադրիչի տակ, ինչպես՝ Արժանի բառի տակ տրվում են Արժանի լինել, Արժանի առնել հարադրությունները:
2. Որոշ դեպքերում գլխաբառի կողքին բերվում են նաև դրանով կազմված հարադրությունները, ինչպես՝ Առաջ և Ընդ առաջ, Հեռի և Հեռի առնել՝ լինել, Աստուած և Տէր Աստուած և այլն<sup>3</sup>:

Հաճախ հեղինակը հարադրության զոյականական բաղադրիչը ներկայացնում է որպես գլխաբառ, սակայն երբեմն էլ դրա-

<sup>3</sup> Թոսունյան Գ., Գրաբարի բառարանագրությունը, Երևան, 2006, էջ 143–144:

նով կազմված որոշ հարադրություններ ներկայացնում է որպես ինքնուրույն գլխաբառեր, օրինակ՝ Աղաղակ գլխաբառից բացի իբրև առանձին գլխաբառեր են տրված Աղաղակ առնել, Աղաղակ բառնալ հարադրությունները:

Թեև համաբարբառում խոնարհման ձևերը բաշխված են ըստ լծորդությունների՝ Ե խոնարհում՝ ներգործածն, Ի խոնարհում՝ կրավորածն, այնուամենայնիվ հանդիպում են ոչ ճիշտ առանձնացումներ:

Այսպես, Պատիւ նորա անգոսնեցաւ (Ա. Մակ. Ա. 41) նախադասությունը բերվում է անգոսնել գլխաբառի տակ, որ ըստ լծորդության ենթադրում է ներգործածն խոնարհում, մինչդեռ անգոսնեցաւ բայածը պետք է վկայվեր անգոսնիլ գլխաբառի տակ, որ ենթադրում է կրավորածն խոնարհում, մինչդեռ անգոսնեցաւ բայածը պետք է վկայվեր անգոսնիլ գլխաբառի տակ, որ ենթադրում է կրավորածն խոնարհում:

Միասին է տրված Յիսուս Քրիստոսս բաղադրյալ գլխաբառը, սակայն այդ հանգամանքը խիստ դժվարացնում է համաբարբառից օգտվելու գործը, որովհետև Քրիստոսս բառի վկայությունները գտնելու համար պետք է կարդալ Յիսուս բառի բնագրային բոլոր վկայությունները և հակառակը՝ Յիսուս բառի վկայությունները գտնելու համար պետք է կարդալ Քրիստոսս բառի բոլոր վկայությունները:

Համաբարբառը էջակալված է եռասյուն բաժանումով, որը դժվարություն է հարուցում նախադասության սահմանը համեմատաբար ամբողջական մատուցելու հարցում. եթե նախադասության վերջին բառը հասնում է էջաբաժանման լուսանցքին, ապա բառն այդտեղ կրճատվում է, և շատ հաճախ նախադասության իմաստը մնում է անհասկանալի. հմմտ.

Դիցէ քահանայն յկրենէ զուա. (Դեւտ. Դ. 7) = զուարակին.

Ջարին հեղցէ առ յատակաւ սեղա. (Դեւտ. Է. 2) = սեղանոյն.

Առ ի խնդրել զվրժ արեան ծա. (Սաղ. 3Ը. 10) = ծառայից (քոց).

Արիւն դորա ի վերայ մեր և ի վերայ որդ. (Մատ. ԻԷ. 25) = որդւոյ (մերոց):

Այնուամենայնիվ, անկախ բառարանագրական սկզբունքների մասնակի մեղանշումներից, հայ բառարանագրության պատմության մեջ Թադևոս Աստվածատրյանի «Համաբարբառ Յին և Նոր կտակարանաց» աշխատանքն ունի գիտական ու գործնական մեծ նշանակություն:

Աշխատանքի անուրանալի արժանիքներից է այն, որ ըստ նրա տվյալների կարելի է կատարել՝

ա) համակողմանի քննություն փոխառյալ անունների բնագավառում՝ ցույց տալով փոխառության աղբյուրը և անելով ծագումնաբանական դասակարգումներ,

բ) իմաստային դաշտերի քննություն՝ բացահայտելով V դարում գործածական բառային կազմին հատուկ իմաստային թեմատիկ խմբերը,

գ) վիճակագրական քննություն՝ ցույց տալով բառերի գործառական հաճախականությունը Աստվածաշնչում,

դ) բառիմաստների պատմական քննություն՝ V դ. համաժամանակյա մակարդակը դիտելով տարժամանակյա քննության համեմատելի եզր և այլն:

Գրաբարի բնագավառի ցանկացած ուսումնասիրություն անհնար է կատարել առանց այս համաբարբառի տվյալների. լինի այդ քննությունը համաժամանակյա, թե տարժամանակյա հայեցակետերով, որովհետև V դարի գրաբարի բառային կազմն ու բառական իմաստները գրեթե ամբողջական ձևով արտացոլված են Աստվածաշունչ մատյանում, իսկ այս կարգի բառարանը մեծապես նպաստում է մասնագետներին բառերի բնագրային վկայություններն անսխալ ընտրելու և այդ իմաստները շարահյուսական միջավայրում ճշգրտելու հարցում, թեև, անկասկած, գրաբարյան բառիմաստների ստուգման վստահելի և անփոխարինելի աղբյուրներ են ՆՅԲ-ն և Առձեռն բառարանը:

Ահա թե ինչպես է բնութագրում հեղինակն ինքը իր աշխատանքի դիմաց ակնկալվող հոգեկան բավարարությունը. «Արդ՝ յաւարտ հասուցանելով զայս մեր դժուարաքիրտն վաստակ երկոց՝ խոստովանիմք հրապարակաւ, զի մեք արդէն մխիթարեալ ենք ի հոգի եւ ի մարմին եօթնամեայ անդուլ պարապմամբ յընթերցումն Սուրբ Գրոց եւ զերծ մնալով յաշխարհային տաղտկութեանց, իսկ երբ կիրառողք Մատենիս եւս շահեսցին, եղիցի մեզ այն յանսպառ ուրախութիւն եւ ի պսակ մերոյս ջերմ փափագանաց եւ գեղեցիկ նպատակի»:

Հայ բառարանագրութեան հետագա ընթացքը ցույց տվեց, որ Թադևոս Աստվածատրյանի կազմած հիմնարար աշխատությունը վճռական դեր խաղաց գրաբարալեզու հեղինակների երկերի համաբարբառները կազմելու հարցում:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<i>Աշոտ Մելքոնյան</i>	
500-ամյա հայկական տպագրության քառուղիներում (պատմական ակնարկ) .....	3
<i>Ազատ եղիազարյան</i>	
Գիրքը հայ մշակույթի համակարգում .....	13
<i>Ալբերտ Մուշեղյան</i>	
Մաշտոցյան հայոց տպագիր այբուբենի 530-ամյակը .....	21
<i>Նորայր Սարուխանյան</i>	
Մշակույթի նկատմամբ պետական քաղաքականության վճռորոշ դերը .....	37
<i>Սարգիս Մխիթարյան</i>	
Նոր Ջուղայի տպարանը .....	47
<i>Ալբերտ Խառատյան</i>	
Զմյուռնահայ մամուլի տպարանները .....	56
<i>Լենդրուշ Ալոյան</i>	
Հայ տպագրությունը և մամուլը Հնդկաստանում (սկզբնա- վորումից մինչև 1860-ական թթ.) .....	62
<i>Էմմա Կոստանդյան</i>	
Արևմտյան Հայաստանի առաջին տպարանը .....	71
<i>Էդուարդ Դանիելյան</i>	
Շուշիի տեղը հայ տպագրական գործի պատմության մեջ ...	86
<i>Գևորգ Ստեփանյան</i>	
Շամախի և Բաքու քաղաքների հայկական տպագրության պատմությունից .....	93
<i>Վլադիմիր Մաղայան</i>	
Հայկական տպագրության սկզբնավորումն ու զարգացումը Վրաստանի հայկական և հայաբնակ գավառներում (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ) .....	106

***Համո Սուքիասյան***

Հայպետհրատի հիմնադրումը և գործունեության առաջին տարիները ..... 121

***Ալվարդ Խաչատրյան***

Հակոբ Մեղապարտի «Տաղարանի» լեզվաոճական առանձնահատկությունները ..... 129

***Լալիկ Խաչատրյան***

Թաղևոս վարդապետ Աստվածատրյանի «Համաբարբառ Հին և Նոր կտակարանաց» աշխատությունը ..... 136

# CONTENTS

<i>Ashot. Melkonyan</i>	
At the Crossroads of the Five Centuries-old Armenian Printing (an historical essey) .....	3
<i>Azat Eghiazaryan</i>	
Book in the System of Armenian Culture .....	13
<i>Albert Musheghyan</i>	
530 Anniversary of the Mashtotsian Armenian Printed Alphabet .....	21
<i>Norayr Sarukhanyan</i>	
The Crucial Role of the State Policy in Relation to Culture .....	37
<i>Sargis Mkhitaryan</i>	
The Printing House of Nor (New) Jugha .....	47
<i>Albert Kharatyan</i>	
The Armenian Press' Typographies of Smyrna .....	56
<i>Lendrush Aloyan</i>	
Armenian Printing and Press in India (from formation until the 1860s) .....	62
<i>Emma Kostandyan</i>	
The First Printing House in Western Armenia .....	71
<i>Eduard Danielyan</i>	
The Place of Shushi in the History of the Armenian Printing ...	86
<i>Gevorg Stepanyan</i>	
From the History of the Armenian Printing of the Cities of Shamakhi and Baku .....	93
<i>Vladimir Magalyan</i>	
Formation and Development of the Armenian Printing in Armenian and Armenian-Populated Gavars of Georgia (the end of the XIX century – the beginning of XX century) .....	106

<b><i>Amo Sukiasyan</i></b>	
Founding and First Years of Functioning of the Arm-State Publishing House .....	121
<b><i>Alvard Khachatryan</i></b>	
Linguistic and Stylistic Peculiarities of Hagop Meghapart's "Tagaran" ("Songbook") .....	129
<b><i>Lalik Khachatryan</i></b>	
The Work "Concordance of Old and New Testaments" of Tadeos Vardapet Astvatsatryan .....	136

# СОДЕРЖАНИЕ

<i>Ашот Мелконян</i>	
На перекрестках пятивекового армянского книгопечатания (исторический очерк) .....	3
<i>Азат Егиазарян</i>	
Книга в системе армянской культуры .....	13
<i>Альберт Мушегян</i>	
530-летие маштоцевского армянского печатного алфавита ..	21
<i>Норайр Саруханиян</i>	
Решающая роль государственной политики в отношении культуры .....	37
<i>Саргис Мхитарян</i>	
Типография Нор (Новой) Джуги .....	47
<i>Альберт Харатян</i>	
Типографии армянской печати Смирны .....	56
<i>Лендруш Алоян</i>	
Армянская печать и пресса в Индии (от формирования до 1860-х гг.) .....	62
<i>Эмма Костандян</i>	
Первая типография в Западной Армении .....	71
<i>Эдуард Даниелян</i>	
Место Шуши в истории армянского типографского дела .....	86
<i>Геворг Степанян</i>	
Из истории армянского типографского дела городов Ша- махи и Баку .....	93
<i>Владимир Магальян</i>	
Формирование и развитие армянского типографского дела в армянских и армянонаселенных уездах Грузии (конец XIX в. – начало XX в.) .....	106

*Амо Сукиасян*

Основание и первые годы функционирования  
Армгосиздата ..... 121

*Алвард Хачатрян*

Лингво-стилистические особенности “Тагарана” (“Песен-  
ник”) Акопа Мегаларта ..... 129

*Лалик Хачатрян*

“Конкорданс Ветхого и Нового Завета” – труд Тадеоса  
Вардапета Аствацатряна ..... 136



[1500pp]

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0613664

A 8  
A 105545